

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՈՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

**ԱՆՏԻՈՔԻ
ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌԱԽՄՔԻ
ԱՐԱԲԱԿԱՆ
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Նվիրում եմ սիրելի հորաքրոջս՝
Մելադա Աղաբեկյանի
պայծառ հիշատակին

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

СОНА МИКАЕЛЯН

**АРАБСКИЕ ЗАИМСТВОВАНИЯ
АНТИОХИЙСКОЙ АРМЯНСКОЙ
ДИАЛЕКТНОЙ ГРУППЫ**

THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE RA
H. ACHARYAN INSTITUTE OF LANGUAGE

SONA MIKAYELYAN

**ARABIC BORROWINGS IN THE GROUP OF
ARMENIAN DIALECTS IN ANTIOCH**

ЕРЕВАН
АСОГИК
2018

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՈՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՆՏԻՈՔԻ ՀԱՅԵՐԵՆ
ԲԱՐԲԱՌԱԽՄԲԻ
ԱՐԱԲԱԿԱՆ
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
Ասողիկ
2018

ՀՏԴ 81'28
ԳՄԴ 81.2-67
Մ 780

Գիրքը հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհուրդը

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ Բ. Գ. Պ., պրոֆեսոր Վ.Լ. Կատվայան
Գրախոսներ՝ Բ. Գ. Պ., պրոֆեսոր Վ.Գ. Համբարձումյան
Բ. Գ. Թ., դոցենտ Ս. Բ. Կարաբեկյան

Միքայելյան Սոնա Արայի

Մ 780 Անտիոքի հայերեն բարբառախմբի արաբական փոխառու-
թյունները/Ս.Ա.Միքայելյան. - Եր.: Աստղիկ, 2018. - 196 էջ:

Գիրքը հայ տեսական բարբառագիտության մեջ մինչև այսօր գրեթե չուսումնասիրված մի իրողության՝ օտար լեզուների, մասնավորապես՝ արաբերենի ազդեցության դրսևորումների մասին է հայերենի բարբառների արևմտյան խմբակցության Անտիոքի կամ ծայրհարավարևմտյան բարբառախմբում: Ուսումնասիրությունը կատարված է զուգադրական-տիպաբանական մեթոդի, ինչպես նաև հանրալեզվաբանության սկզբունքների կիրառմամբ և կարող է օգտակար լինել հայերենագիտությամբ և հայագիտությամբ զբաղվողների, մասնագիտական ֆակուլտետների ուսանողության և առհասարակ հայ-արաբական պատմամշակութային կապերով հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 81'28
ԳՄԴ 81.2-67

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ..... 7

ԳԼՈՒԽ 1

ԱՐԱԲԵՐԵՆԻ ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄԸ ԱՆՏԻՈՔԻ ԲԱՐԲԱՌԱՄԲՈՒՄ

Ա. Բաղաձայնների արտահայտման առանձնահատկությունները..... 32

- 1. Հպական բաղաձայններ..... 36
- 2. Շփական բաղաձայններ 41
- 3. Չայնորդներ..... 45

Արաբերենի հնչյունական համակարգին բնորոշ բաղաձայններ.

- 1. Շփական բաղաձայններ 49
- 2. Ուժգին արտաբերման (էմֆատիկ) բաղաձայններ 52
- 3. «Բարդ» արտաբերման բաղաձայններ 55
- 4. Տևական արտաբերման բաղաձայններ..... 60

Բ. Դիրքային և փոխազդեցական հնչյունափոխություն 62

Գ. Չայնավորների դրսևորման յուրահատկությունները..... 63

- 1. Արաբերենի ձայնավորների պահպանումը 69
- 2. Չայնավորների հնչյունափոխությունը 71
- 3. Չայնավորների ներդաշնակության օրենքի գործառումը 77
- 4. Շեշտի ազդեցությամբ պայմանավորված հնչյունափոխություն. պարզ ձայնավորի երկբարբառացում 80

ԳԼՈՒԽ 2

ԱՆՏԻՈՔԻ ԲԱՐԲԱՌԱՄԲԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱԻՄԱՍՏԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

- 1. Փոխառությունների խոսքիմասային դրսևորման առանձնահատկությունները 84
- 2. Փոխառությունների բառակազմական արտահայտման ձևերը..... 96

3. Փոխառությունների արտահայտած բառիմաստային դրսևորումները.....	112
4. Փոխառությունները ըստ գործառական նշանակության	117
5. Փոխառությունները ըստ իմաստային-թեմատիկ խմբերի.....	120
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	150
PEZIOME	155
SUMMARY	158
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	160
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	162
ՀԱՎԵԼՎԱԾ	168

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայերենի բարբառային միավորները նկարագրելիս հեղինակներն ուշադրություն են դարձրել նաև դրանցում առկա օտար ազդեցություններին: Սակայն նրանց հետաքրքրությունը հիմնականում սահմանափակվել է իրենց աշխատությունների բառացանկերում օտար փոխառություններ ևս ընդգրկելով: Որոշ հետազոտություններում ներկայացվել են բարբառային տվյալ համակարգի տարբեր մակարդակներում առկա օտար ազդեցություններ: Սակայն այդ ամենն առավելապես արվել է ուսումնասիրվող բարբառի կամ խոսվածքի գրանցման պահին ստացված պատկերն ամբողջացնելու նպատակով:

Հայերենի բարբառներում օտար լեզուների զանազան ներթափանցումներին նվիրված համակողմանի ուսումնասիրություններ չեն կատարվել հավանաբար մեկ հիմնական պատճառով. 19-րդ դարի վերջերից սկզբնավորված հայ բարբառագիտության առաջնահերթ նպատակը հայերենի բազմաթիվ տարածքային տարբերակների հայտնաբերումը և գիտական նկարագրությամբ դրանք կորստից փրկելն էր:

Հայերենի տարածքային տարբերակներում այլ լեզուներից կատարված փոխառությունների բազմակողմանի ուսումնասիրությունները, սակայն, կարևոր են մի քանի առումով: Նախ՝ օտար ազդեցությունների՝ տիպաբանական, պատմական, հանրալեզվաբանական և այլ մեթոդներով հետազոտությունները լրացնում կամ ճշգրտում են փոխատու և փոխառու լեզուների (բարբառների) համապատասխան բնագավառների վերաբերյալ ընդունված գիտական մոտեցում-

ները: Այսինքն՝ զուգադրական, պատմահամեմատական այդօրինակ ուսումնասիրությունները կօգնեն բացահայտելու, օրինակ, հայերենի տարածքային տվյալ տարբերակի պատմական զարգացման փուլերի ժամանակագրական հաջորդականությունը, օտար ազդեցություններով պայմանավորված փոփոխությունների ընթացքն ու նոր առաջացած յուրահատկությունները համակարգի տարբեր մակարդակներում: Միևնույն ժամանակ, ինչպես հայտնի է, երկու տարբեր ազգերի լեզվական իրողությունների զուգադրում-համեմատումից ստացվող արդյունքները հանրալեզվաբանական մեթոդով դիտարկելու դեպքում կարող են բացահայտել այդ ժողովուրդների պատմական կապերի, շփումների, փոխազդեցությունների, նրանց մշակութային, հասարակական կյանքի ձևերի, կենցաղի և այլ ոլորտների անհայտ կամ քիչ հայտնի փաստեր: Նշված տիպի հետազոտությունները կարևորվում են ոչ միայն լեզվաբանության, այլև ընդհանուր հայագիտության համար¹:

Մույն գրքում քննության ենք առել արաբերենի՝ լեզվի տարբեր (հնչյունական, բառային) մակարդակներին բնորոշ ներթափանցումները հայերենի բարբառների արևմտյան խմբակցության Անտիոքի կամ ծայրհարավարևմտյան բարբառախմբում²: Ըստ բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման՝ նշված բարբառախմբի մեջ ներառված են Քեսաբ-Սվեդիայի բարբառը՝ Քեսաբի, Քաբուսիեի, Յողուն-Օլուկի, Հաջի-Հաբիբլիի, Արամոյի խոսվածքներով, և Բեյլանի

¹ Մուրադյան Հ., Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 1, Ե., 1982, էջ 24:

² Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 132:

բարբառը³: Այս բարբառային միավորները պատմական Հայաստանից դուրս՝ Միրիայում (պատմական Ատրիք), հայերենի՝ դարեր ի վեր գոյատևող տարածքային տարբերակներն են:

Հետազոտողները հայերենի տարածքային միավորներն ուսումնասիրել են տարբեր ժամանակներում, և դրանք սկզբում դասակարգվել են մեկական՝ աշխարհագրական, ձևաբանական, այնուհետև՝ հնչյունաբանական հատկանիշների ընդհանրությամբ⁴: 20-րդ դ. 70-ական թթ. մեծանուն լեզվաբան Գ. Ջահուկյանի կողմից առաջարկվեց, իսկ այսօր արդեն լայն կիրառություն է ստացել հայերենի տարածքային միավորների բազմահատկանիշ-վիճակագրական (բարբառային հարյուր հատկանիշի ընտրությամբ) մեթոդով դասակարգումը⁵: Տարածքային այդ տարբերակների բնորոշման նոր չափանիշների կիրառման շնորհիվ որոշ փոփոխություններ են առաջացել ոչ միայն բարբառային միավորների՝ նախորդ սկզբունքների հիման վրա կատարված խմբավորման ու դասակարգման, այլև *բարբառախումբ, բարբառ, ենթաբարբառ, խոսվածք* և այլ հասկացությունների տարրոշման հարցում: Այսպես, Ղարաբաղի բարբառի շատ միավորներ, որոնք նախկինում առանձին բարբառներ էին կոչվում, բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգմամբ Ղարաբաղի բարբառի խոսվածքներ են համարվում⁶: Հ.Աճառյանը «Կիլիկիայի բարբառ» է կոչում այն վայրերի (Մարաշի մի մասի,

³ Նույն տեղում:

⁴ տե՛ս Գրիգորյան Ա., Հայ բարբառագիտության դասընթաց, Ե., 1957, էջ 66-77:

⁵ Ջահուկյան Գ., 1972, էջ 36:

⁶ Ջահուկյան Գ., 1972, էջ 136:

Զեյթունի, Հաճընի) հայերենը, որը ժամանակին Կիլիկիայի կազմում գտնվող խոշոր քաղաքների ու գյուղերի խոսակցականն էր: Հեղինակը դրանց հավելում է նաև Անտիոքի և Սվեդիայի (Մուսա լեռան շրջակա գյուղերի) բարբառային տարբերակները⁷: Մինչդեռ Անտիոքի գյուղերի և Սվեդիայի՝ Մուսա լեռան շրջանի հայերենը բազմահատկանիշ դասակարգման համաձայն պատկանում է ոչ թե Կիլիկիայի, այլ Քեսաբ-Սվեդիայի բարբառին⁸:

Անտիոքի կամ ծայրհարավարևմտյան բարբառախմբի միավորները պատմական Ասորիքի (Սիրիայի) Անտիոք նահանգում (այսօր՝ Թուրքիային պատկանող) և Միրիայի Քեսաբ քաղաքավանում ու շրջակա բնակավայրերում հայերենի՝ 20-րդ դարում արձանագրված, այնուհետև գիտականորեն նկարագրված տարածքային տարբերակներն են: Ավելի վաղ շրջանի դրանց գիտական նկարագրություն, հետևաբար նաև դրանցում օտար փոխառությունների վերաբերյալ տեղեկություններ գրեթե չեն հանդիպում:

Անտիոքի հայերեն տարածքային տարբերակներում օտար լեզուների ազդեցություններին նվիրված առանձին հետազոտություններ ևս, որքանով կարողացել ենք պարզել, չեն կատարվել: Մինչդեռ բարբառախոս հայկական այս համայնքը հնագույններից մեկն է, որը դարերի ընթացքում սերտ շփումներ է ունեցել տարբեր լեզուներ (ասորերեն, արաբերեն, թուրքերեն, ուշ շրջանում նաև՝ ֆրանսերեն, անգլերեն և այլն) կրող ժողովուրդների հետ: Տարածաշրջանում վերջինների՝ պատմականորեն ձևավորված գերակա դիրքով

⁷Աճառյան Հ., Քննություն Կիլիկիայի բարբառի, Ե., 2003, էջ 9:

⁸Զահուկյան Գ., 1972, էջ 132:

և այդ շփումների տևականությամբ պայմանավորված՝ տեղի հայերեն բարբառներ են թափանցել լեզվական օտար իրողություններ: Ընդորում, վերոհիշյալ լեզուները տարբեր լեզվաընտանիքներին (սեմական, թյուրքական, հնդեվրոպական) են պատկանում, ուստի դրանց ու հայերենի լեզվական շփումների հետևանքով առաջացած երևույթների հետազոտությունները կարևոր են ոչ միայն լեզվաբանության, այլ նաև հարակից տարբեր գիտակարգերի համար:

*Հայ-սիրիական պատմական
փոխհարաբերությունների
համառոտ ակնարկ*

Հայագետներին միշտ հետաքրքրել է, թե օտար հողերում ե՞րբ և ինչպե՞ս են առաջացել հայկական գաղութներն՝ իրենց հայերեն խոսվածքներով: Անտիոքի կամ ծայրհարավարևմտյան բարբառախմբի միավորները թեև իրենց հիմնական հատկանիշներով մեզ հայտնի են դեռևս միջնադարյան մատենագրությունից⁹, բայց նշված տարածքում հայերի ներկայության մասին մեզ հասած պատմագիտական տեղեկություններն ավելի հին շրջանին են վերաբերում:

Պատմական Հայաստանը վաղ ժամանակներից տընտեսական, քաղաքական, մշակութային սերտ կապերի մեջ է եղել իր հարևանների և, իհարկե, Միջերկրական ծովի առափնյա երկրների հետ, որոնք դեպի արևմուտք ձգվող ծովային ճանապարհների դարպասներ էին: Հայաստանի ու

⁹Խաչերյան Լ., Գրչության արվեստի լեզվական, քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Ե., 1963, էջ 63:

նրա արևմտյան հարևաններից պատմական Ասորիքի՝ Մի-րիայի փոխհարաբերություններն աչքի են ընկնում իրենց երկարակեցությամբ և երկու երկրների՝ բոլոր բնագավառներում խաղացած առանձնահատուկ դերով¹⁰: Մ.թ.ա. 1-ին դարում հայ-սիրիական հարաբերությունները միջպետական էին: Իսկ մ.թ.ա. 80-60-ական թվականներին Միրիան կազմել է Տիգրան Մեծի հայոց կայսրության մի մասը¹¹:

Հիշատակվում է, որ մ.թ. 1-ին դարի կեսերին «...Խառանեն ոչ շատ հեռու, դեպի հյուսիս, բլրաշարքերն արդեն հայաբնակ գյուղերով և ավաններով լեցուն էին»¹²: «Հավանաբար հենց այդ ժամանակ էլ սկզբնավորվել են Մելնկիայի (այժմ Սվեդիա) և Կասիոսի (այժմ Քեսաբ)՝ մինչև օրս գոյատևող հայկական բնակավայրերը»¹³: Իսկ Գ. Հանանյանը նշում է, որ Տիգրան Մեծից էլ շատ ավելի վաղ է հավաստվում հայերի գոյությունն այս ժայռածերպերին, և, հնարավոր է, որ նրանք այդ հեռավոր վայրերում հիմնավորված են եղել ի սկզբանե¹⁴:

Մ.թ. 7-8-րդ դարերում Հայաստանը հայտնվեց արաբական պետության՝ Օմայան խալիֆայության կազմում, որի կենտրոնը Միրիան էր՝ Դամասկոս մայրաքաղաքով: 885-1045թթ., երբ Հայաստանը վերագտավ իր անկախությունը

¹⁰Թովուզյան Հ., Միրիայի և Լիբանանի գաղթօջախների պատմություն, Ե., 1986, էջ 8:

¹¹Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. IV, Ե., 2007, էջ 545:

¹²Ալպոյաճեան Ա., Պատմություն հայ գաղթականութեան, Գահիրե, 1941, էջ 110:

¹³Թովուզյան Հ., նշվ. աշխ., էջ 12:

¹⁴Հանանյան Գ., Սվեդիայի բարբառը, Ե., 1995, էջ 7:

Բագրատունյաց հզորության ներքո, վերականգնեց իր և իսլաֆայության միջպետական հարաբերությունները¹⁵:

Միջին դարերում՝ խաչակրաց արշավանքների ժամանակ (11-13-րդ դդ.), Անտիոքի հայությունը զգալի թիվ է կազմել, որ կարողացել է պարենով, զենքով և նույնիսկ ռազմիկներով օգնել խաչակիրներին¹⁶: Հետագայում՝ Հայաստանի անկախության կորստից և արաբական իսլաֆայության անկումից հետո, Միրիայում ձևավորվում են հայ համայնքներ՝ իրենց եկեղեցական, կրթական ու մշակութային կառույցներով: Հայերն այդ շրջանում արաբների հետ հարաբերակցվում են որպես միննույն երկրի բնակիչներ:

16-րդ դարում Օսմանյան կայսրությունը գրավեց Միրիան, իսկ 17-րդ դարում՝ Արևմտյան Հայաստանը¹⁷: Միրիահայերը տեղացիների հետ միասին մոտ չորս դար Օսմանյան կայսրության տիրապետության տակ մնացին: Այդ շրջանում (օսմանյան) հայկական բնակավայրերում որպես իշխող պետության լեզու սկսեց լայն տարածում ստանալ թուրքերենը:

Անտիոքի և, ընդհանրապես, արաբական երկրների հայախոս գաղութները համալրվեցին հատկապես Մեծ եղեռնի ժամանակ թուրք գազաններից մազապուրծ հայ փախրտականներով: Միրիայի հայ գաղութը, կարելի է ասել, դարերի ընթացքում փոփոխությունների է ենթարկվել նաև թվաքանակով՝ կախված մայր հայրենիքի քաղաքական ու տրևտեսական իրավիճակից: «Ներկայիս սիրիահայ համայնքը

¹⁵ Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 545:

¹⁶ տե՛ս Թովուզյան Հ., նշվ. աշխ., էջ 25-28:

¹⁷ Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 545:

ձևավորվել է 1915թ. Հայոց ցեղասպանությունից հետո»¹⁸: Այն անընդհատ համալրվել է Հայաստանից ու Կիլիկիայից ներգաղթյալներով, որոնք տարբեր վայրերի բարբառակիրներ էին: Բայց, պարզվում է, որ Անտիոքի բարբառախմբում ավելի տեսանելի են Կիլիկիայի բարբառի հետքերը (Հ.Աճառյանն անգամ Անտիոքի և Սվեդիայի՝ Մուսա լեռան շրջակա գյուղերի տարածքային միավորներն իր ուսումնասիրությունում ներառել է Կիլիկիայի բարբառի մեջ)¹⁹:

Դարեր ի վեր արաբական բնակավայրերով շրջապատված հայկական գյուղերի բնակիչների խոսքում, բնականաբար, ժամանակի ընթացքում տեղի են ունեցել նաև արաբերենից անմիջական անցումներ և՛ նախասումնյան, և՛ օսմանյան տիրապետության ժամանակ: Հ. Չոլաքյանը նկատում է, որ Քեսաբի խոսակցական լեզվի օտար փոխառություններում մեծ մաս են կազմում արաբական ծագում ունեցողները: Նրանց մի մասն անմիջական, իսկ մյուս մասը՝ հիմնականում թուրքերենից միջնորդավորված ձևեր են: Հեղինակը նաև նշում է. «...արաբերեն ծագումով բարբառային բառերու քննութիւնը ցոյց կու տայ, որ քեսապցիք դեռ աւելի վաղ ժամանակներուն, թուրք ազգաբնակչութեամբ մը օղակուելէ առաջ, շատ աւելի սերտ յարաբերութեան մեջ եղած են արաբախօս շրջաններու հետ: Շատ բառեր՝ իրենց հնչիւնական եւ իմաստային իւրայատկութիւններով հնագոյն փոխառութիւններ են»²⁰:

¹⁸ Փաշայան Ա., Հարությունյան Լ., Միրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Ե., 2011, էջ 64:

¹⁹ Աճառեան Հ., Հայ բարբառագիտութիւն, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա-Նոր-Նախիջեւան, 1911, էջ 199:

²⁰ Չոլաքեան Յ., Քեսապի բարբառը, Ե., 2009, էջ 182:

1918թ. հոկտեմբերին Անտանտի և Թուրքիայի միջև կնքված զինադադարով ավարտվեցին առաջին համաշխարհային պատերազմի ռազմական գործողությունները: Դրանով ավարտվեց նաև արաբական երկրներում Օսմանյան տիրապետության՝ չորս հարյուր տարի տևած դարաշրջանը²¹: Սիրիայի և Թուրքիայի սահմանների նոր տարանջատմամբ Անտիոքի հայերեն բարբառախոսների բնակավայրերը հայտնրվեցին սահմանի տարբեր կողմերում՝ Թուրքիայում՝ Հաթայ նահանգի Սամանդաղ գավառում (Յոդուն-Օլուկ, Խտըրբեկ, ՎագրՖ, Վերին և Ներքին Ազգիրներ, Ամաժ)²² և Սիրիայում՝ Քեսաբ ավանում և նրա շրջակա հայաբնակ գյուղերում:

Արաբական երկրների հետագա սոցիալադարձական վայրիվերումների հետևանքով հատկապես Սիրիային բավական ուշ հաջողվեց կայունություն ձեռք բերել: Երկրի այդ անկայուն վիճակը բացասաբար անդրադարձավ ողջ բնակչության, այդ թվում՝ հայերի վրա:

Միայն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, իսկ առավել ստույգ՝ Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության գալով (1971թ.), Սիրիայում խաղաղություն տիրեց: Արդեն 1967թ. հայ համայնքը պատմական ձեռքբերում ունեցավ: Վերջապես թույլատրվեց հայկական (սակայն պետական համարվող) դպրոցներում չորս ժամ ազգային լեզու՝ հայերեն և երկու ժամ հայերենով կրոն դասավանդել²³: Ահա այս եղանակով գրական արևմտահայերենը սկսեց դասավանդվել

²¹ Չովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 405:

²² Հանանյան Գ., նշվ. աշխ., էջ 5:

²³ Փաշայան Ա., Հարությունյան Լ., նշվ. աշխ., էջ 11-12:

որպես համազգային լեզու, իսկ տանը՝ հայկական միջավայրում, խոսում էին բարբառով:

Վերջին տարիներին Միրիայում գրեթե անդադար ընթացող պատերազմական գործողությունները կրկին հիմնովին փոխեցին ոչ միայն այդ երկրի, այլև տեղի հայկական գաղթօջախների ողջ կյանքը: Միրիական բնակավայրերի հետ մեկտեղ հիմնահատակ ավերվեցին նաև հայկական բնակավայրեր, հազարավոր հայեր դարձան տարագիր: Այսօր էլ ժամանակ առ ժամանակ վտանգվում է հայերի կյանքը, ոչնչացվում են պատմամշակութային արժեք ներկայացնող նաև հայկական կոթողներ:

2014թ. մարտին Քեսաբի շրջանն ամբողջապես հայաթափվեց: Երկու ամիս անց՝ հունիսին, սիրիական բանակը, Ժողովրդական պաշտպանության ջոկատների հետ համատեղ, կարողացավ ազատագրել այն: Քեսաբցիները, վերադառնալով իրենց բնօրրանը, այն ավելի ավերված և կորսված գտան, քան կարող էին պատկերացնել²⁴:

Ելնելով նաև վերոհիշյալ հանգամանքից՝ օրավուր ավելի առաջնահերթ է դառնում մայր հայրենիքից դուրս՝ հեռավոր, օտար ավերում ձևավորված ու դարեր շարունակ գոյատևած, թեև՝ այսօր նաև վտանգված հայկական այս բնակավայրերի վերաբերյալ տարբեր գիտակարգերին առնչվող ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտությունը՝ գոնե այդ կերպ պահպանելու հայկական պատմամշակութային ժառանգության այդ հնագույն մասնիկները:

²⁴ Չոլաբեան Յ., Քեսապի երեք օրերը (21-23 մարտ 2014), Ե., 2014, էջ 127:

Հայ-արաբական լեզվական առնչություններ

Այսօր դժվար է ճշգրիտ նշել, թե մոտավորապես երբ են սկսել ուրվագծվել Անտիոքի հայերեն բարբառախմբի հիմնական հատկանիշները: Ա.Փաշայանը, օրինակ, գտնում է, որ Քեսաբի խոսվածքի՝ բարբառային էական հատկանիշ համարվող բայական խոնարհման *հա* մասնիկը գրավոր աղբյուրներում առաջին անգամ հանդիպում է 12-րդ դարի հեղինակ Արիստակեսի աշխատանքում՝ *հա սասացի, հա երթամ, հա գամ* և այլն²⁵: Առավել բարդ է որոշել, իհարկե, թե երբ է սկսվել արաբերենի ազդեցությունը վերոհիշյալ բարբառի վրա: Թեև պատմագիտական աղբյուրների վկայամբ Սիրիան արաբների կողմից ամբողջապես նվաճվել է 7-րդ դարի սկզբներին²⁶, սակայն, կարծում ենք, բավարար փաստեր չկան ճշգրիտ արձանագրելու, թե տեղի հայախոս բնակչությունը, որ դարեր շարունակ առևտրատնտեսական կապերի մեջ է եղել իր հարևանների հետ, լեզվական ինչպիսի՞ շփումներ է ունեցել արաբների հետ:

Ն.Մկրտչյանը հայ-արաբական լեզվական առնչություններին նվիրված իր անդրադարձերում գտնում է, որ հայագիտության մեջ ընդունված և համընդհանուր տարածում ստացած, հատկապես հայտնի լեզվաբան Հ.Հյուբշմանից եկող այն կարծիքը, թե «...արաբների և հայերի առաջին շփումները տեղի են ունեցել մ.թ. 7-րդ դարի 40-ականներին և, հետևաբար, արաբական փոխառություններ հայերենում չէին կարող

²⁵ Փաշայան Ա., Քեսաբի բարբառը (ձեռագիր), էջ 14:

²⁶ Թովուզյան Հ., նշվ. աշխ., էջ 14:

հայտնվել 7-րդ դարից շուտ»²⁷, փաստերով հերքվում է: Հեղինակի կարծիքով՝ 5-7-րդ դդ. հայ մատենագրության մեջ արդեն հանդիպում են արաբական մի շարք փոխառություններ²⁸: Հարցի ստույգ պատասխանը, սակայն, հնարավոր կլինի գտնել նոր փաստերի հիման վրա հետազայում կատարվելիք բազմաբնույթ ու խոր հետազոտություններից հետո: Մեր սույն գրքում թեև նպատակ չի դրվում կատարելու արաբական փոխառությունների պատմահամեմատական քննություն, բայց համեմատվող լեզուների համաժամանակյա վերլուծության ընթացքում որոշ դեպքերում անհրաժեշտություն է առաջանում հարցի պարզաբանման համար դիմելու նաև այդ լեզուների վերաբերյալ առկա պատմական փաստերին:

Հատկանշական է, որ Անտիոքի հայերեն բարբառները կրել են ոչ միայն օտար լեզուների, այլև հենց հայերենի այլ տարածքային միավորների ազդեցությունները: Հ. Չոլաքյանը նշում է, որ 10-12-րդ դարերի Անտիոքի հայ գաղթականությունը եկել է Հայաստանի տարբեր շրջաններից, նաև Հյուսիսային Ասորիքից՝ հայերենի տարբեր որակներ բերելով իր հետ: Իսկ օտար բառերի շերտերում կարևոր ու մեծ թիվ են կազմում արաբերենից ու թուրքերենից արված փոխառությունները, որոնցում արաբերեն բառերը ավելի հին շերտն են ներկայացնում: Դա երևում է հատկապես նույն բառի՝ թուրքերենից և արաբերենից եկած տարբերակների համեմատությունից²⁹: Հ. Աճառյանն էլ արձանագրում է, որ «...արաբերեն մայրենի լեզու դարձած է Սիւրիոյ, Պաղեստինի, Միջագետքի

²⁷ Հյուրժման Հ., Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 2004, էջ 298:

²⁸ Мкртчян Н, Семитские языки и армянский, Е., 2005, с. 80.

²⁹ Չոլաքեան Յ., 2009, էջ 182:

և Ասորեստանի հայոց մէջ. Հալէպի, Դամասկոսի, Պէրյուֆի, Մէրտինի, Մուսուլի, Քէրքիւքի և Հայաստանի մէջ ալ Սղերդի հայերը արաբախոս են»³⁰: Ինչպես հնարավոր է նկատել, թվարկված վայրերը զուտ կամ հիմնական կազմով հայաբնակ չեն եղել: Մինչդեռ Անտիոքի և Սիրիայի որոշ բնակավայրերի հիմնական բնակչությունը հայեր էին:

Այսպիսով՝ երկար դարեր ապրելով նույն տարածքում՝ Սիրիայի արաբ բնակչությունը և հայերը ունեցել են նաև լեզվական առնչություններ: Բնականաբար, առավել մեծ է արաբերենի՝ որպես իշխող երկրի լեզվի ազդեցությունը տեղի հայերեն խոսվածքների վրա, որին ստորև կանդրադառնանք:

*Անտիոքի բարբառախմբի տարածքային
տարբերակների ընդհանուր բնութագիրը*

Հայ բարբառագիտության մէջ, ինչպես վերը նշեցինք, բարբառային միավորների դասակարգման տարբեր մոտեցումներ են կիրառվել: Այսպես՝ ձևաբանական միահատկանիշ (ըստ սահմանական եղանակի ներկա ժամանակի կազմության) դասակարգմամբ Հ.Աճառյանն Անտիոքի հայերեն բարբառային միավորները սկզբում համարել է *Կը* ճյուղի անդամներ՝ իբրև Կիլիկիայի բարբառի ենթաբարբառ՝ Անտիոքի բարբառ անվամբ³¹:

³⁰ Աճառեան Հ., 1911, էջ 33:

³¹ Աճառյան Հ., 2003, էջ 9:

Ա.Ղարիբյանը Քեսաբի բարբառը, ըստ սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ձևերի կազմության, համարել է բարբառների նոր՝ *Հա* ճյուղի գլխավոր բարբառը³²:

Էդ. Աղայանը, ձևաբանական երկճյուղ բաժանման համաձայն, այն անվանել է *Կր* ճյուղի բարբառների *Հա* ենթաճյուղի բարբառ:³³

Նախորդների համեմատությամբ կիրառելով սկզբունքորեն նոր մեթոդ՝ ըստ բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման՝ Գ. Ջահուկյանն առանձնացրեց Անտիոքի բարբառախումբը, որի մեջ ընդգրկվեցին հայերենի խնդրո առարկա տարածքային տարբերակները:

Քեսաբ-Սվեդիայի բարբառով հաղորդակցվող հանրությունն իր խոսակցան լեզուն անվանում է *քիսթինրգ/քիստըն^{ու}օգ*³⁴ (Քեսաբի համար մասնավորապես՝ *քեսրըն^{ու}օգ*՝ «Քեսաբի լեզու»): Այն ունի «քրիստոնյայի լեզու» կամ «հայերեն» նշանակությունը և ծագում է *քիսթինի* բառից, որը բարբառում կիրառվում է «քրիստոնյա» կամ «խաչապաշտ» իմաստով:

Քեսաբի բարբառը Քեսաբ³⁵ ավանի և նրա շրջակա 11 հայաբնակ գյուղերի ու մի քանի նորաստեղծ գյուղակների

³² Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 443-457:

³³ Աղայան Էդ., Մեղրու բարբառը, Ե., 1954, էջ 404:

³⁴ Անդրեասյան Տ., 1967, էջ 15, Չոլաքեան Յ., 2009, էջ 9:

³⁵ «Քեսաբ» անվան ծագման վերաբերյալ կան տարբեր տեսակետներ. Ա.Աբելյանը, մասնավորապես, բառը ենթարկելով ժողովրդական ստուգաբանության, նշում է, որ այն առաջացել է արաբերեն *kassāb* բառաձևից, որը նշանակում է «շահող». այս անվանումն, ըստ նրա, բնակավայրին տրվել է թուրք և արաբ գյուղացիների կողմից (տե՛ս Աբելեան Ա., Քեսապ և իր գիւղերը, Պ., 2002, էջ 29): Տ.Անդրեասյանի կողմից առաջարկվող ստուգաբանության համաձայն՝ բառն առաջացել է իտալերեն *քասա-*

խոսակցական լեզուն է: Նրա գլխավոր քերականական հատկանիշը բայերի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերում *haw* կամ *hay* խոնարհիչի գործածությունն է³⁶ (այն, ըստ Ա. Ղարիբյանի, հայերենի *ahaw* բառն է, որի նշանակությունը համարժեք է *hay* կամ *qay* բառերին³⁷): Կարևոր մյուս հատկանիշը գրաբարի հոլովական ձևերի, ինչպես նաև մի շարք բառերի անփոփոխ պահպանումն է³⁸: Հ.Չոլաքյանը փաստում է, որ «...Քեսապի բարբառը չափազանց հարուստ է զուգաձեռություններով ու բազմաձեռիւններով, ինչպես պատմական հնչյունափոխութեան բազմաթիւ վիճակներուն, այդպէս ալ մանաւանդ հոլովական ու խոնարհումի իր համակարգերուն մեջ, նույնպէս եւ շարահիւսական որոշ պարագաներու»³⁹:

Սվեդիա գավառի բարբառը՝ իր խոսվածքներով, գործածում է Մուսսա լեռան հարավային ստորոտին միմյանցից ոչ շատ հեռու տեղակայված հայաբնակ Բիթիաս, Հաջի-Հաբիբի, Յողուն-Օլուկ, Խտըրբեկ, ՎագրՖ, Քաբուսիե գյուղերի⁴⁰ և նա մի քանի գյուղակների հայ բնակչությունը: Հ.Աճառյանն այն նա համարել է *Կը ճյուղի* բարբառ և որպես հնչյունաբա-

բէլլա՝ «գեղեցիկ տուն» բառակապակցությունից. «Ընաչակիրների արշավանքի գլխավոր հրահրիչ ճգնավոր Պետրոսը, այս տեղանքում իր համար դրյակի պես գեղեցիկ տուն կառուցեց և այն անվանեց *Քազաբէլլա*, որից էլ հետագայում առաջացել է «Քեսաբ» անվանումը», - պարզաբանում է հեղինակը (տե՛ս Ս. Անդրեասեան, *Սուէտիոյ բարբառը*, 1953, էջ 198):

³⁶ Փաշայան Ա., նշվ. աշխ., էջ 11:

³⁷ Ղարիբյան Ա., 1953, էջ 444:

³⁸ Փաշայան Ա., նշվ. աշխ., էջ 11:

³⁹ Չոլաքեան Յ., 2009., էջ 7:

⁴⁰ Հանանյան Գ., նշվ. աշխ., էջ 8:

նական հիմնական հատկանիշ նշել, որ նրանում *w* ձայնավորը դառնում է *nz*⁴¹:

Այս բարբառով խոսող տարածքին ամենամոտ հայախոս շրջանը Բեյլանն է⁴²:

Անտիոքի հայերեն բարբառային միավորների մի շարք այլ առանձնահատկություններին կանդրադառնանք համապատասխան բաժիններում:

Արաբերենի գործածության տարբերակները

Սեմական լեզուները, այդ թվում նաև արաբերենը, պատկանում են թեքական լեզուների խմբին⁴³:

Դասական արաբերենը ձևավորվել է 7-րդ դարում՝ Ղուրանի և հինարաբական պոեզիայի գրավոր շարադրմամբ⁴⁴: Ներկայումս այն գործածվում է հիմնականում կրոնական-ծիսական ոլորտում:

Արաբերենի տարածքային քիչ թե շատ տարբերակվածությունը դարերի ընթացքում աստիճանաբար խորացել է. արդեն «...միջնադարյան արաբական տեքստերում այս կամ այն չափով արտացոլված են այն ժամանակ գոյություն ունեցող արաբական բոլոր բարբառները»⁴⁵:

⁴¹ Աճառյան Հ., 2003, էջ 349:

⁴² Բեյլանի բարբառում արաբերենից կատարված սակավաթիվ փոխառություններ են վկայված: Դրանց ստորև կանդրադառնանք:

⁴³ Гранде Б., Введение в сравнительное изучение семитских языков, М., 1972, ст. 18.

⁴⁴ Юшманов Н., Строй арабского языка, Л., 1938, ст. 5.

⁴⁵ Лебедев В., Поздний среднеарабский язык, М., 1977, ст. 15.

Երկրորդը՝ ժամանակակից գրական լեզուն, որը դասականի հետագա զարգացման արդյունք է և պայմանավորված է 19-րդ դ. 2-րդ կեսին արաբական երկրներում գրականության զարգացմամբ, ունի բազմաբնույթ գործառույթուն. այն գիտության, կրթության, գրագրության, գեղարվեստական գրականության, մամուլի, այսինքն՝ գրավոր և պաշտոնական լեզուն է: Այս երկուսը միմյանցից ունեն բառապաշարային, մասամբ նաև շարահյուսական էական տարբերություններ⁴⁶:

Արաբական երկրներում արաբերենն այսօր գործածվում է գրական (al-fuṣḥā) և տեղի խոսակցական (al-‘āmmiyya) տարբերակներով⁴⁷: Գրականին զուգահեռ ձևավորված բարբառային՝ Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի, Եմենի, Սուդանի, Ալժիրի և այլ երկրների տարբերակները, սակայն, գրական լեզվի կարգավիճակ չեն ստացել⁴⁸: Սիրիայի խոսակցական լեզուն, որը արաբերենի սիրիական բարբառն է, երկրի տարածքում գրական լեզվի համեմատությամբ ունի հատկապես հնչյունական որոշ տարբերություններ: Դեռևս միջնադարյան գրավոր աղբյուրներում առկա են բարբառային երևույթներով աչքի ընկնող տեքստեր, որոնք հիմնականում, այսպես կոչված, քաղաքային բարբառներով են շարադրված: Չնայած գրական լեզվի և բարբառների միջև գոյու-

⁴⁶ Шагалъ В., Языковой аспект национальных процессов в арабских странах М., 1987, ст. 52.

⁴⁷Altoma S., The Problem of Diglossia in Arabic. A Comparative Study of Classical and Iraqi Arabic. Harvard Middle Eastern Monograph Series, 1969, p. 3-6.

⁴⁸ Гранде Б., Курс арабской грамматики в сравнительно-историческом освещении, М., 1963, ст. 200.

թյուն ունեցող մի շարք տարբերություններին, այնուամենայնիվ, նրանց քերականական համակարգը և բառապաշարը հիմնական գծերով համընկնում են⁴⁹:

Ուսումնասիրվող նյութի աղբյուրները

Հայերենի վերոհիշյալ տարածքային տարբերակներում առկա արաբերենի ներթափանցումներն ուսումնասիրել ենք՝ հիմք ընդունելով Հ. Աճառյանի, Հ. Չոլաքյանի, Ա. Փաշայանի, Տ. Անդրեասյանի, Գ. Հանանյանի, Ա.Տ. Ինճեճիքյանի, Պ. և Կ. Մախչիկյանների, Հ. Քյուփեյանի բարբառային հետազոտությունների, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում առկա բարբառային համապատասխան ձեռագիր նյութերի մատուցած փաստերը⁵⁰: Օգտագործել ենք նաև մեզ հետաքրքրող հարցերի վերաբերյալ Անտիոքի տարածքի հայ բարբառախոսներից ստացած տվյալները:

Հ. Չոլաքյանի և Ա. Փաշայանի վերոհիշյալ մենագրությունների վերջում առանձին տրվում են Քեսաբի խոսվածքի փոխառյալ բառերի ցանկեր, որոնցում նշվում են յուրաքանչյուր բառի՝ խոսվածքում ունեցած նշանակությունը և փոխա-

⁴⁹Лебедев В., նշվ. աշխ. էջ 15:

⁵⁰տե՛ս Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Ե., 2013, Չոլաքեան Յ., Քեսապի բարբառը, Ե., 2009, Փաշայան Ա., Քեսաբի բարբառը, (ձեռագիր), Մախչիկյան Պ., Մախչիկյան Կ., Քեսաբի բարբառի բառարան, (ձեռագիր), 1960, Ինճեճիքեան Տոքթ. Ա., Քեսապ և իր բարբառը, Չոլաքեան Յ., «Քեսապ», Գ. հատոր, Հ., 2004, էջ 11-181, Անդրեասյան Տ., Սվեդիայի բարբառը, Ե., 1967, Հանանյան Գ., Սվեդիայի բարբառը, Ե., 1995, Քյուփեյան Հ., Բելլանի բարբառը (ատենախոսություն, ձեռագիր), Ե., 2008:

ռության աղբյուրը՝ փոխատու լեզուն: Ա. Ինձեճիքյանի ուսումնասիրությունը նույնպես ունի բառարան, որում *ա* նշումով տարբերակված են արաբերենից փոխառված բառերը: Ինչ վերաբերում է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի պահոցում պահվող Մախշիկյանների բառարանին, ապա այն կիսատ է (բառացանկն ավարտվում է Չ տառով), և օտար լեզուներից, այդ թվում նաև արաբերենից վերցված բառերն առանձնացված չեն ո՛չ ցանկով, ո՛չ էլ որևէ նշումով: Տ. Անդրեասյանի աշխատանքում⁵¹ *Արաբերեն բառեր* վերտառությամբ տրված է ընդգրկուն բառացանկ, նշված են բառի՝ խոսվածքում ունեցած նշանակությունը և ըստ անհրաժեշտության՝ մի շարք բառաձևերի արաբատառ համարժեքները: Գ. Հանանյանի «Սվեդիայի բարբառը» աշխատանքում⁵² փոխառյալ բառերի ցանկ ներկայացված չէ, իսկ Հ. Քյուփեյանի «Բեյլանի բարբառը» ատենախոսության բառացանկում արաբական փոխառություններ շատ քիչ են ընդգրկված⁵³. այս բարբառում, ներկայացված տվյալների համաձայն, փոխառ-

⁵¹Այն վերնագրված է Սվեդիայի բարբառ, թեև աշխատանքի ուսումնասիրության հիմքում Սվեդիա գավառի Յոդուն-Օլուկ բնակավայրի խոսվածքն է: Յոդուն-Օլուկը գավառի հնագույն գյուղերից է և խոսվածքի ձևավորման կենտրոնը (տե՛ս Հանանյան Գ., նշվ. աշխ., էջ 8): Բացի այդ, աշխատության հեղինակը նշում է (Անդրեասյան Տ., նշվ. աշխ., էջ 7), որ ինքը վերոհիշյալ գյուղից է և, բնականաբար, շատ լավ տիրապետում է հարազատ խոսվածքին:

⁵²Աշխատանքի ուսումնասիրության հիմքում Սվեդիա գավառի Խորբեկ գյուղի խոսվածքի լեզվական նյութն է, իսկ հեղինակն այդ գյուղի խոսվածքի կրողն է (Հանանյան Գ., նշվ. աշխ., էջ 5-6):

⁵³Այդ իսկ պատճառով, թեև քննության ենք առնում Անտիոքի բարբառախումբը, բայց ուսումնասիրության նյութը ընդգրկում է հիմնականում Քեսաբ-Սվեդիայի բարբառի և նրա խոսվածքների՝ արաբերենից կատարված փոխառությունները:

յալ բառերը գերազանցապես թուրքերեն են, իսկ մի մասն էլ թեև նշված է որպես թուրքերեն բառեր, բայց մեծ մասամբ արաբերենից միջնորդավորված փոխառություններ են⁵⁴: Այնուամենայնիվ, այս հեղինակները ևս իրենց աշխատանքներում, ինչպես և մյուս հետազոտողները, անդրադարձել են խնդրառարկա բարբառային միավորներում առկա փոխառություններին՝ աշխատելով բացահայտել դրանց դրսևորման ձևերը հայերենի տվյալ տարածքային տարբերակներում (այս մասին ավելի մանրամասն կշարադրվի համապատասխան հարցի քննության ժամանակ):

Մեծանուն լեզվաբան Հ. Աճառյանի կողմից նշված, միջնադարյան հայ մատենագրությունից դուրս գրված արաբական փոխառությունների մեջ ևս կան այնպիսիք⁵⁵, որոնք այսօր էլ գործածվում են Անտիոքի հայերեն տարածքային որոշ տարբերակներում:

Անտիոքի բարբառային միավորների գիտական հետազոտություններում արաբերենից կատարված փոխառությունների ամենաձավալուն բառացանկ ներկայացնում է Հ.Չոլաքյանը (ըստ մեր հաշվումների՝ ավելի քան 600 բառ՝ ներառյալ բառակազմական ձևերը⁵⁶): Քեսաբի խոսվածքին նվիրված իր մենագրության մեջ նա նշում է, որ աշխատել է այդտեղ գետեղել տարածքային այս տարբերակի համար որոշ կարևորություն ներկայացնող ու համեմատաբար հին փոխառություն-

⁵⁴ տե՛ս Քյուփեյյան Հ., Բեյլանի բարբառը, Ե., 2008, էջ 177-245:

⁵⁵տե՛ս Աճառյան Հ., ՀԼՊ, 2-րդ մաս, Ե., 2013, էջ 189-207:

⁵⁶Լ.Հովհաննիսյանը, օրինակ, «Հայերենի իրանական փոխառությունները» աշխատության մեջ բայական կառույցները (որոնց մի բաղադրիչն օտար բառ է) ամբողջովին առնված փոխառյալ միավորներ չի դիտում (տե՛ս Հովհաննիսյան Լ., Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990, էջ 9):

ները. նորերը գրեթե արձանագրված չեն⁵⁷: Փոխառված բառերի հաջորդ հարուստ բառացանկը (ավելի քան 300 բառ), որն ընդգրկում է Սվեդիայի խոսվածքում առկա արաբերեն փոխառյալ բառերը, ներկայացնում է Տ. Անդրեասյանը և այդ առնչությամբ փաստում, որ այն շատ ավելի ընդգրկուն կլիներ, եթե ինքն արաբերենին լավ տիրապետեր⁵⁸: Իսկ Ա.Ինճե-ճիքյանի՝ Քեսաբի խոսվածքին նվիրված ուսումնասիրության բառացանկում համեմատաբար ավելի քիչ արաբական փոխառություններ են ընդգրկված⁵⁹ (ավելի քան 150 բառային միավոր): Հարկ է նշել, որ դրանցից շատերը գտնում ենք նաև Հ.Չոլաքյանի կազմած բառացանկում:

Նյութի ոչ բավարար ուսումնասիրված լինելու պատճառով է, կարծում ենք, որ հայերենի բարբառների՝ օտար փոխառություններին վերաբերող հարցերում հանդիպում ենք հեղինակավոր ուսումնասիրողների կողմից կատարված, թվում է՝ երբեմն ոչ բավարար փաստերով հիմնավորված եզրակացությունների: Ա.Ղարիբյանը, օրինակ, Անտիոքի բարբառախմբի Արամո գյուղի խոսվածքի մասին գրում է. «Արամոյի բարբառում արաբերեն բառերը կարելի է հաշվել հազարներով, իսկ հայերեն բառերը՝ շուրջ հազարի սահմաններում: Դրանք կազմում են կենսական անհրաժեշտություններ կայացնող բառապաշարը, այսպես կոչված՝ բառային հիմնական ֆոնդը»⁶⁰: Այս տեսակետը, ինչպես մեզ թվում է, լրացուցիչ փաստերի ընդգրկմամբ հիմնավորման կարիք

⁵⁷Չոլաքեան Յ., 2009, էջ 180:

⁵⁸Նույնը, էջ 168:

⁵⁹Նույնը, էջ 137:

⁶⁰Ղարիբյան Ա., Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Ե., 1958, էջ 10:

ունի, քանի որ խոսվածքի ուսումնասիրության մեջ արաբերենից փոխառյալ բառերի ցանկ ներկայացված չէ:

Ստորև ի մի ենք բերել նշված աղբյուրներում գրառված արաբական փոխառությունների բարբառային ձևերը, ճանաչել դրանց գրական արաբերեն համարժեքները⁶¹ և ընդգրկել այս աշխատանքում: Դուրս ենք թողել մեր նպատակին չառնչվող, արաբերենից միջնորդավորված՝ արաբապարսկական, արաբաթուրքական փոխառությունները:

Հայերենի վերոհիշյալ բարբառային միավորներում արաբերենից փոխառյալ բառերի՝ տարբեր հեղինակների կիրառած տառադարձումը միօրինակացնելու և գիտական դարձնելու նպատակով գործածել ենք ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի ստեղծած «Հայերենի հնչատարբերակների տառադարձման նոր համակարգը»⁶²: Աշխատանքում կիրառվում են հետևյալները.

Չայնավորներ	
<i>ü, üü, ö</i>	քմային <i>u, nu, o</i>
<i>ü</i>	թույլ քմային <i>w</i>
<i>ü, ü, ö</i>	երկար <i>u, ü, o</i>
Երկբարբառներ	
<i>ʔo, ʔü, nu, nuw</i> (բարձրացող)	
<i>ʔ, ʔü, oʔ, oʔü, uʔü, üʔü</i> (իջնող)	

⁶¹Գրական արաբերեն ձևերը և նրանց իմաստները ներկայացվում են ըստ Баранов Х., Большой арабского-русский словарь, т. 1-2, М., 2002 և 'Al-Qāmus 'al-ğadīd, Tūnīs, 1985 (արաբերեն) բառարանների:

⁶² Աղաբեկյան Ս., Հանեյան Ա., Ուռուտյան Ռ., ՀԲԱ, պրակ 3, Ե., 2010, էջ 15-21:

Բաղաձայններ	
\hat{q} (\hat{q})	ըմպանային <i>q</i>
$\bar{p}, \bar{q}, \bar{l}, \bar{m}, \bar{j}, \bar{a}, \bar{r}$	տևական արտաբերման <i>p, q, l, m, j, a, r</i>

Հայերենի համապատասխան հնչյունները նկարագրելուն հիմք է ծառայել Ա.Ն. Խաչատրյանի «Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն» փորձառական հնչյունաբանությանը նվիրված աշխատությունը⁶³:

Արաբերեն բառաձևերը տառադարձմամբ ըստ անհրաժեշտության ներկայացրել ենք ինչպես բանավոր (բարբառային), այնպես էլ գրավոր տարբերակներով: Այդ նպատակի համար գործածել ենք Encyclopedia of Arabic Language and Linguistics-ի Baskerville MT for Brill 02 տառադարձման համակարգը⁶⁴: Համաձայն դրա՝ արաբերենի ներքոհիշյալ հրնչյուններն արտահայտվել են համապատասխան հետևյալ գրանշաններով.

Բաղաձայններ	
ğ	ձայնեղ շփական <i>ŋ</i>
x	խուլ շփական <i>/x/</i>
k	խուլ հպական <i>p</i> (շնչեղության հատկանիշը հայ. հմմ. թույլ է արտահայտվում)
t	խուլ հպական <i>p</i> (շնչեղության հատկանիշը հայ. հմմ. թույլ է արտահայտվում)

⁶³ Խաչատրյան Ա. Ն., Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Ե., 1988:

⁶⁴ տե՛ս www.brill.com.

š	շփական շ
w	ձայնեղ շփական (արտաբերությամբ նման է անգլերենի w -ին)
d	ձայնեղ շփական (արտաբերությամբ նման է անգլերենի th-ին` this «այս» բառում)
t	խուլ շփական (արտաբերությամբ նման է անգլերենի th-ին` thing «իր, առարկա» բառում)
h	խոչակային խուլ շփական h (շնչեղությամբ արտաբերվող)
d, t, s, z	ուժգին արտաբերման (եմֆատիկ) <i>դ, տ, ս, զ</i>
q	խոր հետքիմքային խուլ հպական <i>կ</i>
'	խոչակային խուլ հպական (համգա)
ˈ	կոկորդային ձայնեղ շփական (այն)
bb, mm, ll և այլն	տևական արտաբերման <i>բ, մ, լ</i> և այլն
Չայնավորներ	
a, i, u, o, e	կարճ <i>ա, ի, ու, օ, է</i>
ā, ī, ū, ō, ē	երկար <i>ա, ի, ու, օ, է</i>
ə	կարճ <i>ը</i>
Երկբարբառներ	
aw (իջնող)	<i>ա՛ւ</i>
ay (իջնող)	<i>ա՛յ</i>

Արաբերենի հնչյունները գրառել ենք՝ հիմք ընդունելով Մոսկվայում հրատարակված փորձառական հետազոտությունների արդյունքների⁶⁵ նկարագրական նյութը, որը տվյալ պարագայում ավելի ամփոփ և մատչելի է:

Չ. Չոլաքյանի՝ Քեսաբի բարբառային միավորին նվիրված աշխատանքը շարադրված է արևմտահայերենով, նրանում տեղ գտած փոխառյալ բառերը՝ բարբառին հատուկ բաղաձայնական տեղաշարժ-տեղափոխության համակարգով (այդ մասին անդրադառնում ենք համապատասխան գլխում): Աշխատանքի շարադրանքին համահունչ և փոխառյալ մյուս բառերին համապատասխան՝ դրանք անհրաժեշտաբար ներկայացրել ենք բարբառային միևնույն տառադարձմամբ:

Մեմական և հնդեվրոպական լեզվաբանական եզրույթների տարբերությունները (ըստ նրանց արտահայտած հասկացական իմաստների) հնարավորության սահմանում նվազագույնի ենք հասցնել՝ օգտագործելով հիմնականում մեզանում ընդունված համարժեք եզրույթներ:

⁶⁵տե՛ս Մ. Շարբատով, Современный арабский язык, М., 1961, Ковалев А., Шарбатов Г., Учебник арабского языка, М., 1969.

ԳԼՈՒԽ 2

ԱՐԱԲԵՐԵՆԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄԸ ԱՆՏԻՈՔԻ ԲԱՐԲԱՌԱՆՄԲՈՒՄ

1. ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արաբերենը և հայերենը՝ իրենց տարածքային տարբերակներով հանդերձ, տարբեր լեզվաընտանիքների անդամներ են, և, ինչպես սովորաբար նման տիպի լեզուներին է հատուկ, նրանց ընդհանրությունները (տիպաբանական) ավելի հաճախ ի հայտ են գալիս հնչյունական և բառային մակարդակներում՝ փոխառությունների միջոցով⁶⁶:

Արաբերենի հնչյունական համակարգի ազդեցությունը հայերեն բարբառների արևմտյան խմբակցության Անտիոքի կամ ծայրհարավարևմտյան բարբառախմբի տարածքային միավորներում երևան է գալիս հիմնականում արաբերենից կատարված փոխառություններում: Այդ բարբառների կրողները, վաղ ժամանակներից լինելով Սիրիայի բնակիչներ, արաբերենից մեծ թվով բառային փոխառություններ են կատարել:

Գրական արաբերենը բնութագրվում է բաղաձայնների, հատկապես՝ կոկորդային, միջատամնային և ուժգին արտաբերման (էմֆատիկ), զարգացած համակարգով: Արաբական

⁶⁶Вайнрайх У., Языковые контакты. Перевод с английского языка, К., 1979, էջ 102:

յուրաքանչյուր երկրում գործառոդ արաբերենի տարածքային տարբերակներն անվանվում են բարբառներ⁶⁷: Սիրիական տարածքային տարբերակը համարվում է գրական լեզվին ամենամոտ բարբառը⁶⁸: Վերջինիս հնչյունական համակարգը, գրական լեզվի յուրահատկությունները պահպանելով հանդերձ, արտաբերական դժվարություններով առանձնացող որոշ բաղաձայններ ժամանակի ընթացքում պարզեցրել է⁶⁹:

Հայերեն խնդրո առարկա բարբառային միավորների բաղաձայնական ենթահամակարգերը միմյանցից էական տարբերություններ չեն դրսևորում: Դրանք հին հայերենի՝ գրաբարի համեմատությամբ բնորոշվում են հպականների տեղաշարժ-տեղափոխությամբ, այսինքն՝ ձայնեղ հպականների և կիսաշփականների իլացմամբ և համապատասխան խուլերի ձայնեղացմամբ⁷⁰: Սակայն շնչեղ խուլ հպականները և բոլոր շփականները համակարգային փոփոխության գրեթե չեն ենթարկվել⁷¹: Այս կերպ Անտիոքի բարբառային միավորները, այնուամենայնիվ, պահպանել են հպականների ավանդական եռաշարք հաջորդականությունը (բ-պ-փ, գ-կ-ք, դ-տ-թ): Ինչ վերաբերում է կիսաշփականներին, ապա որոշ դեպքերում խոսվածքներում օրենքը նույն հետևողականությամբ չի գործել, որին կանդրադառնանք ըստ անհրաժեշտու-

⁶⁷Эль-Массарани М., Сегаль В., Арабско-русский словарь сирийского диалекта, М., 1978, էջ 3, Шагаль В., նշվ. աշխ., էջ 39:

⁶⁸տե'ս Ковалев А., Шарбагов Г., նշվ. աշխ., էջ 6:

⁶⁹Шагаль В., նշվ. աշխ., էջ 60:

⁷⁰Ղարիբյան Ա., 1953, էջ 59, Մուրադյան Հ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Ե. 1982, էջ 305:

⁷¹Ղարիբյան Ա., 1953, էջ 5:

թյան: Պատմական հնչյունափոխությամբ առաջացած բաղաձայնական այսպիսի համակարգը հաճախ անվանում են *կիլիկյան*, քանի որ նրա գործառությունը բացահայտվել է Կիլիկիայի բարբառային միավորներն ուսումնասիրելիս⁷²: Անտիոքի բարբառախմբում գործառում են նաև *Ֆ* խուլ շփական, արաբերենից փոխառյալ խոր հետքիմքային *կ* (*q*) և ձայնեղ հպական *ղ* (*ʕ*) բաղաձայնները:

Արաբական փոխառություններն Անտիոքի տարածքային տարբերակներում, ինչպես մեր ուսումնասիրությունն է ցույց տալիս, հիմնականում կատարվել են հպական բաղաձայնների նշված տեղաշարժ-տեղափոխությունից հետո: Այդ է պատճառը, որ արաբերենի հպական բաղաձայնները ձայնաբանական հատկանիշներով արտահայտված են գրեթե նույնությամբ՝ *ձայնեղ, խուլ, շնչեղ խուլ*:

Հարկ է նշել նաև, որ արաբերենից կատարված փոխառությունները կրում են ոչ միայն հայերենի վերոհիշյալ բարբառային միավորների ազդեցությունը, այլև Միդիայի արաբ հանրության տարբեր շերտերի լեզվական յուրահատկությունները: Այդ փոխառությունները, կարելի է ասել, կատարվել են արաբերենի և՛ դասական, և՛ ժամանակակից գրական տարբերակներից, ինչպես նաև՝ սիրիական բարբառից:

Անտիոքի բարբառախմբի հնչյունական համակարգերը, ի տարբերություն հայերենի և արաբերենի գրական տարբերակների, ամբողջական փորձառական քննության չեն են-

⁷² Այն ընկած է նաև կիլիկյան գրական հայերենի հիմքում (տե՛ս Սուրադյան Հ., նշվ. աշխ., էջ 305):

թարկվել⁷³: Մեր հետազոտության ժամանակ հիմք ենք ընդունել խնդրո առարկա բարբառային միավորների վերաբերյալ հրատարակված աշխատությունները, ձեռագիր նյութեր, մի շարք հեղինակների և մեր սեփական դիտարկումները: Այդ աշխատանքներում բարբառային խնդրո առարկա միավորների բաղաձայնական ենթահամակարգերը ներկայացված են հիմնականում գրական արևելահայերենի համապատասխան հրնչյունների համեմատությամբ: Հայերենի՝ հնչարտաբերական հատկանիշներով համեմատվող գրական և բարբառային տարբերակների բաղաձայնները տարբերություններ գրեթե չեն ցուցաբերում: Լսողական ընկալմամբ, նաև բարբառակիրների հավաստմամբ Անտիոքի հպական բաղաձայնները, գրական արևելահայերենի համեմատությամբ ավելի «փափուկ» են: Դրանք այնպիսի հնչյուններ են, որոնք լսողությամբ ընկալվում (հետևաբար և արտասանվում) են մե՛րթ որպես ձայնեղ, մե՛րթ որպես խուլ⁷⁴: Հ. Աճառյանը, նկատի ունենալով գրական արևելահայերենի համապատասխան բաղաձայններից այսպիսի բաղաձայնների տարբերությունը, վերջինները տառադարձում է՝ ‘նշանով⁷⁵: Սակայն դրանք շնչեղ ձայնեղներ չեն: Հաշվի առնելով նաև մեր լսողական ընկալումները՝ կարելի է նշել, որ հպումը և ձայնի մասնակցությունը դրանցում ավելի թույլ են արտահայտվում: Այնուամենայնիվ, և՛ հայերենի, և՛ արաբերենի տարածքային միավորների հնչյունների յուրահատկությունները ներկայացնելու համար որպես չափանիշներ ենք ընդունել երկու

⁷³ տե՛ս Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի., հ. 6, Ե., 1971, էջ 626:

⁷⁴ Մուրադյան Հ., նշվ. աշխ., էջ 283:

⁷⁵ Աճառյան Հ., 2003, էջ 352:

լեզուների գրական տարբերակների համապատասխան փորձառական հետազոտությունների արդյունքներով բացահայտված հնչարտաբերական հատկանիշները:

Հիմք ընդունելով վերոնշյալ հանգամանքները՝ արաբերենի բաղաձայնները կարելի է դասակարգել ստորև տրվող ենթախմբերով՝ ներկայացնելով հայերեն բարբառային ձևերում նրանց արտահայտման առանձնահատկությունները:

1. ՀՊԱԿԱՆ ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐ

Հայերենի՝ մեր ուսումնասիրած բարբառային միավորների և արաբերենի բաղաձայնների մի մասը, եթե անգամ հնչարտաբերական հատկանիշներով չեն նույնանում, այդուհանդերձ միմյանց մոտ գծեր են ցուցաբերում: Հետևաբար՝ արաբերենի բաղաձայնները, փոխառություններում իրենց հատկություններով նմանվելով Անտիոքի բարբառախմբի համապատասխան հնչյուններին, նույն կերպ են արտացոլվել և ունեն միևնույն գործառությունները:

Այսպես, փոխառություններում արաբերենի երկշրթնային *b* և լեզվատամային *d* ձայնեղ հպականները նույնացել են բարբառի համապատասխանաբար ձայնեղ հպական *p* և *q* բաղաձայններին՝ պահպանվելով փոխառյալ բառերի բոլոր դիրքերում⁷⁶. *բւնդւվի* «բեդվին» - badaw⁷⁷ «1.բեդվինական,

⁷⁶Փոխառությունների բաղաձայնները հիմնականում հանդիպում են փոխառյալ բառերի բոլոր դիրքերում, ուստի, կրկնությունից խուսափելու համար, ոչ միշտ ենք այդ մասին նշում:

2.բեղվին», *բինա* «շենք» - binā⁷⁷, *կարբր* «մահմեդականի գերեզման» - qabr «գերեզման», *կուրբուն* «մատաղ» - qurbān, *շաբաբ* «երիտասարդներ, առողջ և գրավիչ մարդիկ» - šabāb, *ազաբ* «ամուրի» - ‘azab «1.չամուսնացած, 2.ամուրի», *դին* «կրոն» - dīn «հավատ, կրոն», *դարաջա* «աստիճան, մակարդակ» - daraja, *բադալ* «փոխարժեք, փրկագին» - badal, *բադալիս* «սեխ» - baṭṭīx ‘aşfar, *յաճիճ* «նոր» - jadīd «1.նոր, 2.վերջին», *ջալադ* «դահիճ» - jallad, *շահադ* «վկա» - šāhid և այլն:

Սվեդիայի խոսվածքում⁷⁹ գտնում ենք հնչյունափոխության հետևյալ դեպքերը. *բ>փ` քրփս* «ինչ-որ բանի` ճնշումով ամանի մեջ տեղավորված լինելը» - kabs «1.ճնշում, ճզմում, մամլում, 2.պահածոյացում», *ժ>տ` ղըրմըտ* «կղմինդր» - qirmīd, *բահադալ* «խայտառակ» - bahdala «կշտամբել, հայիոյել, վիրավորել» բայից, *սայտեղից` bahdala* «վիրավորանք» և *ժ>զ`*

⁷⁷Գրական արաբերեն բառակները ներկայացված են ըստ ‘Al-Qāmūs ‘al-jadīd, T., 1985 (արաբերեն) և Баранов X., Большой арабско-русский словарь, т. 1, 2, М., 2002 բառարանների:

⁷⁸Արաբերեն բառի թարգմանությունը չենք նշում, երբ այն բարբառում ճիշտ նույն իմաստով է գործածվում: Իմաստային նրբերանգներ ունենալու դեպքում բառի թարգմանությունը տրվում է:

⁷⁹Թեև բարբառն անվանվում է Քեսաբ-Սվեդիայի, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրա վերաբերյալ հիմնական ուսումնասիրությունները կատարվել են Քեսաբի և Յոդուն-Օլուկի խոսվածքների նյութի հիման վրա, փոխառյալ բառերն ավելի դյուրին տարբերակելու համար, այդ բարբառային միավորները պայմանակա-նորեն կանվանենք Քեսաբի և Սվեդիայի խոսվածքներ: Օրինակները բերվում են և՛ Քեսաբի, և՛ Սվեդիայի խոսվածքներից, սակայն շարադրանքը չծանրաբեռնելու նպատակով ամեն բառի համար առանձին չի նշվում աղբյուրը. այդ մասին նշումը կատարվում է աշխատանքի հավելվածում տրվող բառացանկում:

մըրազ «ցանկալի բան, բարեբախտություն» - murād «ցանկություն, մտադրություն»:

Արաբերենի ատամնային խուլ հպական *t*-ն ոչ լարված արտասանությամբ հնչյուն է, որից ելնելով ունի նաև թույլ շնչեղություն: Լսողական ընկալմամբ այն նման է հայերենի լեզվատամնային, ուժեղ շնչեղությամբ *թ*-ին: Դրա հետևանքով փոխառություններում վերջինիս հետ հիմնականում նույնացել է. *թաննաքու* «թիթեղ» - tanak, *թաննⁿօհ* «զգուշացում»-tanbēh, *թուրյուկ* «1.հակաթույն, 2.թանկագին բան» - tiryāq «հակաթույն», *թահթըլ դարբ* «ծեծի սպառնալիքով» - tahta 'aḡ-darb, *շարբայթ* «օշարակ» - šarbāt և այլն:

Սվեդիայի խոսվածքում այս հնչույթի հնչյունափոխության մի քանի բառ է առկա. *t>տ` բայտ* «երգի մեջ հանդիմանական խոսք» - bayt «1.տուն, բնակատեղի, 2.նտանավորի, չափածոյի տող», *դըշտ* «նիզակ» - xušt, վերջինիս *խըշթ* տարբերակը և *t>տ, դ` նսհիտ/նսհիդ* «սրբատաշ (քար)» - nahīt զուգաձևությունը:

Իգական սեռի մի քանի բառում արաբերենի իգականության ցուցիչը՝ *ta marbūta*-ն, Սվեդիայի խոսվածքում արտահայտվել է *տ*-ով. *սուրատ* «երես, դեմք» - šūra «1.տեսք, կերպար 2.նկար, դիմանկար», *լսթէտ* «սրածայր փայտ, որով խաղում են» - laʿba ^(տ) «1.խաղ, 2.հնարք», *հալվուտ* «նորածին ուլը լեռներից տուն բերելու առթիվ հովվին տրված նվեր» - ḥalwiyyāt «քաղցրեղեն, չորացրած մրգեր» (նույն արմատից ծագող ḥulūʿān բառն ունի «նվեր» իմաստը), *սուֆատ* «պատկեր» - šifa «յուրահատկություն, որակ» և այլն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ *ta marbūta*-ն արտաբերվում է խոսքի

շղթայում, իսկ բառի ուղիղ կամ բառարանային տարբերակում արտասանվում է որպես *a*, օրինակ՝ *šūra* «1. տեսք, կերպար, 2. նկար, դիմանկար», բայց՝ *šūra-t-'al-walad* «տղայի դեմքը», կարող ենք նշել, որ սրանք խոսքի շղթայից վերցված ձևեր են:

Միջքիմբային խուլ հպական *k*-ն արտաբերվում է փափուկ և որոշակի շնչեղությամբ: Անտիոքի բարբառախմբի փոխառություններում այն հիմնականում նույնացել է հայերենի *ք*-ին, որը հետքիմբային, թույլ հպումով, բայց ուժեղ շնչեղությամբ հպական բաղաձայն է: Այսպես՝ *քնլինու* «բառ, խոսք» - *kalima*, *քնլք*⁸⁰ «շուն» - *kalb*, *թաննքու* «թիթեղ» - *tanak*, *քնքնքու* «ճախարակ» - *bakara*, *մնքթուք* «նամակ»- «1. գրված, 2. գրություն, ուղերձ» - *maktūb*, *շքքքի* «ցանց, ուռկան» - *shabaka* «1. ցանց, ուռկան, 2. ծուղակ, թակարդ», *քնլնք* «ճակատագիր» - *falak* «1. երկինք, 2. ուղեծիր», *մուշաքնք* «1. անուշեղենի տեսակ, 2. մաղ հիշեցնող թել, որով ծածկում են պատուհանները» - *mušabbak* «1. ցանցավոր (ած.), 2. քաղցր ուտելիք («հյուսած» կարկանդակ)» և այլն:

Սվեդիայի խոսվածքում նկատելի են հետևյալ հնչյունափոխությունները. *k>q` qk^m/h* (գուլս) «շերամ պահելու գետնահարկ շենք» - *kūx* «խրճիթ» և *k>q` քնքնկի* «օրհնություն, լիություն. մաղթանք, որ տրվում է բերքահավաքի կամ մնայուն պաշար դնելու առթիվ» - *baraka* «1. օրհնություն, 2. երկնային շնորհ»:

⁸⁰Մարդուն ուղղված անարգանքի խոսք. գործածվում է նաև *քալքքքնքնք*՝ «շունշանորդի» - *kalb* "ibn kalb իմաստով (տե՛ս Անդրեասյան Տ., նշվ. աշխ., էջ 184):

Այսինքն՝ արաբերենի այս երկու բաղաձայնների՝ հիմնականում նույնացումը հայերենի նշված հնչյուններին պամանավորված է նրանց համար ընդհանուր ձայնաբանական (խուլ), արտաբերման տեղի և շնչի առկայության հատկանիշներով, թեև վերջինն արաբերենի բաղաձայններում ավելի թույլ է արտահայտվում: Հավանաբար շնչեղության և թույլ հպման հատկանիշներն են դերակատարություն ունեցել, որպեսզի արաբերենի նշված բաղաձայնները ոչ թե հայերենի համապատասխան պարզ խուլ (*տ, կ*), այլ՝ հիմնականում շնչեղ խուլ հնչյուններով փոխարինվեն:

Ուշագրավ է, որ գրական արաբերենում բացակայում են հայերենին և քննվող բարբառային միավորներին հատուկ երկշրթնային *փ, պ*, հետքիմքային (հետնալեզվային) *գ, կ* հպականները, հետնատամնային կիսաշփական բաղաձայնների *ձ, ծ, ց* լծորդական շարքը, նախաքիմքային *ճ* և *չ* կիսաշփականները, ուստի և այս բաղաձայնները արաբերենից փոխառյալ բառերում չեն հանդիպում: Արաբերենն ունի միայն մեկ նախաքիմքային կիսաշփական ձայնեղ բաղաձայն՝ *յ*-ն, որը հնչարտաբերությամբ գրեթե նույնանում է հայերենի *ջ*-ին: Թեև Միրիայի բարբառում, անգամ նաև գրական արաբերենի սիրիալիբանանյան, թունիսյան տարբերակներում այս կիսաշփականը բոլոր դիրքերում հիմնականում փոխարինվում է ձայնեղ շփական *ջ* (*ժ*)-ով⁸¹, երբեմն էլ՝ խուլ կիսաշփական *չ* (*չ*)-ով⁸², սակայն հայերենի՝ ուսումնասիրվող բարբառային միավորների արաբական փոխառություններում *յ*-ի նման տարբերակվածություն չկա. հաս-

⁸¹ Шагалъ В., նշվ. աշխ., էջ 95:

⁸² Эль-Массарани М., Сегаль В., նշվ. աշխ., էջ 17:

կանչական է, որ այստեղ նրա գրական տարբերակն է պահպանվել. *ջու՛մլա* «ամբողջը, բոլորը» - jumla «1.նախադասություն, 2.հանրագումար, արդյունք», Միրիայի բարբառում՝ *žimle*⁸³, *դսրսջու* «աստիճան, մակարդակ» - daraja, Միր. բրբ.՝ *daraže*, *ջրդիդ* «նոր» - jadid «նոր, վերջին», *ջամբ* «հարևանը, իր նմանը, իրեն հարմարը» - janb «կողմ, կողք», *սջուբ* «զարմանալի, տարօրինակ» - ‘ajib «1.զարմանալի, հրաշալի, 2.տարօրինակ, արտասովոր», *իլաջ* «դեղ» - ‘ilaj, *թանջանրու* «կաթսա» - tanjara, *ֆըլըջ* «կաթված» - falij և այլն:

Որպես նշված օրինաչափությունից շեղում՝ գտնում ենք Քեսաբի խոսվածքում գործածվող, j>q հնչյունափոխությամբ *գսմրըբ* «մաքսատուն» - jumruk և j>θ հնչյունափոխությամբ *սսվա* «արմավ» - ‘ajūa «ճզմած արմավ, խուրմա» փոխառյալ բառերը:

2.ՇՓԱԿԱՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Առավել մեծ ընդհանրություններ են դրսևորում երկու լեզուների շփական բաղաձայնները: Գրական արաբերենում և Միրիայի բարբառում դրանք թույլ, ոչ լարված արտասանությամբ հնչյուններ են, որոնք արտաբերման տեղով նույնպես մոտենում կամ նույնանում են հայերենի համապատասխան շփականներին և գրեթե նույնությամբ պահպանվել են նաև Անտիոքի բարբառախմբի արաբական փոխառություններում: Այսպես՝ արաբերենի առաջնալեզ-

⁸³Միրիայի բարբառային ձևերը բերվում են ըստ անհրաժեշտության և հիմնականում գրական արաբերեն ձևերից տարբերվելու դեպքում:

վային ձայնեղ շփական *z*, ատամնային խուլ շփական *s*, շրթնատամնային խուլ շփական *f* հնչույթներն իրենց հնչարտաբերական հատկանիշներով նման են հայերենի համապատասխան բաղաձայններին: Խուլ շփական նախաքիմքային *š*-ն առավել փափուկ է արտասանվում⁸⁴: Այն հայերենի *շ*-ի համեմատությամբ արտաբերման տեղով ունի չնչին տարբերություն: Արաբերենի փափկաքիմքային խուլ շփական *x*-ն ռուսերենի *x* բաղաձայնի համեմատությամբ ունի ավելի կոշտ (ուժեղ) արտաբերություն: Կոշտ արտաբերություն ունի նաև ձայնեղ շփական *ğ*-ն, այսինքն՝ սրանք հնչարտաբերական հատկանիշներով ավելի մոտ են հայերենի *խ, ղ* փափկաքիմքային շփականներին: Կոկորդային խուլ շփական *h*-ն արտասանությամբ մոտ է հայերենի *հ*-ին. թերևս այդ է պատճառը, որ այն անփոփոխ պահպանվել է փոխառյալ բառերում:

Այսինքն՝ արաբերենի *z, s, š, ğ, x, f, h* շփականները Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակներում համարժեք են հայերենի համապատասխանաբար *զ, ս, շ, ղ, խ, ֆ, հ* բաղաձայններին և պահպանվել են բառերի բոլոր դիրքերում: Այսպես՝

z - *զընբոր* «իշամեղու» - *z*unbūr, *զէման* «ժամանակ» - *z*amān, *հալլըզուն* «խրխունջ» - ḥalazūn, *ջուղի* «աննշան» - *ju*zī, *բըզուն* «խրխունջ» - *ba*zzaqa «1.թքաման, 2.լորձնեակ, կակղամաշկ կենդանի», *ըրոզ* «բրինձ» - ʾurz, *մարբուզ* «կենտրոն» -

⁸⁴ Արաբերենի շփական բաղաձայնների մանրամասն նկարագրությունը տե՛ս Ковалев А., Шарбагов Г., նշվ. աշխ., էջ 32-43:

markaz, *բանտիզ*⁸⁵ «հետույքը բաց» - ba'in «երևացող, ակըն-
հայտ» ու ʿiz «հետույք» և այլն: Նշված օրինակաչափությունից շե-
ղումներ չենք գտնում:

s - *սիէլ* «հեղեղ» - sayl, *սըր* «գաղտնիք» - sirr «1.գաղտ-
նիք, 2.գերեզման, 3.սիրտ, հոգի», *թիսսահ* «կոկորդիլոս» -
timsāh, *հիսաբ* «հաշիվ» - hisāb, *բըսվէս (ֆիսսֆուս)* «փայտոջիլ,
մլուկ» - fasfasa «փայտոջիլ, մլակ» (հվք.՝ fasfas), *բիս* «1.բավա-
կան է, 2.միայն, միայն թե» - bas, *նամըս* «պատիվ» - nāmūs
«1.օրենք, կանոն, 2.պատիվ, խիղճ», և այլն: Արաբերենի s
հնչյույթի՝ փոխառություններում կրած հնչյունափոխման
դեպքեր ևս չենք արձանագրել:

š - *շիրսիֆ* «պատիվ» - šaraf, *շարթ* «պայման» - šart
«պայման, պահանջ», *շահադ* «վկա» - šāhid, *շուֆուն* «վար-
սակ»- šūfān, *շբբէն* «կնքահայր, քավոր» - šabīn «1.խաչեղբայր,
2.կնքահայր», *մըշմէշ* «ծիրան» - mišmiša, *մուշլիսի* «լայն վեր-
նազգեստ» - mušlah «թիկնոց, վերարկու», *մաշրգ* «ունելի»-
mašīq, *տարբուշ /թարբուշ* «զլխարկ» - tarbūš, *հիսվըշ* «բակ» -
hawuš և այլն:

Քեսաբի խոսվածքում կիրառվող *չանթու* «լաթե պայու-
սակ» - šanta «1.պարկ, պայուսակ, 2.ճամպրուկ» բառում առկա
է š>չ հնչյունափոխություն:

ğ - *ղիսրբի* «արևմտյան հով» - ġarb «արևմուտք», *ղէր/*
ղիյր «ուրիշ» - ġayr «ուրիշ, այլ», *ղըմ* «օղի ճնշիչ՝ տաք լի-

⁸⁵Քեսաբցիները միջցյուղական մրցակցության ոգով այս անարգական
խոսքը սովոր էին հղել սվեդիացիների հասցեին (տե՛ս Անդրեասյան Տ., *նշվ.*
աշխ., էջ 168):

նելը» - ǧamm «1.վիշտ, 2.տոթ, հեղձուցիչ օդ», *ղըշ ըննիլ* «առևտրի մեջ խաբվել» - ǧašš «խաբեություն, 2.կեղծիք», ǧašša «1.խաբել, 2.կեղծել», *բաղբաղան* «թուրակ» - babbaǧā'n և այլն:

Բացառություն է ǧ>ǧ̂ հնչյունափոխությամբ *ǧ̂šš̂n̂* «ծխամորձ» - ǧalīn բառը: ǧ-ի գործածությունը հանդիպում է հիմնականում փոխառյալ բառերի բառասկզբում, իսկ բառավերջում նրա գործածություն չի դիտվում:

x - *խաբիա* «կարաս» - xāb'a, *խըշթ/ղըշտ* «նիզակ» - xušt «նիզակ, գեղարդ», *խալէս* «ազատ» - «1.մաքուր, անկեղծ, 2.ազատ», *մսիթնիւ* «կնքված, փակ» - maxtūm «1.կնիք կրող, 2.կնքված», *մասխարու* «ծաղրածու» - masxara «1.ծաղրի առարկա, 2.դիմակ», *բսիֆէխ* «սեխ» - baṣṣīḥ 'ašfar, *շէխ* «շեյխ» - šayx, *գէուխ/գուիս* «շերամ պահելու գետնահարկ շենք, որին պարզ շինվածքի համար այդպես են անվանում» - kūx «խրճիթ» և այլն:

Որպես նշված օրինաչափությունից շեղում՝ x>ղ հնչյունափոխություն արձանագրում ենք *ղըշտ* «նիզակ» - xušt բառում:

f - *ֆսլսիք* «ճակատագիր» - falak «1.երկինք, 2.ուղեծիր», *ֆլսյֆիլ վաղըտ* «պղպղելի լի, առատ ժամանակը, այսինքն՝ բերքի ամենաառատ շրջանը» - fulful (hǧn.՝ falāfil) «տաքդեղ, պղպղել», *սուֆրու* «ճաշասեղան» - sufra, *իֆտար* «նախաճաշ» - ifār, *նահիֆ* «նրբամարմին» - nahīf «նիհար», *լրհիֆ* «վերմակ» - lihāf «վերմակ, ծածկոց» և այլն:

Սվեդիայի խոսվածքում որպես բացառություններ հանդիպում ենք f>փ՝ *փուրդ* «կենտ, կրճատ» - fard «1.մեկ, միակ, 2.անձ, անհատ» և f>ք՝ *քըսվէս (ֆսսֆուս)* «փայտոջիլ, մլուկ»

- fasfasa (հվք.՝ fasfas) «փայտօջիլ, մլակ» հնչյունափոխությամբ գործածվող փոխառյալ բառերը:

h - *հավու* «օդ» - hawā', *հնիջնիւ* «հարձակում» - huġm «հարձակում, գրոհ», *մեշհուր* «հայտնի, անվանի» - mašhūr «հայտնի, անվանի, փառաբանված», *ջահիլ* «անգետ», փխբ.՝ «երիտասարդ» - jāhil «տգետ, անուս», *հիհրր* «սուգ, վիշտ» - qahra, *թանր^{ու}օհ* «զգուշացում» - tanbīh և այլն:

Արաբերենի հիշյալ հնչույթի դեպքում ունենք հ>ղ հընչյունափոխությամբ *ջնիլլ-ջուղնիլ* «ռամիկ տգետների հավաքույթ» - jāhil (հզն.՝ juhal) - «1.անքաղաքավարի, 2.հիմար, տգետ» և հ>խ հնչյունափոխությամբ *ըրխաթ* «հանգիստ» - rāḥa «հանգստություն, հանգիստ» բառերը:

Այսպիսով, ինչպես երևում է վերոնշյալ բազմաթիվ օրինակներից՝ արաբերենի շփական բաղաձայնները հայերենի տարածքային տարբերակների փոխառյալ բառերում համապատասխանում են փոխառու լեզվի համարժեք հնչյուններին: Դիտվում են հիշյալ օրինաչափությունից եզակի շեղումներ:

3. ՁՄՅՆՈՐԴՆԵՐ

Արաբերենի ռնգային m, n, կողմնային l, քմային y ձայնորդները նույնպես հայերենի հիշյալ բարբառախմբի համապատասխան հնչյունների համեմատությամբ հնչարտաբերական և գործառական յուրահատկություններ գրեթե չեն ցուցաբերում: Հարկ է նշել միայն, որ l-ն ունի ավելի փափուկ

արտասանություն, այսինքն՝ ավելի մոտ է ռուսերենի ԼԵ-ին⁸⁶: Անտիոքի հայերեն բարբառախմբի փոխառություններում սրանք բոլորն էլ նույնացել են հայերենի համապատասխան ձայնորդներին: Այսպես՝

մ - *մինսի* «նավահանգիստ» - *mīnā'*, *միրսիս* «ժառանգություն» - *mirāt*, *ջոմլա* «ամբողջը, բոլորը» - *jumla*, *դայման* «միշտ» - *dā'imān*, *լաղըմ* «ժայռեր պայթեցնելու համար գործածվող պայթուցիկ» - *lağam* «ական» և այլն:

Բացառություն է Սվեդիայի խոսվածքում գործածվող *միսքուհ* «ընդունելի, օրինավոր, շիտակ» - *masmū'* «լսելի, ընկալելի, հստակ» բառը, որում տեղի է ունեցել *m>բ* հնչյունափոխություն:

ն - *նիզամ* «կարգապահություն» - *nizām*, *նիկդի* «կաթիլ» - *nuqta*, *նադիր* «հազվագյուտ» - *nādir*, *բինա* «շենք» - *binā'*, *ինքար* «ուրացում» - *inkār*, *զէման* «ժամանակ» - *zamān*, *դայման* «միշտ» - *dā'imān*, *լէուն* «մարդու կազմվածքը» - *laun* «գույն, երանգ», *հալան* «անպատճառ» - *hālan* «1. հիմա, այժմ, 2. անմիջապես» և այլն:

Քեսաբի խոսվածքում նշված օրինաչափությունից շեղում չենք գտնում, իսկ Սվեդիայի խոսվածքում *n>մ* հնչյունափոխություն է առկա *ջամբ* «հարևանը, իր նմանը, իրեն հարմարը» - *ğānb* «կողմ, կողք» փոխառյալ բառում:

լ - *լըբու* «ապուր» - *labūs*, *լահըմ* «անագ» - *lahm* «1. գոդում, 2. գոդվածք», *ֆալակ* «ճակատագիր» - *falak* «1. երկինք, 2. ուղեծիր», *քալբ* «շուն» - *kalb*, *հալըզուն* «խխունջ» - *hālazūn*,

⁸⁶ տե՛ս Ковалев А., Шарбагов Г., նշվ աշխ., էջ 24:

Ֆըթէլ «պատրույզ» - fatīl «պատրույզ, բոնկիչ, խայծ», կֆարլ «ընդունված, ընդունելի» - qābil «1.ընդունող, դիմավորող, 2.հաջորդ», հսմըլ «ծառի՝ շատ պտուղներով բեռնված լինելը» - ḥāmīl «1.տանող, կրող, 2.բեռնակիր, 3.հղի» և այլն: 1-ի հնչյունափոխության դեպքեր հայերենի նշված բարբառային միավորներում, որքանով կարողացանք պարզել, չեն հանդիպում:

y - յարաբ «ո՛վ Աստված» - yā rabb, jūnīh «այսինքն» - yaʿnī, խայալ «ուրվական» - xayāl, ալամ «արևոտ, առանց անձրևի պարզկա օրեր» - yaum «օր», ʿal-ayyām «հիշարժան օրեր», սյնիլ «նշան առնել» - «աչք» ʿayn, ղսյր «ուրիշ, բացի» - ġayr «ուրիշ, այլ» և այլն:

Lūpūu (ըլլաբսս) «ծառերը չորացնող ախտ» - yabas «չորություն», yabās «չորացած, չոր» բառում կատարվել է y>l հնչյունափոխություն: Փոխառությունների բառակերջում y-ի կիրառության դեպքեր չեն հանդիպում:

Արաբերենի թրթռուն r ձայնորդը հնչարտաբերական հատկանիշներով նման է հայերենի թրթռուն ձայնեղ *ռ*-ին: Անտիոքի բարբառային միավորներում, որտեղ գործառում են և՛ *ռ*, և՛ *ր* հնչույթները, արաբերենի *r*-ն, հիմնականում փոխարինվել է *ր*-ով՝ գործածվելով փոխառյալ բառերի բոլոր դիրքերում. *րահուն* «ռեհան» - riḥān, *րեսմի* «պաշտոնական» - rasmī «պաշտոնական, օրինական», շըրըղ «ժապավեն» - šarīṭ, ջուրաբ «գուլպա» - jaurab, աբաղ «օղի» - ʿaraq, *իֆտար* «նախաճաշ» - ifṭār, *խումար* «բախտախաղ» - xumār, *ղամար* «գերեզման» - qabr, *ղամար* «լուսին» - qamar և այլն:

Բացառություն է Սվեդիայի խոսվածքում կիրառվող *մայիջին* «բուստե ուլունք» - *marjāna* (հվք.՝ *marjān*) «1.բուստ, մարջան, 2.մանր մարգարիտ» բառը, որում կատարվել է *r > l* հնչյունափոխություն:

Վերոնշյալ օրինակներում, ինչպես կարելի է նկատել, բառասկզբի *ր*-ն հայերենին հատուկ ձայնավորային հենարան չի ստացել: Սակայն արձանագրված են նաև *ր*-ի՝ *ը* ձայնավորային հենարանով գործածվող մի քանի բառեր. *ըրօզ/ըրօմզ* «բրինձ» - 'urz, *ըրօբ* «քառորդ» - rub', *ըրօբ/ըրօմբ* «ռուպ» - rubb «մրգահյութ, մուրաբա», *ըրիսաթ* «հանգիստ» - rāha «հանգստություն, հանգիստ» և այլն: Արաբերեն *r*-ով սկսվող այն բառերը, որոնք հայերենի հիշյալ բարբառային միավորներում արտացոլված են *ը* ձայնավորային հենարանով, ավելի հին փոխառություններ են⁸⁷: Հարկ է նշել, որ հայերենի այդ տարածքային տարբերակները բառասկզբի *ր*-ի՝ ձայնավորային հենարան ստանալու ավանդույթն արդեն կորցրել են:

Հայերենի վերոհիշյալ բարբառային միավորների արաբական փոխառություններում այդ լեզվի երկշրթնային *w* հնչյունը (արտաբերմամբ համապատասխանում է անգլերենի *w*-ին⁸⁸) և՛ բաղաձայնային, և՛ ձանորդային (երկբարբառի բաղադրիչ) դիրքերում արտահայտված է որպես շրթնատամնային *վ* բաղաձայն: Հավանաբար պատճառն այն է, որ արաբերենի երկշրթնային *w*-ն հիմնականում գործառու է որպես ձայնեղ շփական բաղաձայն, այսինքն՝ ինքնուրույն հնչյուն է. *վնզեր* «վեզիր, նախարար» - *wazīr*, *վախրթ*

⁸⁷ Չոլաքեան Յ., 2009, էջ 22:

⁸⁸ Ковалев А., Шарбатов Г., նշվ. աշխ., էջ 25:

«Ժամանակ» - waqt, *վալիա-բիլիա* «իրավ որ, Աստված վկա» - wa'allah bi'allah, *բանիսվի* «բեդվին» - badawī, *հանվու* «հավվա» - ḥalwā', *հավրը* «բակ» - ḥawāš և այլն: Փոխառություններում, սակայն, բառավերջում w-ի գործածության օրինակներ չենք գտնում:

Հատկանշական է, որ Անտիոքի բարբառախմբի տարածքային միավորները, ունենալով շրթնային *ու/լ* հնչյուններով երկբարբառներ⁸⁹, արաբերենի w երկշրթնային ձայնորդը փոխարինել են շրթնատամնային վ բաղաձայնով: Հավանաբար բաղաձայնային դիրքում w-ն արաբերենի խոսակցական տարբերակներում արտաբերությամբ մոտենում է երկշրթնային շփական ձայնեղ բաղաձայնին: Փոխառյալ բառապաշարում w>ու հնչյունափոխություն է առկա Սվեդիայի խոսվածքում գործածվող *հանլուգա/ հանլուգի* «քահանայական փակեղ» - qalwaža «պտուտակել, պտուտակով ամրացնել» բառում:

ԱՐԱԲԵՐԵՆԻ ՀԼՁՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ԲՆՈՐՈՇ ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐ

1.ՇՓԱԿԱՆՆԵՐ

Արաբերենի բաղաձայնական ենթահամակարգը, Անտիոքի բարբառախմբի համապատասխան ենթահամակարգի հետ որոշ ընդհանրություններ ցուցաբերելով հան-

⁸⁹ Չոլաբեան Յ., 2009, էջ 21, Անդրեասյան Տ., նշվ. աշխ., էջ 13:

դերձ, ունի նաև հատակորեն առանձնացող յուրահատկություններով հնչյուններ, որոնք ևս հաճախ նույնացել են հայերենի քննվող տարածքային տարբերակների՝ այս կամ այն հատկանիշով իրենց նրման հնչյուններին:

Հայերենը չունի միջատամնային ձայնեղ *d* և խուլ *t* շփականներ, որոնք հնչարտաբերական հատկանիշներով նման են անգլերենի ձայնեղ *th*-ին [ð], օր.՝ *this* «այս» և խուլ *th*-ին [θ], օր.՝ *thing* «իր, առարկա»⁹⁰: Միրիայի բարբառում *d*-ն, արտաբերմամբ պարզեցվելով, նույնացել է տվյալ համակարգի պարզ ձայնեղ շփական *z*-ին (օր.՝ գր. արաբ.՝ *dakī* «խելացի, ուշիմ», Միր. բրբ.՝ *zakī* և այլն): Հայերենի հիշյալ բարբառային միավորները, չունենալով միջատամնային նմանատիպ հնչյուն, այն փոխարինել են լեզվատամնային ձայնեղ *q*-ով, կամ գուցե Միրիայի բարբառային ձևն է արտացոլվել հայերեն քննվող տարբերակներում: Հատկանշական է, որ այս հնչույթն ունեցող փոխառյալ բառերն ընդամենը մի քանիսն են, քանի որ այն գործածության ցածր հաճախականություն ունի նաև արաբերենում. *üqün* «մուլայի աղոթք» - 'adān «աղոթքի կանչ, կոչ», *üqün qhnyhl* «üqün կանչել» - 'adān «աղոթքի (ժամի, ժամանակի) մասին հայտնել», *üqün* «տառապանք» - 'adāb «տառապանք, տանջանք»: *d*-ի հնչյունափոխությամբ փոխառություններ չեն հանդիպում:

Արաբերենի միջատամնային խուլ շփական *t* բաղաձայնն իր արտասանական հատկությունը պահպանում է գրական արաբերենի որոշ, օրինակ՝ իրաքյան, բայց ոչ սիրիալիբանանյան, եգիպտական տարբերակներում: Վերջին-

⁹⁰ Ковалев А., Шарбагов Г., նշվ. աշխ., էջ 22:

ներում դրա փոխարեն հաճախ արտասանվում է միջատամնային խուլ t հպականը կամ միջատամնային s շփականը⁹¹: Այս բաղաձայնը գործառվում է բառի բոլոր դիրքերում, սակայն բառապաշարում այն ևս ունի գործածության ցածր հաճախականություն: Միրիայի բարբառում այն վերածվել է ատամնային պայթական շնչեղ խուլ t-ի (օր.՝ գր. արաբ.՝ *talj* «ձյուն», Միր. բրբ.՝ *taləž* և այլն): Քեսաբի խոսվածքում, որի բառապաշարում արաբական փոխառությունները բազմաթիվ են, այդ հնչույթը հանդիպում է ընդամենը մի քանի բառում: Ընդ որում, բառակզբում և բառավերջում՝ բաղաձայնից հետո, համապատասխանում է *թ-ին՝ թ^tօլթ* «մեկ երրորդ» - *talē*, իսկ միջձայնավորային դիրքում և բառավերջում՝ ձայնավորից հետո՝ *ս-ին. միսսիլ* «1.օրինակ, 2.առակ, զրույց» - *matal* «1.օրինակ, նմուշ, 2.նմանություն, 3.ասացվածք, առակ», *միսսիս* «ժառանգություն» - *mirāē*: Սվեդիայի խոսվածքում միայն մեկ բառ է արձանագրված՝ *թ^tնիթ* «մեկ երրորդ» - *talē*:

Արաբերենի խոչակային խուլ շփական հ-ն Անտիոքի բարբառային միավորներում փոխարինվել է հիմնականում հայերենի կոկորդային խուլ շփական *h-* ով և գործածվում է փոխառյալ բառերի բոլոր դիրքերում. *h^mօլ^h* «իրավունք» - *haqq*, *հիսվրշ/հուշ* «բակ» - *hawuš*, *մահրում* «զուրկ, զրկված» - *mahrūm*, *լրհիֆ* «վերմակ» - *lihāf* «վերմակ, ծածկոց», *թշսրիս* «համրիչ» - *tasbīh* «1.փառաբանում, դրվատում, 2.տերողորմյա, համրիչ», *միսշիս* «ողջ մարմինը ծածկող արաբա-

⁹¹ Шагалъ В., նշվ. աշխ., էջ 96:

կան վերարկու» - mašlah «թիկնոց, վերարկու»: Իսկ բառամիջում և բառավերջում հ-ն մի քանի փոխառություններում համապատասխանում է հայերենի փափկաքիմքային *խ* խուլ շփականին, այսինքն՝ տեղի է ունեցել հ>խ հնչյունափոխություն. *մսխրանու* «դատարան» - mahkama, *մուշլսիխ/ մուշլսի* «լայն վերնագգեստ» - mašlah «թիկնոց, վերարկու», *իֆլսիսիլ* «բախտավորվել, հաջողություն ունենալ» - 'iflāh «1.հաջողություն ունենալը, 2.բախտավորվելը» և այլն: Միրիայի բարբառում հ-ն պահպանվել է, ինչպես՝ mahkame, mašlah և այլն:

Ուշագրավ է, որ առավել մեծ թիվ են կազմում հ հնչույթ ունեցող փոխառյալ բառերը, մինչդեռ հ հնչույթով, որն արտաբերական հատկանիշներով հայերենի հ-ին ավելի մոտ է, փոխառությունները բավական սակավաթիվ են:

2.ՈՒԺԳԻՆ ԱՐՏԱԲԵՐՄԱՆ (ԷՄՖԱՏԻԿ) ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐ

Արաբերենի ժ, ֆ, չ, Տ բաղաձայնների շարքը բնութագրվում է որպես վերատամնային, ուժգին արտասանության (էմֆատիկ), ցածր տոնայնությամբ հնչյուններ⁹², որոնք Միրիայի բարբառում հիմնականում պահպանվել են (օր.՝ *darba* «հարված» - *darbe*, *tāqīa* «զլխարկ» - *tā'īe*, *šahīh* «իրավ, իսկապես» - *šahi* և այլն):

Չայնեղ ժ հպականը Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակներում բառասկզբում ձայնավորից առաջ և միջձայնավորային դիրքերում համապատասխա-

⁹² Юшманов Н., 1938, էջ 8:

նում է *դ-ին*. *դաղըթ* «ճընշում» - dağt «1.ճնշում, 2.սեղմում», *դարբա* «հարված» - darba, *կադա* «դատավոր» - qaḏāin, *հանդեր* «պատրաստ» - hādīr «1.ներկա, 2.ընթացիկ, 3.պատրաստ, կանխիկ», *հըրդեմի* «խարկած սիսեռ» - quḏāma «լավ տապալած, կարմրացրած սիսեռ» և այլն: Բաղաձայնից առաջ այն համապատասխանում է *զ-ին*, որը, սակայն, հազվադեպ է հանդիպում. *հսզվ* «մարտություն» - haḏm, *ֆըզիլ* «կոտորել, ջախջախել» - faḏa «դատարկել, ազատել, ազատվել (ինչ-որ բանից)»:

Խուլ Է հպականը փոխառյալ բառերում հիմնականում վերածվել է շնչեղ խուլ թ հպականի. *թաբ^ռոկ* «պնակ» - tabaq, *բարթել* «կաշառք» - bartīl, *իֆթար* «նախաճաշ» - iftār, *շարթ* «պայման» - šart «պայման, պահանջ» և այլն:

Կան նաև Է>տ հնչյունափոխությամբ բառեր՝ *տարբուշ/թարբուշ* «գլխարկ»-tarbūš գուգաձևությունը, *նուկնտա* «կետ» nuqta, *տակա* «գլխի ծածկոց, ֆես, գդակ» - taqā «գլխարկ», *իֆ-տար* «նախաճաշ» - iftār, *շարմուտա* «անբարոյական կին» - šarmūta «1.լաթի կտոր, 2.մարմնավաճառուհի» և այլն (բառավերջում դրա գործածության օրինակ, սակայն, չգտանք): Մի քանի բառերում առկա է Է>դ անցում. *դակըմ* «1.մի ձեռք հագուստ, 2.ատամնաշար» - taqm «1.լրակազմ, 2.կոստյում» (taqm al-'asnān «արհեստական ատամնաշար»), *նիկդի* «կաթիլ» - nuqta, *շըրըդ* «ժապավեն» - šarīt: Ուշագրավ է, որ փոխառությունների մեծ մասում տեղի է ունեցել Է>թ հնչյունափոխություն:

Ինչ վերաբերում է ձայնեղ չ շփականին, ապա Միրիայի բարբառում վերջինիս հատուկ է ինչպես պահպանումը, օր.՝ *nizām* - Միր. բրբ.՝ *nizām* «կարգապահություն», այնպես էլ չ>ձ հնչյունափոխությունը, օր.՝ *nažar* >*nađar* «1.տեսողություն, 2.հայացք»: Հիշյալ փոխառություններում չ-ն հանդիպում է միայն բառամիջում, այն էլ՝ մի քանի բառում և արտասանությանը պարզեցվելով՝ նույնացել է հայերենի *q*-ին. *նազար* «նայվածք» - *nažar* «1.տեսողություն, 2.հայացք», *նիզամ* «կարգապահություն» - *nizām*, *նիզամի* «կանոնավոր» - *nizāmī* «1.կարգուկանոնին վերաբերող, 2.կանոնավոր», *հնչյունա/հնչյունազգի* «քահանայական փակեղ» - *qalwaža* «պտուտակել, պտուտակով ամրացնել» բայից, *qalāwz* «պտուտակ»:

Այս շարքի վերջին հնչյունը՝ խուլ *š* շփականը, նույնացել է հայերենի *u*-ին, առկա է արաբերենից փոխառյալ բառերի բոլոր դիրքերում. *սահի* «իրավ» - *šahi*, *սուֆաստ* «պատկեր» - *šifa* «յուրահատկություն, որակ», *մախսուս* «մասնավոր» - *maxšūš* «հատուկ, յուրահատուկ», *ուսուլ u-ին*. *ֆասլ* «կարճ ժամանակում» - *fašl* «1.մաս, բաժանմունք, 2.տարվա եղանակ», *թասղըն*՝ «1.փաստ, 2.փաստացի» - *tašdiq* «1.հավատ, 2.հաստատում» և այլն:

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ հարկ է նշել, որ արաբերենի ուժգին արտաբերման (եմֆատիկ) բաղաձայնները ևս Անտիոքի բարբառախմբի փոխառյալ բառերում հիմնականում նույնացել են մեկ կամ ավելի հատկանիշներով իրենց նման հնչյուններին:

3. «ԲԱՐԴ» ԱՐՏԱԲԵՐՄԱՆ ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐ

Գրական արաբերենում գործածվում են նաև զ (կաֆ), ‘ (այն) և ’ (համգա) բաղաձայնները, որոնք հայերենին խորթ են հնչարտաբերական իրենց գրեթե բոլոր հատկանիշներով:

Խոր հետքիմքային, խուլ հպական զ բաղաձայնն արտաբերվում է որոշակի ուժգնությամբ և արտաբերական ապարատի լարումով: Այն արաբերենի բաղաձայնական ենթահամակարգի միջքիմքային k-ից տարբերվում է արտաբերման տեղով, լարվածության առկայությամբ և շնչեղության բացակայությամբ: Հատկանշական է, որ զ -ն, լինելով գուտ գրական արաբերենի հնչյուն, ունենալով գործածության բարձր հաճախականություն և կիրառվելով հատկապես մտավորականների խոսքում⁹³, արաբերենի խոսակցական տարբերակներում և բարբառներում փոխարինվել է ’-ով (համգա): Հմմ.՝ գրակ. արաբ.՝ qatqat «ժլատ» - Միր. բրբ.՝ ‘at’at, գրակ.՝ fauqa «վերևում» - բրբ.՝ fō’ և այլն:

Ուշագրավ է, սակայն, որ այն փոխառությունների միջոցով հնչարտաբերական գրեթե նույն հատկանիշներով ժամանակի ընթացքում սկսել է ի հայտ գալ նաև Անտիոքի տարածքային տարբերակներում⁹⁴: Ընդ որում, ունի գործածու-

⁹³ Шагалъ В., նշվ. աշխ., էջ 59:

⁹⁴Ըստ Հ. Չոլաքյանի՝ այն Քեսաբի խոսվածքում պահպանվել է որպես խուլ հպական *q*՝ հնչյուն: Սակայն Անտիոքի բարբառային միավորների մյուս հետազոտողները (Տ. Անդրեասյան, Ա.Փաշայան, Գ.Հանանյան և այլք) փոխառյալ այդ հնչյունը ներկայացնում են որպես ձայնեղ շփական *q*՝: Մինչդեռ Հ. Չոլաքյանն այդպես տառադարձում է Քեսաբի խոսվածքում մի քանի բառերով վկայված մեկ այլ հնչյուն՝ այն-ը (‘), որը նշված հեղինակները որևէ ձևով չեն առանձնացնում: Հ.Աճառյանն էլ, թվարկելով

թյան բարձր հաճախականություն և կիրառվում է փոխառյալ բառերի բոլոր դիրքերում. *հարար/հարար* «որոշում» - qarār «որոշում, բնորոշում», *համար* «լուսին» - qamar, *ինթիկամ* «վրեժ» - intiqām, *թասդըկ* «1.փաստ, 2.փաստացի» - taşdıq «1.հավատ, 2.հաստատում, 3.վավերացում», *արահ* «օրի» - ‘araq, *տակա* «զիլի ծածկոց, ֆես, գդակ» - tākā «զվխարկ»: Հատկանշական է, սակայն, որ օտար այս հնչյունը, ամրանալով Անտիոքի հայերեն բարբառախմբի հնչյունական համակարգերում, սկսել է ի հայտ գալ նաև հայերեն բառերում՝ փոխարինելով հետքիմքային խուլ *կ*-ին, որը ծագում է հինհայերենյան *q*-ից. *կըմիլ* «գտնել», *ակրուվ* «ագռավ», *կըլօխ/կըլօխ* «զուլխ», *կուրծ* «գործ», *կըրզիլի* «գործելի», *կուրտ* «գորտ», *կըմեմ* «գտանեմ» և այլն: Բացի այդ, առկա է նաև հենց հայերենի *կ*-ից բխող *կ>կ* անցում. *կարկանջ* < կարկաչ, *կըրդիմ* < կտրեմ⁹⁵ և այլն: Արաբերենից փոխառյալ *կ*-ն, մինչդեռ, ինչ-

Սվեդիայի բարբառի արաբական կամ թուրքական փոխառությունները, այն տառադարձում է որպես *ղ* (Աճառյան Հ., 2003, էջ 352): Այս հնչյունի տառադարձումն օրինակներում ներկայացնում ենք ըստ բնագրերի:

Ընդհանրապես, հայերեն բարբառների փոխառություններում *կաֆը* (զ) չունի միատեսակ արտահայտում: Արաբախոս տարածքների հայերեն խոսվածքներում այն ունի արաբերենին մոտ արտասանություն և տառադարձվում է խուլ *կ-ով* կամ ձայնեղ *հ-ով*, իսկ մյուսներում նույնանում է հայերեն *կ*, *ղ*, երբեմն՝ *խ* հնչյուններին: Դա առաջին հերթին, գուցե, պայմանավորված է կաֆի (զ-ի) արտաբերման տեղով (խոր հետքիմքային), որը միջին դիրք է գրավում հետնալեզվային *կ*-ի և փափկաքիմքային *ղ*-ի, *խ*-ի միջև:

⁹⁵տե՛ս Չոլաքեան Յ., 2009, էջ 24, 212-214, Հանանյան Գ., նշվ. աշխ., էջ 17, Անդրեասյան Տ., նշվ. աշխ., էջ 12:

պես երևում է *կըլօխ/կըլօխ*, սանսող/խ/կ *«սանդուղք»*, *կըրտիւ/գըրդիւ* «կտրեմ», *մընջըկ^հէկ^հ/մընճըդ^հէդ* «մժեդ» և այլ գուգաձևություններից, ինքնուրույն հնչույթ չէ և համապատասխան բաղաձայնների հետ հնչութային հակադրություն չի ստեղծում:

Փոխառյալ բառերում նկատվում են գ-ի հնչյունափոխման հետևյալ դեպքերը՝ գ>զ՝ *հնլ^աօզ* «օղակ»-հալազ, *ւնլ^աւզ* «անասունների կեր, մանավանդ չոր տեսակը» -‘ալազ և գ>խ՝ *խուռնու* «անկյուն» - qurna, *վախըթ* «ժամանակ» - waqt:

Այսպիսով՝ թեև Անտիոքի բարբառախմբում առկա է *կ* բաղաձայն հնչույթը, սակայն արաբերենից փոխառյալ բառերում գործածվում է *կ^հ*-ն (զ): Ավելին, մեր լսողական ընկալմամբ, օրինակ՝ Քեսաբի խոսվածքին նվիրված ձայնագրություններում, նաև կենդանի խոսքի հայերեն բառերում հաճախ նկատելի է հայերենի *կ*-ն արաբերենի գ հնչույթով փոխարինելու միտում:

Ինչպես վերը նշեցինք, արաբերենի մի շարք բարբառներում, այդ թվում նաև՝ Սիրիայի, գ-ն փոխարինվել է մեկ այլ բաղաձայնով՝ համզայով (?)⁹⁶:

Համզան խոչակային խուլ հպական բաղաձայն է, որի արտասանության ժամանակ ձայնալարերը միմյանց հպվում և օդի հոսանքի ուժգին արտամղումով բացվում են: Համզայի յուրահատկություններից մեկն այն է, որ խոսքի շղթայում հայտնվելով երկու համանման ձայնավորների միջև՝ սղվում

⁹⁶ Шагалъ В., նշվ. աշխ., էջ 59-60:

է՝ առաջացնելով *ā* երկար ձայնավորը⁹⁷: Միրիայի բարբառում համզան ավելի հաճախ առկա է բառասկզբում և բառավերջում, օր.՝ *ʿab* «հայր»: Ինչ վերաբերում է Անտիոքի բարբառախմբի փոխառություններին, ապա դրանցում այս հնչյունը գրությանը նույնությանը չի պահպանվել. *masal* «կանոն, կարգ» - *ʿasāl*, *masal* «բրինձ» - *ʿurz*, *masāl* «հարց» - *masʿala*, *binā* «շենք» - *bināʿ* և այլն: Միջձայնավորային դիրքում և՛ Անտիոքի, և՛ Միրիայի բարբառներում դրա փոխարեն *j* կիսաձայնն է ի հայտ գալիս, որը կարելի է համարել ոչ թե *ʿj* հնչյունափոխություն, այլ համզայի անկումով պայմանավորված, ձայնավորների միջև առաջացած հորանջից խուսափելու համար գործածվող հնչյուն, ինչպես՝ *hasal* «դավաճան, նենգամիտ» - *xāʿin*, Միր. բրբ.՝ *xayen*, *hasal* «միշտ» - *dāʿiman* և այլն:

Արաբերենից փոխառյալ մյուս բաղաձայն հնչյունը՝ *ḥ*-ն, կոկորդային ձայնեղ շփական *ʿ*-ն է (այն)⁹⁸: Հնչարտաբերական հատկանիշներով այն արաբերենի ամենաբարդ հրնչյունն է. նրա արտաբերման ընթացքում խոչակի մկանները լարված են և կիպ հպվում են միմյանց: Հպումը ջղակծկումային բնույթ ունի: Դադարից հետո տեղի է ունենում մկանների ակնթարթային թուլացում, և օդի դուրս մղումով՝ ձայնալարերը թրթռում են, որի հետևանքով այս հնչյունը արտաբերվում է որպես ձայնեղ բաղաձայն: Գրական արաբերենում և Միրիայի բարբառում *ʿ*-ը առկա է բառի բոլոր դիրքերում, իսկ Անտիոքի բարբառախմբի Քեսարի խոսվածքում, օրինակ,

⁹⁷Карабекян С., "О некоторых просодических универсалиях в сете данных арабской фонологии", Вопросы арабистики, в. 4, ч. 2, Е., 2001, էջ 3-13:

⁹⁸ Չոլարեան Յ., 2009, էջ 16:

պահպանվել է միայն բառամիջում. *մահդու* «ստամոքս» - ma'ida, *մահլում* «իրավ որ, այդպես է» - ma'lūm «1.հայտնի, 2.իհարկե, անկասկած», *նահնա* «անանուխ» - na'na' և այլն: Արաբերենում բառակազմում և բառավերջում գործածվող 'ը Քեսաբի խոսվածքի փոխառություններում չի պահպանվել. *անլում* «մարդկություն» - 'alam, *իլաջ* «դեղ» - 'ilāj, *ուլծոր* «տասանորդ (տուրք)» - 'uṣr, *բաղբուն* «կանխավճար» - 'rbūn «կանխավըճար», *ըբօբ* «քառորդ» - rub', *կըտ* «քիչ, հազվագյուտ» - qit' «մաս, կտոր»: Մեկ բառում տեղի է ունեցել ' > *կ* հնչյունափոխություն. *կանգաբ* «տառապանք» - 'adāb «տառապանք, տանջանք»: Ինչ վերաբերում է Սվեդիայի խոսվածքին, ապա այստեղ ' -ի գրային, հետևաբար նաև դրանից բխող արտասանական տարբերակվածություն չի առանձնացվում. *անգուբ* «ամուրի» - 'azab «1.չամուսնացած, 2.ամուրի», *անյիլ* «նշան առնել, աչքադրել» - «աչք» 'ayn, *բունն* «մի քիչ հետո» - ba'dama «այն բանից հետո, երբ», *լալահլիլ* «անզգա, մարած»-la 'al-'aql, բառացի՝ «խելք չկա», *լնբետ* «սրածայր փայտ, որով խաղում են» - la'ba «1.խաղ, 2.հնարք»: Մեկ բառում տեղի է ունեցել ' > *հ* անցում. *մասբուհ* «ընդունելի, օրինավոր, շիտակ» - masmū' «լսելի, ընկալելի, հստակ»:

'ի հնչյունափոխության մասին Սվեդիայի խոսվածքին նվիրված իր ուսումնասիրության մեջ հիշատակում է

Հ.Աճառյանը՝ նշելով, որ փոխառյալ մի շարք բառերում՝ Եր հնչյունափոխվում է *ղ*-ի⁹⁹:

՝>*ղ* հնչյունափոխությամբ փոխառյալ բառեր են՝ *սւն-ղւնթ* «ժամ, ժամացույց» - *sā'a*, *բըղղիլ* «կուլ տալ» - *bala'a*, *նաղ-նաղ* «անանուխ» *na'na'* և այլն:

4. ՏԵՎԱԿԱՆ ԱՐՏԱԲԵՐՄԱՆ ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐ

Արաբերենի բաղաձայնական համակարգում գործառուում են նաև տևական հնչյուններ, որոնք արտահայտվում են բաղաձայնների կրկնությամբ: Դրանք Անտիոքի բարբառախմբի արաբական փոխառություններում հիմնականում արտացոլված են որպես այդպիսիք, քանի որ հայերենի տարածքային այս տարբերակներին նույնպես հատուկ է բաղաձայնների տևական արտասանությունը¹⁰⁰ (ինչպես՝ *կիծ^mօկ* «կայծակ», *հիլի* «հայելի», *հեզիլ* «հազալ» և այլն). այն բացատրվում է հենց արաբերենի ազդեցությամբ¹⁰¹: Խնդրո առարկա խոսվածքներում գործածվող փոխառյալ բառերից են՝ *կուբա* «զմբեր» - *qubba*, *սմնի* «1.հորեղբայր, 2.կնոջ հայր, 3.տարեց մարդկանց կոչական դիմելաձև» -*'amm*, *իլի* «մասնավորապես, բացի» - *'illā* «1.երե ոչ, 2.բացի, բացառությամբ», *այա* «արևոտ, առանց անձրևի պարզկա օրեր» - *yaum* «օր», *'al-*

⁹⁹ Աճառյան Հ., 2003, էջ 353:

¹⁰⁰ տե՛ս Բնճեճիքեան Ս. Ա., նշվ. աշխ., էջ 117, Չոլաքեան Յ., 2009, էջ 57,

Անդրեասյան Ս., նշվ. աշխ. էջ 36:

¹⁰¹ Քյուփեյյան Հ., նշվ. աշխ., էջ 56:

ayyām «հիշարժան օրեր», *ղըմ̄* «օղի ճնշող՝ տաք լինելը» - ḡamm «1.վիշտ, 2.տոթ, հեղձուցիչ օդ», *մըր̄* «լեղի, դառնություն» - murr «դառը, լեղի, դառնահամ», *բըճուղ̄* «խխունջ» - bazzāqa «1.թքաման, 2.լորձնեակ, կակղամաշկ կենդանի», *բըր̄* «վայրի» - barrī «1.ցամաքային, 2.վայրի (օր.՝ կենդանի)», *դըբուրա* «խոշոր մուրճ (կվալտ)» - dabbura «մուրճ, փոքր մուրճ», և այլն:

Մի շարք բառերում, սակայն, բաղաձայնների տևակա-նությունը չի պահպանվում. *յարաբ* «ո՛վ Աստված» - yā rabb, *հանըրիլ* «պատրաստել» - haḏḏara, *ջընըզիլ* «քթի տակ տխուր երգեր մոմալ» - ḡannaza «ննջեցյալի հուղարկավորու-թյունը կատարել, թաղել», *շակ̄* «շերտ, ճեղք» - šaqq «1.ճեղք, ծերպ, 2.կես, մաս» և այլն:

Կան նաև փոխառյալ այնպիսի բառեր, որոնք, ընդհա-կառակը, արաբերեն տարբերակում չունեն տևական արտա-սանությամբ բաղաձայն, սակայն խոսվածքներում փոխառվել են բաղաձայնների կրկնությամբ. *ղըբ̄նիլ* «երկար հագուստը ծալելով կարճացնել և կարել» - ḡabana «1.խաբել, 2.կարելով կարճացնել (հագուստը)», *լըբ̄սս* «ծառերը չորացնող ախտ» - yabas «չորություն», yabās «չորացած, չոր», *լըբ̄ետ* «սրածայր փայտ, որով խաղում են» - laʿba «1.խաղ, 2.հնարք» և այլն:

Այսինքն, ինչպես կարելի է նկատել վերը բերված օրի-նակներից, բաղաձայնների տևական արտահայտումը կամ դրա բացակայությունն Անտիոքի բարբառախմբի տարածքա-յին տարբերակների փոխառյալ բառերում հետևողականորեն

և օրինաչափ չի դրսևորվել, ինչպես նաև ընդգրկում է արաբերենից փոխառված սակավաթիվ բառային միավորներ:

5. ԴԻՐՔԱՅԻՆ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑԱԿԱՆ ՀԼՅՑՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակների՝ արաբերենից փոխառված բառերի շարքում գտնում ենք դիրքային և փոխազդեցական հնչյունափոխության եզակի դրսևորումներ:

Դիրքային հնչյունափոխություն.

1. Դրափոխություն. $\dot{g}>l$ ՝ շըլղիլ «զբաղվել, ուշանալ» - šuġl («զբաղմունք, գործ»), $h>(r>l)$ լ միհլիմ «սպեղանի» - marhām

2. Հնչյունի հավելում.

ա) Բառասկզբի հնչյունի հավելում. l -ի հավելում՝ $rl̄noq/rl̄nam$ «բրինձ» - 'urz, $rl̄rop$ «քառորդ» - rub', $rl̄rop/rl̄nam$ «ռուպ» - rubb «մրգահյութ, մուրաբա», $rl̄ulim$ «վայելույ» - šālih «1.լավ, բարի, 2.պատվարժան»:

բ) Բառավերջի հնչյունի հավելում. h -ի հավելում՝ $ml̄im$ «ընդունելի, օրինավոր, շիտակ» - masmū' «լսելի, ընկալելի, հստակ»

3. Բառավերջի հնչյունի անկում. ա) h -ի անկում՝ $mal̄am$ «ձվ Աստված» - yā 'al-lah, $mal̄am$ «Աստված» - 'al-lah, $mal̄am$ «եթե Տերը կամենա» - 'in šā' 'al-lah, $mal̄am$ «իրավ որ, ճշմարիտ» - wa' 'al-lah, «Աստված վկա», $mal̄am-mal̄am$ «իրավ որ, Աստված վկա» - wa 'al-lah bi' al-lah «Աստված վկա»:

բ) հ-ի անկում՝ *սահի* «իրավ» - sahīh:

գ) ո -ի անկում՝ *մարհաբա* «բարև» - marhaban, *իհալի* «ծողովուրդ» - 'ahālin:

Փոխազդեցական հնչյունափոխություն.

1. Առնմանություն. *իսան* «մարդ» - insān:

2. Ամփոփում. *բումի* «մի քիչ հետո» - ba'dama «այն բանից հետո, երբ»:

Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակներում գործածվող փոխառյալ բառերում բաղաձայնների հնչյունափոխության օրինակները, հիմնականում, որքանով կարողացել ենք պարզել, սահմանափակվում են վերոնշյալներով:

ՀԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԴՐՄԵՎՈՐՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անտիոքի հայերեն բարբառախմբի խոսվածքների՝ արաբերենից կատարված փոխառություններում ձայնավորների կրած պատմական հնչյունափոխությունները, ի տարբերություն բաղաձայնների, որոնք, ինչպես վերը նշվեց, ավելի շատ ընդհանրություններ են ցուցաբերում փոխատու լեզվի բաղաձայնական ենթահամակարգի հետ, տարաբնույթ են. այստեղ ի հայտ են գալիս բազմազան յուրահատկություններ, որոնք հաճախ միևնույն հետևողականությամբ չեն արտահայտվում: Հայերենի տարածքային այս տարբերակներին (Քեսաբ-Սվեդիայի, Բեյլանի) նվիրված հետազոտություններում փոխառությունների միջոցով արձանագրված

արաբերենի ձայնավորները, ինչպես մեր ուսումնասիրությանն է ցույց տալիս, հաճախ ենթարկվել են տվյալ խոսվածքին բնորոշ պատմական հնչյունափոխությանը: Ընդհանրապես, արաբերենի և հայերեն հիշյալ բարբառների հնչյունական և հատկապես ձայնավորային ենթահամակարգերը, որոշ ընդհանրություններով հանդերձ, ունեն էական տարբերություններ:

Գրական արաբերենի ձայնավորներն երեքն են՝ կարճ և երկար տարբերակներով՝ *a, i, u, ā, ī, ū*¹⁰²: Կարճ ձայնավորները, կարելի է ասել, հնչարտաբերական իրենց հիմնական հատկանիշներով նման են հայերենի համապատասխանաբար միջին շարքի ստորին բարձրացման *ա*, հետին շարքի վերին բարձրացման *ու* և առաջին շարքի վերին բարձրացման *ի* պարզ հնչյուններին: Իսկ երկարները կարճերից տարբերվում են միայն իրենց տևականությամբ. նրանց համեմատ ունեն գրեթե երկու անգամ ավելի երկար տևողություն¹⁰³: Ուշագրավ է նաև, որ գրային արտահայտում ունեն միայն երկար ձայնավորները, իսկ կարճերն անհրաժեշտության դեպքում արտահայտվում են տողի վերևում և ներքևում դրվող նշանների՝ *ձայնանիշերի* (*haraka*) միջոցով:

Գրական արաբերենն ունի նաև երկու իջնող երկբարբառ՝ *aw* և *ay*, որոնք կազմավորվում են «...խոսքում կոնկրետ դիրքով պայմանավորված, հիմնականում փակ վանկում ձևավորվող հնչյունների համադրության հետևանքով»¹⁰⁴: Այսինքն՝ այդ երկբարբառներն առաջանում են այսօր էլ շատ լեզուներում գործառող արտասանական նորմերի թե-

¹⁰² Юшманов Н., 1938, էջ 10:

¹⁰³ Ковалев А., Шарбагов Г., նշվ. աշխ., էջ 14:

¹⁰⁴ Шарбагов Г., Современный арабский язык, М., 1961, էջ 17:

լադրանքով, երբ միևնույն վանկում կողք կողքի հայտնվում են երկու տարբեր որակի ձայնավորներ կամ էլ առկա է ձայնավոր+ձայնորդ համադրություն:

Ի տարբերություն գրական լեզվի՝ արաբերենի տարածքային տարբերակների ձայնավորային ենթահամակարգերն աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ: Դրանցում հիմնականում գործառում են նաև հետին շարքի միջին բարձրացման կարճ *o* և երկար *ō*, միջին շարքի միջին բարձրացման *e* և *ē* ձայնավորներ, ինչպես նաև բարձրացող երկբարբառ՝ *uē*¹⁰⁵:

Միրիայի բարբառում, որի միջավայրում դարեր շարունակ գոյատևում են Անտիոքի հայերեն բարբառախմբի խոսվածքների կրողները, գործառում են նշված հինգ ձայնավորները՝ իրենց կարճ ու երկար տարբերակներով, երկբարբառները, ինչպես նաև միջին շարքի ստորին բարձրացման կարճ *ə* հնչյունը¹⁰⁶: Այս հնչյունափոխություններն առաջացել են արաբերենի պատմական զարգացման ընթացքում, և այսօր խոսակցական, բարբառային տարբերակներին բնորոշ է, օրինակ, գրականի ստորին բարձրացման *a*-ի փոխարեն նաև առաջին շարքի վերին և միջին շարքի միջին բարձրացման ձայնավոր-ների (*i*, *e*) գործածումը: Բարբառներն էլ՝ որպես արաբերենի տարածքային տարբերակներ, բնականաբար, հաճախ ազդում են գրական լեզվի վրա՝ փոխելով ընդունված արտասանական նորմերը¹⁰⁷: Այսպես՝ «...նկատվում է կարճ *a*

¹⁰⁵ Шагалъ В., նշվ. աշխ., էջ 5, Шарбатов Г., նշվ. աշխ., էջ 17:

¹⁰⁶М. W. Cowell, A reference Grammar of Syrian Arabic with audio CD, W., 2005, էջ 2, Эль-Массарани М., Сегаль В., Арабско-русский словарь сирийского диалекта, М., 1978, էջ 19-20:

¹⁰⁷Шагалъ В., նշվ. աշխ., էջ 97:

ձայնավորը ս և i ձայնավորներով փոխարինելու միտում, որը հանգեցնում է բառի, այսպես կոչված, հնչյունային տարբերակների առաջացմանը. *Լայնա-Լայնա (Իրաքի բրբ.)*»¹⁰⁸:

Արաբերենի ձայնավորների որակի դրսևորումը հայերենի դիտարկվող տարածքային տարբերակներում հիմնականում պայմանավորված է հնչաշղթայում նրանց զբաղեցրած դիրքով: Այսինքն՝ այս պարագայում կարևորվում է այդ ձայնավորներին հարող բաղաձայնների բնույթը: Հիմնականում դիտվում են հետևյալ օրինաչափությունները. երկար ձայնավորները կայուն են, պահպանում են մաքուր, բայց կարճ արտասանությունը, իսկ կարճերը թույլ արտասանվելու հետևանքով հաճախ օ արտաբերվելու միտում ունեն: Գործում են նաև փոխազդեցական հնչյունափոխության կոնկրետ օրենքներ:

Արաբագիտության մեջ «կոշտ» համարվող բաղաձայնների (q, g, d, t, z, s, x) հարևանությամբ, օրինակ, հետևալեզվային, ստորին բարձրացման a-ն (ֆաթհա) մնում է անփոփոխ, վերին բարձրացման, շրթնային u-ն (դամմա) արտասանությամբ մոտենում է միջին բարձրացման o-ին, իսկ վերին բարձրացման i-ն (քասրա) նմանվում է ռուսերենի ы-ին: «Փափուկ» բաղաձայնները (նշվածներից բացի մյուս բոլորը «փափուկ» են համարվում) ազդում են միայն հետևալեզվային a-ի վրա, որը դրանց հարևանությամբ ձեռք է բերում միջնալեզվային արտաբերություն՝ [e]: Իսկ բառում տարբեր

¹⁰⁸ Նույն տեղում:

բնույթի՝ «կոշտ» և «փափուկ» բաղաձայնների առկայության դեպքում գործում է «կոշտերի» ազդեցության օրենքը¹⁰⁹:

Դիտարկվող բարբառախմբի հայերեն խոսվածքների ձայնավորային ենթահամակարգերը ոչ միայն գրական արաբերենի, այլ նաև վերջինիս բարբառների համեմատությամբ ավելի հարուստ են և՛ պարզ ձայնավորներով, և՛ երկբարբառներով, և՛ հետին շարքի ձայնավորների քմային՝ առաջնալեզվային տարբերակներով: Այստեղ, սակայն, գրեթե չկան տևական (երկար) ձայնավորներ, իսկ խոսվածքների նույնատիպ հնչյունները հնչարտաբերական հատկանիշներով էական տարբերություններ չեն ցուցաբերում:

Քեսաբի խոսվածքը գրական հայերենի (արևելահայերենի կամ արևմտահայերենի) վեց պարզ ձայնավորներից (*h, t, w, p, nL, o*) բացի ունի նաև հետնալեզվայինների առաջնալեզվային, այսինքն՝ քմային տարբերակներ՝ *ú, úú, ö, úú*, նաև՝ *p*-ի առաջընթաց արտաբերությամբ փակ *p*, իսկ *h*-ի հետընթաց արտաբերությամբ՝ բաց *h*:

Խոսվածքում գործածվում են նաև բարձրացող՝ *t^o, h^t, m^o* և իջնող՝ *t^h, h^v, o^v* երկբարբառները¹¹⁰:

Սվեդիայի տարածքի խոսվածքներում (Խտրբեկ, Քաբուսիե, Յողուն-Օլուկ) գործառում են կարճ՝ *u, t, p, h, nL, úú, ö, úú* և երկար *n̄L, úú, t̄, ō* ձայնավորները¹¹¹: Առկա են միայն իջնող երկբարբառներ՝ *o^m, w^m, tⁿ, o^v, úú, w, úúⁿ, t̄ⁿ, t̄^v*:

¹⁰⁹տե՛ս Юшманов Н. В., Грамматика литературного арабского азыка, М., 1985, էջ 32:

¹¹⁰Չոլաքեան Յ., 2009, էջ 15-28, Փաշայան Ա., նշվ. աշխ., էջ 17-19:

¹¹¹ Հանանյան Գ., նշվ. աշխ., էջ 21:

Տեսական ձայնավորի կիրառությունը բնորոշ է միայն այս խոսվածքներին և ունի քերականական նշանակություն՝ առաջանում է գոյականի առկայացման ժամանակ. բառի վերջին փակ վանկի ձայնավորը, որակը պահպանելով կամ հնչյունափոխվելով, դառնում է տեսական, որը, փաստորեն, որոշյալության հատկանիշ է, ինչպես՝ *զընսիգ-զընսի* «կին-կինը», *ջանջ-ջոնջ*, «*ճանճ - ճանճը*», *պըգ - պլ* «*բակ-բակը*»¹¹²:

Ուշագրավ է, որ Սվեդիայի խոսվածքի ձայնավորական ենթահամակարգում միջին բարձրացման շրթնային կարճ օ-ն բացակայում է այն դեպքում, երբ այդտեղ գործառում են նույն հնչյունի քմային (ö) և երկար (ō) տարբերակները¹¹³: Ինչպես արդեն նշել ենք, շրթնային այս հնչյունը, իր տարբերակներով հանդերձ, գրական արաբերենում բացակայում է:

Սվեդիայի խոսվածքին բնորոշ վերոհիշյալ իրողությունը (երկար ձայնավորների առկայությունը) արդյո՞ք արաբերենի ազդեցության դրսևորում է, թե՞ ներքին անկախ զարգացման արդյունք: Այս հարցին ստորև կփորձենք անդրադառնալ:

Բելյանի բարբառը ձայնավորների մեծ տարբերակվածություն չունի. պարզ ձայնավորներն են՝ *ա, է, ը, ի, ու, օ, է (<ü), ü, ö, öü*, և, ի տարբերություն բարբառախմբի մյուս խոսվածքների՝ երկբարբառներով հարուստ չէ: Այստեղ առկա են միայն երկու բարձրացող երկբարբառներ՝ *mu* և *mo*¹¹⁴:

Անտիոքի հայերեն խոսվածքների արաբական փոխառություններում բավական շատ են իրենց մայրենի լեզվի

¹¹² Ավելի մանրամասն տե՛ս Հանանյան Գ., նշվ. աշխ., էջ 21-33:

¹¹³ Անդրեասյան Տ., նշվ. աշխ., էջ 11, Հանանյան Գ., նշվ. աշխ., էջ 21:

¹¹⁴ Քյուփեյան Հ., նշվ. աշխ., Ե., 2008, էջ 25-29:

գրական տարբերակներից շեղվող բառերը: Դրանք հաճախ ոչ թե հայերենի տվյալ տարածքային տարբերակների արտասանական ինչ-ինչ նորմերի ենթարկված ձևեր են, այլ՝ հենց արաբերենում պատմական զարգացմամբ առաջացած հնչյունական օրենքների գործառնան հետևանք:

Ելնելով վերոշարադրյալից՝ Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակների՝ արաբերենից փոխառյալ բառերում ձայնավորների դրսևորման յուրահատկությունները դասակարգել ենք ստորև ներկայացվող ենթաբաժիններում:

1. ԱՐԱԲԵՐԵՆԻ ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Գրական արաբերենին համապատասխանող բառերի ձայնավորները վերոնշյալ բարբառային միավորներում հընչյունափոխության չեն ենթարկվել:

Կարճ a, u, i ձայնավորները մի շարք փոխառություններում արտացոլվել են որպես այդպիսիք, ինչպես՝

ա) a-ա. *դարբա* «հարված» - darba, *զանբակ* «շուշան» - zabaq, *նազար* «նայվածք» - nazār «1.տեսողություն, 2.հայացք», *հաբր* «գերեզման» - qabr, *համար* «լուսին» - qamar, *արահ* «օդի» - ‘araq և այլն:

բ) u-ու. *կումաշ* «կերպաս» - qumāš, *խումար* «բախտախաղ» - xumār, *դսբուրա* «խոշոր մուրձ, (կվալս)» - dabbura «մուրձ, փոքր մուրձ» և այլն:

զ) *i-ի. բինա* «շենք» - *bināʿ*, *նադիր* «հազվագյուտ» - *nādir*, *թահթըլ հիսաբ* «ի հաշիվ» - *taḥṭa ʿal - ḥisāb*, *զուգաձև օրինակ՝ հնդիր/հադր* «1.պատրաստ, 2.ներկա» - *ḥāḍir* «1.ներկա, 2.ընթացիկ, 3.պատրաստ, կանխիկ» և այլն:

Բերված օրինակների մեծ մասում, ինչպես կարելի է նկատել, արաբական փոխառությունների ձայնավորները չեն հնչյունափոխվել, քանի որ այդ բառաձևերում առկա են «կոշտ» բաղաձայններ կամ երկար *ā*: Պետք է նշել, սակայն, որ բառում հատկապես *u, i* կարճ ձայնավորների չհնչյունափոխված ձևերը բավական սակավաթիվ են, եթե չասենք՝ եզակի:

Երկար *ā, ī, ū* ձայնավորներն Անտիոքի բարբառախմբի հայերեն խոսվածքների փոխառյալ բառերում վերածվում են կարճերի՝ առանց որակական փոփոխության, քանի որ այս բարբառախումբը երկար ձայնավորներ, ինչպես նշեցինք, չունի.

ա) *ā-ա. իլաջ* «դեղ» - *ʿilāj*, *մալ* «ունեցվածք» - *māl*, *ինթիկամ* «վրեժ» - *intikām*, *իֆթար* «նախաճաշ» - *ʿiftār*, *այամ* «հիշարժան օրեր», եզ.թ.՝ *yaum* «օր» - «արևոտ, առանց անձրևի, պարզկա օրեր» - *ʿal- ʿayyām*, *թահթըլ հիսաբ* «ի հաշիվ» - *taḥṭa ʿal - ḥisāb*, *հալան* «անպատճառ» - *ḥālan* «1.հիմա, այժմ, 2.անմիջապես» և այլն:

բ) *ū-ու. մունի* «ուտելիքի պաշար» - *mūna*, *մսսրուհ* «ընդունելի, օրինավոր, շիտակ» - *masmūʿ* «լսելի, ընկալելի, հստակ», *մախսու* «մասնավոր» - *maxṣūṣ* «հատուկ, յուրա-հատուկ», *մահրում* «զուրկ, զրկված» - *mahrūm*, *շարմութ/տա* «1.փալաս, 2.մարմնավաճառուհի» - *šarmūṭa* և այլն:

զ) Ի-ի. *թախթիդ* «հատակագծում» - taxīṭ, *նահիֆ* «նի-հար» - nahīf «նրբամարմին», *նիզամի* «կանոնավոր» - nizāmī, *թահթըլ սըքին* «ղանակի սպառնալիքով» - taḥta 'al - sikkīn և այլն:

Դիտարկվող բարբառային միավորներից Սվեդիայի տարածքի խոսվածքներում տևական ձայնավորների կիրառությունը, ինչպես վերը նշեցինք, գոյականի առկայացման կարգի՝ որոշալուծյան դրսևորման ցուցիչ է և այդպիսով ունի ոչ թե հնչյունաբանական, այլ՝ ձևաբանական նշանակություն:

Երկար ձայնավորների չհնչյունափոխված ձևեր Սվեդիայի խոսվածքում հազվադեպ են հանդիպում: Դրա պատճառը, կարծում ենք, առաջին հերթին պետք է փնտրել հենց արաբերենում: Ժամանակակից արաբերենի՝ ինչպես խոսակցական տարբերակներում, այնպես էլ բարբառներում երկար և կարճ ձայնավորների միջև տարբերակվածությունը հաճախ այնքան աննշան է լինում, որ այդպիսով հանգեցնում է երկարության և կարճության հատկանիշի հնչութայնության կորստին, հետևաբար նաև՝ ձայնավորների տևականության վերացմանը¹¹⁵:

2.2 ԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՀՆՉՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ինչպես հայտնի է, արաբերենում բառարմատը մեծ մասամբ ընկալվում է որպես եռաբաղաձայն հաջորդականություն, քանի որ քերականական իմաստները հաճախ ար-

¹¹⁵ Шагалъ В., նշվ. աշխ., էջ 63, Шарбагов Г., նշվ. աշխ., էջ 19:

տահայտվում են նաև արմատի ներքին ձայնդարձով (դրան հանգամանորեն կանդրադառնանք համապատասխան բաժնում): Հավանաբար, ինչպես սովորաբար նշվում է, ձևաբանական այդ յուրահատկությունն է պատճառը, որ արաբերենում, ի տարբերություն շատ այլ լեզուների, բառում ոչ թե ձայնավորներն են ազդում բաղաձայնների վրա, այլ հակառակն է տեղի ունենում՝ առաջացնելով ձայնավորների հնչարտաբերական հատկանիշների փոփոխություններ: Այդ պատճառով, հարևան բաղաձայնի տեսակով պայմանավորված, տվյալ ձայնավորը որակապես կամ փոխվում է կամ էլ մնում է նույնը¹¹⁶:

1.Ժամանակակից արաբերենին բնորոշ է, օրինակ, մի շարք՝ այսպես կոչված «փափուկ» բաղաձայնների (b, d, s, z, t, f, m, n) ազդեցությամբ հետին շարքի a-ի կարճ և երկար տարբերակների առաջնալեզվային, այսինքն՝ քմային արտաբերությունը՝ ä, անգամ որակի փոփոխությամբ՝ e կամ i ձայնավորների վերածվելը¹¹⁷: Անտիոքի բարբառախմբի՝ արաբերենից կատարված փոխառություններում արձանագրված են այդպիսի բառերի արդեն հնչյունափոխված ձևերը. *դարս* «դաս» - dars, Միր. բրբ.՝ darəs, *նսֆս* «1.հոգի, 2.ձգտում, 3.ախորժակ» - nafs, Միր. բրբ.՝ nafəs, *նսհիտ* «սրբատաշ» (քար) - nahit, *բսշիհ*՝ «բազե» - bāšiq, *մսշլսհ* «ողջ մարմինը ծածկող արաբական վերարկու» - mašlah «թիկնոց, վերարկու», *բսնիս* «սեխ» - battix 'aşfar, *ջսմի* - jami՝ «մզկիթ», *մսս-*

¹¹⁶ Юшманов В., 1985, էջ. 32, Ковалев А., Шарбаатов Г., նշվ. աշխ., էջ 14-16:

¹¹⁷ Նշված հնչյունները ռուս արաբագիտության մեջ հաճախ անվանվում են նաև «միջին բաղաձայններ», տե՛ս Ковалев А., Шарбаатов Г., նշվ. աշխ., էջ 16:

խարու «ծաղրածու» - maskara «1.ծաղրի առարկա, 2.դիմակ»,
մսնշոուլ «զբաղված» - mašgūl, *բնդանվի* «բեղվին» - badawī,
մսնդուհ «փառաբանված, գովերգված, բարբառում՝ «բերրի,
լավ մշակված, թանկարժեք (հողատարածք)» - mamdūh,
մուշդանրու «հաճախորդ» - muštarin և այլն:

Պետք է նշել, սակայն, որ այս լեզվական երևույթը խոսվածքներում հետևողականորեն չի արտահայտվում. առանձին դեպքերում վերոհիշյալ բաղաձայնների ազդեցությամբ *ա*-ի քմայնացում չի դիտվում, օր.՝ *թահթըլ հիսաբ* «ի հաշիվ» - tahta 'al - hisāb, *մարհաբա* «բարև» - marḥaban «բարի գալուստ», *նաֆսըբըբիբ* «հպարտ, պատվախնդիր» - nafs 'al-kabīr, *ֆասըլ* «կարճ ժամանակում» - faṣl «1.մաս, բաժանմունք, 2.տարվա եղանակ», *բարթել* «կաշառք» - barṯil, *բինա* «շենք» - binā', *մալ* «ունեցվածք» - māl և այլն:

Նկատելի է նաև հակառակ երևույթը. *ա*-ի քմայնացում դիտվում է ոչ «փափուկ» բաղաձայնների ազդեցությամբ, օր.՝ *ղաֆանր* «որոշում, բնորոշում» - qarār, *հսմըլ* «1.բեռնակիր, 2.բերքառատ ծառ - ḥāmil «1.տանող, կրող, 2.բեռնակիր», *ջսհթ ինիլ* «ճիգ թափել» - jahd «ճիգ, ջանք», *դսյր* «ուրիշ, բացի» - ḡayr «ուրիշ, այլ» և այլն: Մա, կարծում ենք, տարբեր բացատրություններ ունի. դա կարող է լինել կամ հենց խոսվածքի հնչյունական օրենքների գործառման, կամ այլ լեզուների, մասնավորապես՝ թուրքերենի ազդեցություն: Բացի այդ, հատկապես երկվանկ և բազմավանկ բառերում այս օրինակափությունից շեղումները հաճախ հետևանք են ձայնավորների ներդաշնակության օրենքի գործառության (այդ մասին՝ ստորև):

Ինչ վերաբերում է վերին բարձրացման կարճ *i*, *u* և երկար *ī*, *ū* ձայնավորներին, ապա «փափուկ» բաղաձայնների հարևանությամբ դրանք որևէ փոփոխություն չեն կրում¹¹⁸ և փոխառություններում էլ նույնությամբ արտացոլվել են՝ առանց, իհարկե, երկար ձայնավորների առկայության դեպքում տևականության հատկանիշի պահպանման. *բինա* «շենք» - *binā'*, *նադիր* «հազվագյուտ» - *nādir*, *նակդի* «առձեռն» - *naqdi*, *մուշլի* «լայն վերնագգեստ» - *mušlah* «թիկնոց, վերարկու»: Հիշյալ օրենքից, իհարկե, կան նաև շեղումներ. *մուլք* «ունեցվածք» - *mulk*, *մուրաբա* «մուրաբա» - *murabba*, *թուլթ* «մեկ երրորդ» - *tult*, *մուդր* «կառավարիչ» - *mudir* և այլն:

Արաբերենում կարճ *a*-ն և երկար *ā*-ն չեն քմայնանում բառում կոշտ, ուժգին արտաբերման բաղաձայնների (*d*, *t*, *z*, *s*) առկայության դեպքում, քանի որ վերջիններն ունեն ցածր տոնայնությամբ արտասանություն: Ոչ քմային արտասանությունը պահպանվել է նաև փոխառյալ բառերում. *ինչպես՝ դարբա* «հարված» - *darba*, *թախթիդ* «հատակագծում» - *taxīd*, *նիզամ* «կարգապահություն» - *nizām*, *մասլահաթ* «շահի ադրյուր, շահեկանություն» - *mašlahā* «օգուտ, շահ», *ֆրսանթ* «առիթ» - *furṣa* «1.հարմար պահ, առիթ, 2.ընդմիջում, արձակուրդ», *մախսու* - *maxṣū* «մասնավոր, հատուկ», *տակա* «զլխի ծածկոց, ֆես, գդակ» - *tāqīa* «զլխարկ», *տաիր* «լավ» (հավանության արտահայտություն) - *ṭayyib*: Բացառություն է, թերևս, Քեսաբի խոսվածքում հանդիպող *սուդաֆ* «սադաֆ» - *šadaf* բառը: Ընդհանրապես, արաբերենից փոխառյալ ուժգին արտաբերման (եմֆատիկ) բաղաձայններ ունեցող բառերը

¹¹⁸ Նույն տեղում:

հայերենի խնդրո առարկա խոսվածքներում սակավաթիվ են (դրանց գործածության հաճախականությունը արաբերենում ևս բարձր չէ):

2.Արաբերենի *i* ձայնավորն արտասանությամբ նման է հայերենի *ի*-ին: Սակայն քանի որ արաբերենի ձայնավորները, ինչպես նշել ենք, կրում են հարևան բաղաձայնների ազդեցությունը, ուստի էմֆատիկ և մի շարք այլ բաղաձայնների ազդեցությամբ *i*-ն հաճախ արտասանվում է ռուսերենի *ы* ձայնավորի պես¹¹⁹: Գուցե հենց արաբերենում առկա այս յուրահատկությունն է պատճառը, որ կարճ և երկար *i* ձայնավորը հայերենի վերոնշյալ խոսվածքներ թափանցած բավական թվով փոխառություններում հանդես է գալիս հնչյունափոխված ձևով՝ *i, ī >ը*. *թասաղը*՝ «1.փաստ, 2.փաստացի» - *tašdīq* «1.հավատ, 2.հաստատում, 3.վավերացում», *շըրըղ* «ժայավեն» - *šarīṭ*, *կաղապար* - *qālib*, *մըզրան*՝ «նիզակ» - *mizrāq* «նիզակ, տեգ», *ֆըլըզ* «կաթված» - *fālij*, *կարըլ* «ընդունված, ընդունելի» - *qābil* «1.ընդունող, դիմավորող, 2.հաջորդ, եկող», *մեջըլս* «ժողով» - *majlis*, *համըլ* «1.բեռնակիր, 2.բերքառատ ծառ -*hāmil* «1.տանող, կրող 2.բեռնակիր», *սըր* «գաղտնիք» - *sirr*, *ֆըջըր* «չար, անառակ, շարժուն (մանուկ)» - *fājir* «1.մեղսավոր, 2.անառակ», *մուրըր* «կառավարիչ» - *mudīr* «1.կառավարիչ, տնօրեն 2.ռեկտոր», *մաշըգ* «ունելի» - *māšīq* և այլն:

Մի քանի բառում տեղի է ունեցել *i, ī > է* հնչյունափոխություն. *բարթէլ* «կաշառք» - *barṭil*, *շըրէք* «գործակից, բաժ-

¹¹⁹ Кузьмин А., Учебник арабского языка, М., 2001, էջ. 9:

նեկից» - šarīk, *ֆըթէլ* «պատրույգ» - fatīl «պատրույգ, բոնկիչ, խայծ», *հսւէր* «խսիր» - hašīr, *յսւէր* «զերի» - yasīr «զերիներ, ստրուկներ» (եգ. թ. 'asīr), *ջէհըզ* «օժիտ» - jihāz, *խալէս* «ազատ» - xālīš «1.մաքուր, անկեղծ, 2.ազատ», *շըբէն* «կնքահայր, քավոր» - šabīn «1.խաչեղբայր, 2.կնքահայր» և այլն: Սա, կարծում ենք, Միրիայի բարբառի կամ թուրքերենի հնարավոր ազդեցությունն է:

3. Արաբերենի և ձայնավորի արտասանության ժամանակ շրթունքները կլոր են: Որոշ դեպքերում այս հնչյունը ստանում է օ-ի արտասանության երանգ, իսկ բառի վերջին փակ վանկում հաճախ պարզապես օ է արտասանվում¹²⁰: Անտիոքի հայերեն բարբառախմբի տարածքային տարբերակների՝ արաբերենից փոխառյալ բառերում, ինչպես երեվում է վերը բերված օրինակներից, ս-ն հաճախ չի հնչյունափոխվում:

Սակայն նկատվում են նաև *u* -ի հնչյունափոխության դեպքեր, մասնավորապես՝ *u, ū > ni. ւնիլք* «ունեցվածք» - mullk, *քուրսա* «աթոռ» - kursī, *ջոււլա* «ամբողջը, բոլորը» - jumla, *մուդրր* «կառավարիչ» - mudīr «1.կառավարիչ, տնօրեն, 2.ռեկտոր», *ջուբի* «լայն վերնազգեստ» - jubba «ջուրբա (լայն թևերով վերնազգեստ)», *ղսւնն* «ծխամորձ» - ḡalīn «ծխամորձ, չիրուխ» և այլն:

Մի շարք բառերում տեղի է ունեցել *u, ū > r* հնչյունափոխություն. *խըշղ* «նիզակ»-xušt «նիզակ, գեղարդ», *հավըզ*

¹²⁰ տե՛ս Կузьмин, А., նշվ. աշխ., էջ 9:

«ավագան» - hawuḍ, *հավըշ* «բակ» - hawuš, *նամըս* «պատիվ» - nāmūs «1.օրենք, կանոն, 2.պատիվ, խիղճ», *ֆըստան* «կանացի հագուստ» - fustān, *ֆըրկա* «գժտություն» - furqa «1.բաժանում, տրոհում, 2.տարաձայնություն, գժտություն», *հըբըի կամ հըբըզ* «ձնագունդ, ձնագնդիկ» - qubba, *հնիվըշ* «բակ» - hawuš, *մըր* «լեղի, դառնություն» - murr «դառը, լեղի, դառնահամ» և այլն:

Արաբերենի նշված ձայնավորների՝ հայերենի բարբառային միավորներում *ը*-ի հնչյունափոխվելը, կարծում ենք, հաճախ նաև արաբերենի ազդեցություն է, քանի որ, ինչպես նշել ենք, հատկապես կարճ ձայնավորները գրական լեզվում օ արտաբերվելու միտում ունեն:

Քեսաբի խոսվածքում գործածվող մի քանի բառում դիտվում է *u, ū > o* հնչյունափոխություն. *զընբոր* «իշամեղու» - zunbūr, *լոկնու* «պատառ» - luqma, *ըրօբ* «ռուպ» - rubb «մրգահյութ, մուրաբա», *ըրօպ* «քառորդ» - rub': Սվեդիայի խոսվածքը, ինչպես նշել ենք, չունի *o* ձայնավոր, ուստի այստեղ չեն հանդիպում նաև *u, ū > o* հնչյունափոխությամբ օրինակներ:

3. ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾԱՌՈՒՄԸ

Երբեմն հստակ չէ, թե Անտիոքի հայերեն բարբառային միավորներում այս կամ այն փոխառյալ բառը որ լեզվի՝ արաբերենի՞, հայերենի՞, թե՞ թուրքերենի հնչյունական օրենքների կրողն է: Այսպես՝ արաբերենում *ī* ձայնավորն օժտված է հարեվան վանկի *ā*-ին հաղորդելու *ē*-ի արտաբերման հակ-

վածություն: Այսինքն՝ բառում վերին բարձրացման \bar{i} -ն, ազդելով մյուս վանկի ստորին բարձրացման \bar{a} -ի վրա, արտաբերման տեղով մոտեցնում է իրեն՝ դարձնելով միջին բարձրացման \bar{e} : Այս երեվույթն արաբերենում կոչվում է 'imālah¹²¹: Ի դեպ, այդպիսի ներքին հնչյունափոխությունը բառիմաստի կամ քերականական իմաստի փոփոխությունն չի առաջացնում, ինչպես՝ 'elim<'ālim «գիտնական»:

Չայնավորների առնմանական հիշյալ տիպի հնչյունափոխությունը, որը կոչվում է նաև ձայնավորների ներդաշնակություն, հատուկ է ոչ միայն արաբերենին, այլ նաև Անտիոքի տարածքային տարբերակներին¹²²: Երբեմն դժվար է հաստատապես նշել, թե այս կամ այն փոխառյալ բառում ձայնավորների ներդաշնակություն հայերենում է առաջացել, թե՞ արաբերենում: Ավելին, այս երևույթը, ինչպես հայտնի է, բնորոշ է նաև թուրքերենին: Ուրեմն հարց է առաջանում. հարյուրամյակներ շարունակ Օսմանյան կայսրության միջավայրում համատեղ գոյատևած արաբերենը, թուրքերենը և Անտիոքի տարածքային տարբերակներն այս առումով ինչպե՞ս, ի՞նչ չափով են միմյանց վրա ազդել: Դրանցից յուրաքանչյուրը, բնականաբար, ունի հնչյունական տվյալ օրենքի գործառման իր յուրահատկությունները:

Չայնավորների ներդաշնակությունը հայերենի բարբառներում բավական լայնորեն է տարածված և մեծ մասամբ իր գործառական հատկանիշներով տարբերվում է ն՛ թուրքական լեզուների, և՛ արաբերենի համապատասխան հնչյունափոխական օրինաչափությունից: Հայերենում այն և՛

¹²¹ Юшманов Н., 1938, էջ 10:

¹²² Փաշայան Ա., նշվ. աշխ., էջ 21:

առաջընթաց, և՛ հետընթաց գործառնություն ունի, մինչդեռ թուրքերենում, օրինակ, միայն առաջընթաց է¹²³: Իսկ արաբերենում սահմանափակ կիրառություն ունի, և, բացի այդ, օրենքը կարող է չգործել՝ պայմանավորված բառում ուժգին արտաբերման (էմֆատիկ) բաղաձայնների առկայությամբ¹²⁴:

Փոխառությունների պարագայում երբեմն դժվար է որոշել տվյալ բառում երևույթի առաջացման սկզբնաղբյուրը. օրինակ՝ *թիմսահ* «կոկորդիլոս» - *timsāh*, *բւշիհ*՝ «բազե» - *bāšiq* և այլ բառերում *i*-ի ազդեցությամբ *ā*-ի քմայնացում բոլոր երեք՝ հայերեն, արաբերեն, թուրքերեն լեզուներում էլ կարող էր առաջանալ միմյանցից անկախ:

Չայնավորների ներդաշնակության օրենքի գործառնան օրինակներ են նաև հետևյալ բառերը՝ *ւսգւն* «մոլլայի աղոթք» - 'azān «աղոթքի կանչ, կոչ», *բւքւրու* «ճախարակ» - bakara, *բւնիւն* «1.փոխարեն, 2.փոխարժեք, փրկագին» - badal, *կւլիւն*՝ «մատիտ» - qalam, *մուհլիւք* «կղմինդր» - maqlab «1.կույտ, աղբակույտ, 2. թակարդ», *մուրաբա*՝ «մուրաբա» - murabbā և այլն:

Միշտ չէ, որ քննվող փոխառություններում գրական լեզվի համեմատությամբ դիտվող հնչյունափոխությունը հնարավոր է լինում բացատրել միայն արաբերենի կամ ինդո-առարկա հայերեն բարբառների հնչյունական օրենքներով: Կարելի է ենթադրել, որ դրանց մի մասը թուրքերենից միջնորդավորված ձևեր են, ինչպես՝ *ջրրը*՝ «տուգանք» - jarm, *խարը*՝ «հարգանք» - xaṭar «վտանգ» և այլն:

¹²³ Աճառյան Հ., Քննություն Ազուլիսի բարբառի, Ե., 1935, էջ 154:

¹²⁴ Юшманов Н., 1938, էջ 10:

4. ՇԵՇՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀՆՉՑՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ. ՊԱՐԶ ՁԱՅՆԱՎՈՐԻ ԵՐԿԲԱՐԲԱՌԱՑՈՒՄ

Վերոշարադրյալում հիմնականում քննության առանք այն դեպքերը, երբ արաբերենից փոխառված բառերը Անտիոքի տարածքային տարբերակներ են թափանցել մայրենի լեզվում՝ արաբերենում, պատմական հնչյունափոխությամբ ձևափոխված տեսքով: Սակայն կան նաև այնպիսիք, որոնք ենթարկվել են հայերենի խնդրո առարկա բարբառային միավորներում գործող հնչյունական օրենքներին: Դրանցից արաբերենից կատարված փոխառություններում ամենից ավելի ցայտուն դրսևորում ունի Անտիոքի խոսվածքներին բնորոշ հիմնական օրինաչափությունը՝ բառում շեշտի ազդեցությամբ պայմանավորված հնչյունափոխությունը:

Արաբերենի, ինչպես և Անտիոքի հայերեն բարբառային միավորների շեշտը ուժգին է և չունի դրսևորման տարբերակներ¹²⁵: Սակայն երկու լեզուներում էլ դրանք գործառությամբ զանազանվում են: Արաբերենում շեշտակիր է բառի նախավերջին երկար վանկը, իսկ կարճի դեպքում շեշտն անցնում է վերջից երրորդ վանկին¹²⁶: Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակներում, ինչպես նաև գրական հայերենում, շեշտվում է բառի վերջին ձայնավորը¹²⁷: Բացառություն է գաղտնավանկային *ը*-ն:

¹²⁵ Юшманов Н., 1938, էջ 12, Չոլաբեան Յ., 2009, էջ 25:

¹²⁶ Юшманов Н., 1985, էջ 38:

¹²⁷ Չոլաբեան Յ., 2009, էջ 25, Հանանյան Գ., նշվ. աշխ., էջ 55:

Արաբական փոխառությունները, մեր դիտարկմամբ, ի սկզբանե հիմնականում արտասանվել են Անտիոքի հայերեն բարբառային շեշտադրությամբ, թեև չի բացառվում, որ երբեմն պահպանվել է նաև բառի բնիկ շեշտը, որը հատուկ է երկլեզվյա բնակչության մայրենի լեզվի խոսակցական տարբերակին: Այսպիսի եզրակացության համար հիմք է ծառայում այն հանգամանքը, որ այդ փոխառյալ բառաձևերի մի մասը ենթարկվել է հայերեն հիշյալ խոսվածքներին հատուկ՝ բառում շեշտադրությամբ պայմանավորված հնչյունափոխական կանոններին: Օրինակ՝ հայերենի բարբառների արևմտյան խմբակցությանը, այդ թվում նաև Անտիոքի բարբառախմբին, բնորոշ է բազմավանկ բառի միջնավանկի ձայնավորի սդում¹²⁸, որը դիտվում է նաև արաբական փոխառություններում. *հւյլրզուն* «խխունջ» - *ḥalazūn*. այստեղ առկա է միջնավանկի a ձայնավորի սդում:

Քեսաբի և Սվեդիայի հայերեն խոսվածքներում շեշտի ազդեցությամբ տեղի է ունենում պարզ ձայնավորի երկբարբառացում¹²⁹ (օր.՝ *ծ^mon* < ծառ, *զ^hէր* <զեր, *շ^oուն* < շուն և այլն): Այն գործառում է նաև արաբերենից փոխառված բառերում.

1. a, ā >^mo - *հւյլ^mոզ* «օղակ» - *ḥalaq*, *թաբ^mօղ^h* «պնակ» - *ṭabaq*, *կ^hաս^mօբ* «մսագործ» - *qaṣṣāb*, *դուլ^mօբ* «պահարան» - *dūlāb*, *խւս^mօբ* «լուր» - *xabar*, *հ^mօլ* «վիճակ» - *ḥāl*, *հ^mօղ^h* «խրավունք» - *ḥaqq*, *նաջ^mօբ* «ատաղձագործ» - *najjār*, *դւսֆթ^mօբ* «տետրակ» - *daftar* և այլն:

¹²⁸ Մուրադյան Հ., նշվ. աշխ., էջ 86:

¹²⁹ Չոլաքեան Յ., 2009, էջ 20, Անդրեասյան Տ., նշվ. աշխ., էջ 13-14, Հանանյան Գ., նշվ. աշխ., էջ 42-46:

2. *i, ī >^hէ* - *բւնդ^hէխ* «սեխ» - *baṭṭix* 'aşfar, *բաշ^hէղ* «ճուռակ, սակռ, շահեն» - *bāšiq* «բազե», *հւնդ^hէր* «պատրաստ» - *hāḍir*, *ն^hէրջ^hէս* «նարգիզ» - *nirǰīs* և այլն:

3. *i, ī >^mօ* - *Ֆուջ^mօր* «չարածճի» - *fājir* «1. մեղսավոր, 2. անառակ», *թւն^mօհ* «զգուշացում» - *tanbīh*, *աշր^mօթ* «մեծ գերդաստան» - 'ašīra և այլն:

4. *u, ū >^tու* - *թ^tուլթ* «մեկ երրորդ» - *tult*, *զ^tուխ* «շերամ պահելու գետնահարկ շինություն» - *kūx* «խրճիթ», *ղւն^tփլէն* «մայրի ծառի խեժը» - *qalafūniyya* «բնեկնախեժ, խեժ» և այլն:

5. *ū >^mօ* - *լըթ^mօս* «կիսաթանձր ապուր» - *labūs*

6. *u >^tօ* - *բըլթ^tօլ* «սոխակ» - *bulbul*

7. *ū >^mա* - *թարթ^mաշ* «գլխանոց» - *tarbūš* «ֆես»

Այսպիսով, հայերեն հիշյալ բարբառային միավորների և արաբերենի շփումները, ինչպես արդեն նշել ենք, սկիզբ են առնում վաղ ժամանակներից: Հետևաբար՝ արաբական ներթափանցումների սկիզբը հայերեն բարբառներ նույնպես հին է: Այդ փոխառությունները, իհարկե, իրենց մեջ պահում են պատմության ընթացքում մայր լեզվի կրած որոշ հնչյունափոխված ձևեր: Բայց դրանցում առկա են նաև փոխառու լեզվի՝ Անտիոքի հայերեն խոսվածքների ձայնավորային ենթահամակարգի այս կամ այն օրինաչափության դրսևորումները:

Անտիոքի հայերեն խոսվածքները, հարյուրամյակներ շարունակ գոյատևելով արաբերենի հետ տևական շփման միջավայրում, բնականաբար, կատարել են մեծաքանակ փոխառություններ: Դրանց մի մասում մայրենի լեզվի հնչյունական յուրահատկությունները պահպանվել են, քանի որ

չեն հակասում հայերենի տվյալ խոսվածքների հնչյունական օրենքներին, իսկ որոշ մասն էլ ենթարկվել է այդ օրենքներին: Եվ այսօր ոչ բոլոր դեպքերում է հնարավոր ստույգ նշել, թե Անտիոքի հայերեն բարբառային միավորների արաբական փոխառություններում առկա ձայնավորային փոփոխություններից որոնք են օտար՝ արաբերենի և որոնք՝ հայերենի քերականական առանձնահատկությունների ազդեցություն: Կան նաև այնպիսիք, որոնք ո՛չ գրական արաբերենի հնչյունական օրենքների, և ո՛չ էլ հայերենի վերոնշյալ խոսվածքների հնչյունական օրենքների կրողն են: Ու թեև վկայված են որպես արաբերեն փոխառություններ և արաբերեն արմատներ են, սակայն հավանաբար դրանք էլ միջնորդավորված փոխառություններ են և կրում են երրորդ լեզվի (օր.՝ թուրքերենի) հնչյունական օրենքների ազդեցությունները:

ԳԼՈՒԽ 2

ԱՆՏԻՈՔԻ ԲԱՐԲԱՌԱԽՄԲԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱԻՄԱՍՏԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

1. ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՍՔԻՄԱՍՏԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գիտական գրականության մեջ փոխառությունների մասին հիշատակելիս առաջին հերթին նկատի են առնվում հնչյունական և հատկապես՝ բառային փոխանցումները փոխատու լեզվից փոխառու լեզվին, քանի որ քերականական երևույթները հազվադեպ են փոխառվում. մի լեզու կարող է էականորեն լցվել փոխառված բառերով՝ պահպանելով իր քերականական կառուցվածքը¹³⁰: Առավել ևս, որ տվյալ պարագայում սեմական քերականագիտության տեսական դրույթներն էականորեն տարբերվում են հնդեվրոպական լեզվաբանության մեջ ընդունված դրույթներից: Երկու լեզվաընտանիքներին պատկանող լեզուների միջև առկա սկզբունքային տարբերությունները դրսևվորվում են, ինչպես նախորդ գլխում անդրադարձանք, հնչյունաբանության, իսկ ավելի ակնառու՝ ձևաբանության, շարահյուսության և բառակազմության մեջ: Այս հանգամանքը պայմանավորված է

¹³⁰Гранде Б., Введение в сравнительное изучение семитских языков, М., 1972, էջ 14 (որպես օրինակ բերվում է պարսկերենը, որի բառապաշարի զգալի մասը արաբերենից փոխառված բառեր են, բայց, դրանով հանդերձ, այն այլ լեզվաընտանիքի լեզու է և պահպանել է իր քերականական կառուցվածքը):

լեզվի ուսումնասիրման վերաբերյալ ընդունված տարբեր մոտեցումներով: Դա է պատճառը, որ արաբերենից փոխառված քերականական երևույթները հայերեն նշված խոսվածքներում, կարելի է արձանագրել, համակարգային բընույթ չեն կրում. դրանք մեկ-երկու մասնավոր դրսևորումներ են, որոնց կանդրադառնանք ըստ անհրաժեշտության: Այս բաժնում մեր հիմնական նպատակն է ընդհանուր գծերով ներկայացնել Անտիոքի հայերեն բարբառային միավորների և արաբերենի խոսքիմասային առանձնահատկությունների տիպաբանական վերլուծությունը և փոխառված բառապաշարի խոսքիմասային հիմնական արտահայտությունները:

Հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող լեզուներում խոսքի մասերը, որոշ տարբերություններով հանդերձ, բաժանվում են տասը խմբի: Մինչդեռ սեմական լեզուներին, այդ թվում նաև արաբերենին, որոնք ունեն սկզբունքորեն այլ լեզվամտածողությամբ ձևավորված քերականական կառուցվածք, հատուկ է բառերի խոսքիմասային եռախումբ դասակարգումը՝ *անուն* (*ism*), *բայ* (*fi'*) և *մասնիկ* (*harf*)¹³¹: Անուն և բայ խոսքի մասերի մեջ ներառվող լեզվական միավորների քերականական հիմնական հատկանիշն այն է, որ նրանք լիիմաստ են. բովանդակում են կոնկրետ գաղափարներ և հասկացություններ՝ ի հակադրություն թերիմաստ բառերի՝ մասնիկների, որոնք միայն լեզվական օժանդակ միջոցներ են՝ արտահայտելու լիիմաստ բառերի այս կամ այն քերականական ձևը և վերջիններս միմյանց կապակցելու խոսքի շղթայում: Անունը բնորոշվում է որպես լեզվական այնպիսի միավոր, «...որի միջոցով և որի մասին հաղորդվում է տեղեկութ-

¹³¹Шарбагов Г., Современный арабский язык, М. 1961, էջ 31:

յուն»¹³²: Անվանական միավորները, ըստ իրենց արտահայտած իմաստային նշանակությունների, ենթարկվել են նաև ներխոսքիմասային դասակարգման, որից էլնելով առանձնացվել են գոյականի (*ʿism maʿsūf*), ածականի (*naʿat*), թվականի (*ʿadad*) և դերանվան (*damīr*) քերականական ենթահամակարգերը¹³³:

Ինչ վերաբերում է բային, ապա վերջինս ստորոգական կառույցի այն հիմքն է, որի շնորհիվ կատարվում է ստորոգումը, ուստի այն այնպիսի լեզվական միավոր է, «...որի միջոցով, այլ ոչ որի մասին է հաղորդվում տեղեկություն»¹³⁴: Արաբական լեզվաբանական ավանդույթն առանձնացնում է բային բնորոշ այն հատկանիշը, համաձայն որի «...բայը ցույց է տալիս գործողության կապը ժամանակի հետ»¹³⁵. սա, թերևս, քերականական այն հատկանիշն է, որը, ըստ արաբական լեզվամտածողության, բնորոշ է միայն այս խոսքի մասին:

Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակներում խոսքիմասային բնորոշման և դասակարգման սկզբունքները նույնանում են մայրենի լեզվի (արևմտահայերենի) հետ: Չանդրադատնալով այդ ընդհանուր և հայտնի դրույթներին՝ նշենք միայն, որ արաբերենից փոխառյալ բառերը խոսքիմասային հետևյալ պատկանելությունն ունեն.

1.Փոխառությունների մեջ խոսքիմասային ամենամեծ խումբը, ինչպես և կարելի էր ենթադրել, գոյականներն են: Արաբերենում գոյական անունն ունի սեռի (արական, իգա-

¹³² Al-Anbārī, *ʿAsrār al-ʿarabiyya*, B., 1997, էջ 27:

¹³³ Նույն տեղում:

¹³⁴ Al-Anbārī, նշվ. աշխ., էջ 24:

¹³⁵ Az-Zamaxšārī, *Al-Mufaṣṣal, Fi ʿalm al-ʿarabiyya, dūna tāʾriḫ*, էջ 243:

կան), թվի (եզակի, երկակի, հոգնակի), հոլովի (ուղղական, սեռական, հայցական) քերականական կարգերը:

Արաբերենից կատարված փոխառությունները, սակայն, հիմնականում ենթարկվում են հայերենի վերոհիշյալ խոսվածքներում տվյալ խոսքի մասին հատուկ թեքման օրինաչափություններին: Օրինակ՝ մի շարք փոխառյալ բառեր իրենց հոգնակին կազմում են տվյալ խոսվածքին հատուկ հոգնակերտ վերջավորությունների հավելումով. Այսպես՝ Քեսաբի խոսվածքում *-ինա/ընա* հոգնակերտ են ստանում *ա/ու* վերջահանգ ունեցող բոլոր փոխառյալ բառերը: Օրինակ՝ *թանջարու* «կաթսա» (tanjara) - *թանջարինա* «կաթաներ», *խարաբու* «ավերակ» (xarāb) - *խարաբինա* «ավերակներ», *լոկմու* «պատառ» (luqma) - *լոկմրնա* «պատառներ» և այլն, իսկ *-նա/նի* հոգնակերտ են ստանում բաղաձայնահանգ փոխառյալ բառերի մեծ մասը¹³⁶. *մուխտար* «գյուղապետ» (muxtār) - *մուխտարնա* «գյուղապետներ», *ռուս* «մրգահյութ, մուրաբա» (rub) - *ըսընա* «մրգահյութեր, մուրաբաներ» և այլն:

Արաբերենից փոխառված գոյականները ենթարկվում են խոսվածքների նաև հոլովման համակարգի ընդհանուր օրինաչափություններին:

2. Ածական անունն արաբերենում, ի տարբերություն հայերենի, ունի հոլովի և թվի քերականական կարգեր: Արաբերենում ևս տարբերակվում են որակական և հարաբերական ածականները: Որակական ածականներն ունեն համեմատության աստիճաններ:

¹³⁶ Չոլաբեան Յ., 2009, էջ 64-65, Ինձեճիբեան Տ. Ա., նշվ.աշխ., էջ 117:

Անտիոքի հայերեն բարբառային միավորներում գործածվող ոչ մեծաքանակ (մեր նյութի համաձայն՝ գրեթե երեք տասնյակ) ածականների հիմնական մասը որակական են: Դրանցից են՝ *ջսսուր* «քաջ, խիզախ» - *jasūr*, *մնշհուր* «հայտնի, անվանի» - *mašhūr*, *մնշղուլ/մնշղուլ* «զբաղված» - *mašǧūl*, *մահրում* «գուրկ, զրկված» - *mahrūm*, *խայըն* «դավաճան, նենգամիտ» - *xā'in*, *խէր* «բարի, բարենշան» - *xayr* «բարի, լավ», *ւնզուր/ւնզուր* «ամուրի» - *'azab azǧayr* «շեկ» - *'ašqar* «շիկահեր, խարտյաշ» և այլն:

3. Արաբերենում տարբերակվում են քանակական, դասական, բաշխական, բազմապատկական, կոտորակային թվականներ: Թվականների մի մասին հատուկ են սեռի և հոլովի քերականական կարգերը:

Թվականական ձևերից Քեսաբի խոսվածքի՝ արաբերենից փոխառված բառապաշարում արձանագրված է *թ^էօլթ* «մեկ երրորդ» - *ṯalṯ* կոտորակային թվականը, Սվեդիայի խոսվածքում այն կիրառվում է *թ^էնիլթ* հնչատարբերակով: Քեսաբի բարբառային միավորում գործածվում է նաև *ըրօր* «քառորդ» - *rub*՝ կոտորակային թվականը:

Ակադեմիկոս Ա.Ղարիբյանն Արամոյի խոսվածքի 70, 80, 90 բացարձակ թվականներ, ինչպես նաև դասական թվականներ նշանակող բառերը համարում է արաբերեն, մինչդեռ դրանք որևէ կերպ (հայերեն տառադարձամբ կամ արաբատառ) հեղինակի հիշյալ աշխատանքում ներկայացված չեն¹³⁷: Անտիոքի բարբառային միավորների մյուս հետազոտողները, սակայն, իրենց ուսումնասիրություններում նշելով

¹³⁷Ղարիբյան Ա., 1958, էջ 10, 34:

այդ բացարձակ թվականների փոխառյալ ձևերը՝ *յըթմըշ*, *սւնքզւն*, *դոհգան*, ինչպես նաև *-ինջա* մասնիկով կազմված դասական թվականները՝ *իքընջա/իքինջը* (երկրորդ), *ուշունջա/ուշունջը* (երրորդ) և այլն, իրավացիորեն փաստում են դրանց թուրքական ծագումը¹³⁸. այդ թվականների հայերեն տարբերակներն այս խոսվածքներում չեն պահպանվել:

Ընդունելի է, սակայն, Ա. Ղարիբյանի այն տեսակետը, համաձայն որի՝ Արամոյի (նաև բարբառախմբի մյուս խոսվածքների) «...քերականական կառուցվածքի մեջ արաբերենի հետք չկա»¹³⁹: Այս առումով ուշագրավը, թերևս, միայն Սվեդիայի խոսվածքում կիրառվող հաշվելու միավորի գործածությունն է, որը, ըստ Տ. Անդրեասյանի, արաբերենի հնարավոր ազդեցություն կարող է լինել¹⁴⁰: Ի տարբերություն գրական լեզվի՝ խոսվածքում առարկաները հաշվելու համար *հատ*-ի փոխարեն կիրառվում է *մըզ* (մեկ) բառը: Այսպես՝ *հւննզ մըզ* (հինգ մեկ), փոխանակ՝ *հւննզ հէ՞դ* «հինգ հատ», *դուսը մըզ* (տասը մեկ) «տասը հատ», *հւնրէր մըզ* (հարյուր մեկ) «հարյուր հատ», *հազուր մըզ* (հազար մեկ) «հազար հատ» և այլն, իսկ արաբերեն՝ *խւնսէ վահիդ* «հինգ մեկ» - xamsa wāhid, *աշրա վահիդ* «տասը մեկ» - ‘aşara wāhid, *միթ վահիդ* «հարյուր մեկ» - mi’a wāhid, *էլֆ վահիդ* «հազար մեկ» - ‘alf wāhid և այլն: Սա արաբերենից կատարված պատճենում է, որն իր բնույթով, կարծում ենք, եզակի է:

¹³⁸ Անդրեասյան Տ., նշվ. աշխ., էջ 76, Չոլաքեան Յ., 2009, էջ 85:

¹³⁹ Ղարիբյան Ա., 1958, էջ 10:

¹⁴⁰ Անդրեասյան Տ., նշվ. աշխ., էջ 77:

Բարբառախմբի՝ արաբերենից փոխառված բառապաշարում թվականների արտահայտման այլ ձևեր արձանագրված չեն:

4. Արաբերենում դերանվան բնորոշ հատկանիշներն են դեմքի, թվի, սեռի քերականական կարգերը, հոլովի քերականական կարգի գրեթե բացակայությունը¹⁴¹: Դերանվան տեսակներն են՝ անձնական, ցուցական, հարաբերական և հարցական:

Ուշագրավ է, որ թեկուզ երկու բառաձևով, արաբերենից կատարված փոխառություններում ներկայացված են լեզուներում սակավ փոխառվող քերականական - բառային այս միավորները՝ դերանունները: Դրանք են՝ Քեսաբի խոսվածքում *դէր*, իսկ Սվեդիայում՝ *դսյր* տարբերակով կիրառվող, «ուրիշ, այլ» ածականական - հատկանշային իմաստ ունեցող անորոշ դերանունը¹⁴², արաբերեն ձևն է՝ *gayr* «1.ուրիշ, 2.բացի», ինչպես նաև *ֆրլուն/ֆրլան* «այսինչ, ոմն» -*fulān* անորոշ դերանունը:

5. Խնդրո առարկա խոսվածքներում գոյականից հետո փոխառյալ հաջորդ մեծ բառախումբը բայն է: Արաբերենում բային հատուկ են դեմքի, թվի, սեռի, ժամանակի և խոնարհման քերականական կարգերը¹⁴³:

Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակներում արաբերեն բայեր, ինչպիսիք այդ լեզվում են կիրառ-

¹⁴¹ Шарбагов Г., նշվ. աշխ., էջ 47:

¹⁴² Չոլաքեան Յ., 2009, էջ 109, Հանանյան Գ., նշվ. աշխ., էջ 106:

¹⁴³ Բայի անորոշ ձևը (անորոշ դերբայը) արաբերենում բացակայում է, և որպես այդպիսին պայմանականորեն համարվում է անցյալ կատարյալ ժամանակաձևի, 3-րդ դեմքի, եգ. թվի, արական սեռի բայաձևը, որը միևնույն ժամանակ բառարմատ է (օր.՝ *daxala* «1.մտնել, 2.նա մտավ»):

վում, չեն փոխառվել (լեզվուների կառուցվածքային տարբերությունների, դրա հետևանքով գործածության անհնար լինելու պատճառներով): Դրա փոխարեն արաբերենից փոխառված բառերի և հայերենի (խոսվածքների) բայակազմական ձևերի միջոցով ստեղծվել և լայն կիրառություն են ստացել մի շարք նոր բայեր: Դրանք իրենց կազմությամբ մեծ մասամբ պարզ են և ստեղծվել են հիմնականում արաբերենի գոյական (հիմնական ձևույթ) + հայերենի անորոշ դերբայի *-իլ* վերջավորություն (երկրորդական ձևույթ) կաղապարով. *մուհրր-իլ* «կնքել»-muhr (կնիք), *հարլ-իլ* «պարանով կապկրպել» - habl (պարան), *հիսաբ-իլ* «հաշվել» - hisāb (հաշիվ), *բարթրլ-իլ* «կաշառել» - barṭl (կաշառք), *շրլղ-իլ* «զբաղվել, ուշանալ» - šuḡl (զբաղմունք, գործ), *ղրար-իլ* «խոստովանել» - qarār (որոշում, բնորոշում), *ղըբն-իլ* «երկար հագուստը ծալելով կարճացնել և կարել» - ḡabana (1.խաբել, 2.կարելով կարճացնել (հագուստը)) և այլն: Արաբերենի ածական + հայերենի անորոշ դերբայի *-իլ* վերջավորություն կաղապարով գործածվում է մեկ պարզ բայ՝ *մահրումիլ* «զրկել» - mahrūm (զուրկ):

Եզակի դրսևորումներ ունեն նաև ածանցավոր բայերը: Մասնավորապես, փոխառյալ բառապաշարում գտնում ենք *ջահիլ-ն-իլ* «երիտասարդանալ» - jāhil (տգետ, անուս), *ղլլտ-էն-իլ* «սխալվել» - ḡalaṭ (սխալ) սուկածանցավոր բայերը: Կրավորական *-վ* սեռաձանցով կազմված բայերն են՝ *հյնղըր-վ-իլ* «պատրաստվել» - hādir (1.ներկա, 2.պատրաստ), *հյնլյն-վ-իլ* «օղակվել» - ḡalqa (օղակ), *ղակ-վ-իլ* «իրար զարնվել» - daqqa «հարվածել, ծեծել»: Մեկ բայ էլ կազմված է *-ըտ* (-ոտ)

բազմապատկական - սաստկական կերպաձանցով. *ըռպ-ըտ-իլ* «ռուպի պես մածուկ լինել» - rubb (մրգահյութ, մուրաբա):

Հայերենի այլ բայածանցներով կազմված բայածներ Մևտիոքի բարբառային միավորների՝ արաբերենից կատարված փոխառություններում չեն հանդիպում:

Փոխառյալ բայերի մյուս խումբը համապատասխան իմաստներն արտահայտում է նկարագրական եղանակով՝ հիմնականում հարադիր կազմությամբ: Որպես նշված բարդությունների հարադիրներ՝ հանդես են գալիս հիմնականում արաբերենից փոխառյալ գոյականներ, երբեմն՝ ենթակայական դերբայի ձևեր. *հսզմ* *ինիլ* (*ինիլ* < *անել*) «մարսել» - haqm (մարսողություն), *սսզսլս* *ինիլ* «արագ անել, արագացնել» - 'ajala (արագություն, աճապարանք), *իֆթարի* *ինիլ* «նախաճաշել» - iftar (նախաճաշ), *ջսհթ* *ինիլ* (*ինիլ* < *անել*) «ճիգ թափել» - jahd (ճիգ, ջանք), *սթար* *ինիլ* (*ինիլ* < *անել*) «մեղադրել» - 'atab (մեղադրանք), *հ^mոկ* *ինիլ* (*ինիլ* < *ունենալ*) «իրավունք ունենալ» - haqq (իրավունք), *սզսն* *գինչիլ* «ազան կանչել» - 'azān (աղոթքի կոչ, աղոթքի մասին հայտնում), *կարլլ* *ինիլ*, *ընել* (*ինիլ*, *ընել* < լինել) «ընդունել» - qābil (ընդունող, դիմավորող), *մուհթաջ* *ինիլ* «կարիք զգալ» - muhtāj (ինչ-որ բանի կարիք, անհրաժեշտություն զգացող) և այլն:

Հարադիր բայերի գործածությունն ավելի շատ բնորոշ է Քեսաբի խոսվածքին, իսկ Սվեդիայի բարբառային միավորին հատուկ է պարզ բայերի գործածությունը: Հարադիր կազմությունները Հ.Չոլաքյանը համարում է թուրքերենի ազդեցությամբ արաբերեն հիմքով կազմված ձևեր, ի տարբերություն արաբերեն հիմքով կազմված պարզ և ածանցավոր

բայերի, որոնք, ըստ նրա, պետք է համարել արաբերենից կատարված ուղղակի փոխառություններ¹⁴⁴: Սակայն, ինչպես հայտնի է, հայերենին նույնպես բնորոշ է բաղիմաստի նկարագրական ձևերով արտահայտելը, ուստի դրանք ոչ միշտ կարելի է համարել նորաբանություններ:

6. Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակներում գործածվում են նաև սպասարկու սակավաթիվ խոսքի մասեր (դրանց թիվը միասին վերցրած երկու տասնյակի չի հասնում), որոնք արաբական լեզվամտածողության խոսքիմասային դասակարգմամբ ընդգրկվում են *մասնիկ* (ħarf) խմբի մեջ: Այսպես՝

ա) Քեսաբի խոսվածքում կիրառվող մակբայներից են՝ *թոււմ* «ամբողջովին» - tamm «ամբողջական, ավարտուն», *կաղ* «անգամ» - qatt «բավարար, բավական» չափի մակբայները:

բ) Անտիոքի բարբառախմբի փոխառյալ բառապաշարում արձանագրված է *ղէր* «գուտ, բացի» - ġayr իմաստով անիսկական կապը, որն ունի անկախ գործածություն, հոդ է ստանում և հոլովվում: Ըստ զբաղեցրած դիրքի՝ այն նախադրություն է, պահանջում է խնդրառություն հայցական հոլովով (օր.՝ *ղէր զիս չիկու* «սրանից բացի չկա»):

Արաբերենից է փոխառված *բւնդւլ* «փոխարեն» - badal իսկական կապը, որը հետադրություն է և պահանջում է խնդիր կրկին հայցական հոլովով¹⁴⁵:

գ) Սպասարկու խոսքի մասերից արաբերենից փոխառված բառ է Քեսաբի խոսվածքում հանդիպող ներհակական

¹⁴⁴ Չոլաքեան Յ., 2009, էջ 183:

¹⁴⁵ Նույնը, էջ 110-117:

ֆակահ «սակայն, բայց» - faqad շաղկապը: Սվեդիայի խոսվածքում արաբերենից փոխառյալ շաղկապներ չենք գտնում: Ավելին, այստեղ անգամ հայերենի շաղկապներ գրեթե չեն գործածվում. դրանք գերազանցապես փոխառություններ են թուրքերենից¹⁴⁶:

դ) Եղանականիչ բառերից արաբերենից փոխառված ձայնարկություն է *էվալա-ն*, որն արտահայտում է հավանություն, արաբերեն համարժեքն է wa 'al-llah «Աստված վկա» արտահայտությունը:

ե) Անտիոքի բարբառախմբի միավորներում գործածվող եղանակավորող բառերի մյուս խմբից որպես արաբերենից կատարված փոխառություններ առանձնացրել ենք հետևյալ տեսակի վերաբերականները.¹⁴⁷

1. Հաստատական. *տաբի* «անշուշտ» - ṭab'a'n «անկասկած, բնականաբար», *իլի* «անպայման, անպատճառ» - 'illa, *վալա/վալահի* «իրավ որ, ճշմարիտ, Աստված վկա» - wa 'al-llah «Աստված վկա», *վալա-բիլա* «անպայման, իրավ որ, իսկապես» - wa 'al-llah bi 'al-llah «Աստված վկա»:

2. Երկբայական. *սիջսի* «արդյոք» - 'ajaba'n «զարմանալի է, տարօրինակ է», *կալ* «իրբ թե» (Սվեդիայի խոսվածքում ունի դժգոհության որոշակի երանգի դրսևորում¹⁴⁸), առաջացել է արաբերենի qāl wa qil «ասեկոսե, բամբասանք» արտահայտությունից:

¹⁴⁶ Հանանյան Գ., նշվ. աշխ., էջ 146, Անդրեասյան Տ., նշվ. աշխ., էջ 123:

¹⁴⁷ Վերաբերականների դասակարգումը տե՛ս Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի քերականություն, Ե., 1976, էջ 230-245:

¹⁴⁸ Հանանյան Գ., նշվ. աշխ., էջ 148:

3.Սահմանափակման. *Ֆակադ* «միայն» - faqad:

4.Բաղձանքի. Քեսաբի խոսվածքում կիրառվում է *իշալի* «երանի» վերաբերականը, Սվեդիայի խոսվածքում՝ այդ բառի *իշալի* «Աստված տա, Աստծու կամոք» տարբերակը: Արաբերեն համարժեքն է՝ 'in šā' 'al-llah «եթե Տերը կամենա, Աստծու կամոք» արտահայտությունը: Բաղձանքի մյուս վերաբերականն է՝ *իլահիլ* «Աստված իմ» - 'al-llahī փոխառյալ բառը և այլն:

Անտիոքի բարբառախմբի՝ արաբերենից փոխառված բառապաշարում կան նաև սակավաթիվ կոչական բառաձևեր: Դրանք, սակայն, առավելապես գործածվում են առանց բուն բառիմաստի ընկալման՝ հիմնականում արտահայտելով խոսակցի նկատմամբ որոշակի վերաբերմունք: Այսպես՝ *յի-իսի/յէիսի* - «(ո՛վ) եղբայր իմ, եղբա՛յրս» - yā axxī, *շրբէն* «կնքահա՛յր» - šabīn և այլն:

Փոխառությունների մեջ երբեմն հանդիպում են այնպիսիք, որոնք կիրառվում են արաբերենի գրական և բարբառային տարբերակներին բնորոշ իմաստներով: Օր.՝ *սիմի* «1.հորեղբայր, 2.կնոջ հայր, 3.տարեց մարդկանց կոչական դիմելաձև» - 'amm: Վերջին իմաստը գործածվում է Սիրիայի բարբառում¹⁴⁹:

Այսպիսով՝ ինչպես վերը նշել ենք, արաբերենից փոխառված քերականական երևույթներ Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակներում չեն հանդիպում, իսկ

¹⁴⁹տե՛ս Эль-Массарани М., Сегаль В., Арабско-русский словарь сирийского диалекта, М., 1978.

փոխառյալ բառերը ենթարկվում են հայերենի տվյալ խոսվածքում համապատասխան խոսքի մասին բնորոշ թեքման օրինաչափություններին (կամ, համապատասխանաբար, չեն թեքվում): Դա, կարծում ենք, պայմանավորված է այն հանգամանքով, որ փոխատու և փոխառու լեզուները տարբեր լեզվաընտանիքներին են պատկանում: Այդ պարագայում քերականական երևույթներ փոխառելն առավել բարդ է, և, բացի այդ, արաբերենից փոխառված այդ բառապաշարը հայերենի վերոհիշյալ բարբառային միավորներ է ներթափանցել գերազանցապես բանավոր հաղորդակցման ճանապարհով, իսկ քերականական բնույթի փոխառություններ, ինչպես հայտնի է, ավելի դյուրին է կատարել հատկապես գրավոր եղանակով:

2. ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Անտիոքի հայերեն բարբառախմբի արաբական փոխառությունների քննությունն ընդգրկում է նաև հիշյալ տարածքային միավորների բառապաշարի համակողմանի ուսումնասիրությունն ու վերլուծությունը, քանի որ մի լեզուն մյուսից առաջին հերթին փոխառում է *բառապաշարը*¹⁵⁰, որը վերաբերում է նյութական և հոգևոր կյանքի տարբեր ոլորտներին. կենցաղի տարբեր առարկաների և գործիքների անվանումներ, կրոնական, վարչական, մշակութային եզ-

¹⁵⁰Гранде Б., Введение в сравнительное изучение семитских языков, М., 1972, էջ 14.

րույթներ և այլն: Դա բացատրվում է նրանով, որ բառային կազմը լեզվի առավել փոփոխուն մասն է և «բաց» է արտաքին ազդեցությունների համար, ուստի հասարակական կյանքում կատարվող փոփոխություններն առաջին հերթին արտահայտվում են բառային կազմի միջոցով¹⁵¹:

Ինչպես այդ մասին նշել ենք, հետազոտողները հաճախ բավարարվել են հայերենի բարբառային այս միավորներում առկա օտար փոխառությունների բառացանկեր ներկայացնելով՝ առանց դրանց համապարփակ հետազոտության, որը տվյալ պահի համար հավանաբար առաջնահերթություն չի համարվել: Դրանից բացի, հայերենի բարբառներին նվիրված մենագրական ուսումնասիրություններում փոխառյալ բառերի ձևախմբային քննություն նույնպես սովորաբար չի կատարվել: Ստորև փորձել ենք կատարել Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակներում արաբերենից կատարված անմիջական փոխառությունների այդօրինակ ուսումնասիրություն:

Այդ նպատակի համար անհրաժեշտ է նախ ներկայացնել փոխառյալ բառային միավորների գրական արաբերեն համարժեքները և դրանց նշանակությունները (ընդգրկել ենք ավելի քան չորս հարյուր բառային միավոր¹⁵²): Ուսումնասիրություններում զետեղված փոխառյալ որոշ բառերի արաբերեն տարբերակները դժվարացել ենք գտնել լեզվական տարբեր հանգամանքների հնարավոր փոխկապակցման պատճառով. հիշյալ խոսվածքների հնչյունական

¹⁵¹ Ակնարկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիտության և տերմինաբանության, Ե., 1982, էջ 201:

¹⁵² Տե՛ս սույն գրքի հավելվածը:

օրենքների ազդեցությամբ կրած փոփոխություններ, սիրիական բարբառից փոխառություն լինելու հետևանք, արաբական ծագում չունեցող, բայց որպես այդպիսիք վկայված, մասնավորապես՝ թուրքերենից, պարսկերենից միջնորդավորված և լեզվական այլ գործոնների ազդեցությամբ հընչյունափոխված և ձևաիմաստափոխված բառաձևեր (օր.՝ *հըճուխ* «սոխի արմատները», *շալաբուղիլ* «ինչ-որ բան խմբով վերցնել ու տանել», *զեյթխարվա* «հնդկայուղ» և այլն). դրանց արաբերեն համարժեքներն ամբողջությամբ ներկայացնելը մեր հիմնական նպատակից է, բացի այդ կասկած է հարուցում դրանց մի մասի արաբական ծագում ունենալը: Այդ բառային միավորներին հնարավորինս կանոնադաշտնանք հետազայում՝ նոր փաստերի առկայության պարագայում մեր կողմից կատարվելիք հետագա ուսումնասիրություններում:

Հայերենը և արաբերենը, ըստ իրենց տիպաբանական կառուցվածքի, ինչպես հայտնի է, միմյանցից տարբեր լեզուներ են: Արդի հայերենը հիմնականում կցական, իսկ արաբերենը՝ թեքական լեզու է: Այսինքն՝ և՛ ձևաբանական, և՛ բառակազմական թեքությունները հայերենում մեծ մասամբ կցվում են բառահիմքին: Մինչդեռ արաբերենում ձևաբանական և բառակազմական¹⁵³ միջոցներ են համարվում *ձայնափոքները*՝ բառում իրենց կազմության և դասավորության

¹⁵³Բառաստեղծումն արաբական քերականագիտության մեջ անվանվում է *al-iṣṭiqāq*, որն ունի երկու նշանակություն. նախևառաջ, նկատի է առնվում բառի արմատական հիմքն առանձնացնելու հմտությունը: Ավելի ուշ շրջանում այս եզրույթը նշանակում էր նաև «նոր բառերի ստեղծում նոր իմաստներով» (տե՛ս Белкин Б., *Арабская лексикология*, М., 1975, էջ 57):

փոփոխությամբ, այսինքն՝ ներքին թեքմամբ, ածանցները՝ նախաածանցներն ու վերջածանցները, երբեմն՝ միջնածանցները և արմատի որևէ բաղաձայն հնչյունի կրկնությունը¹⁵⁴: Հաճախ երկու կամ երեք միջոցներն օգտագործվում են միաժամանակ:

Բառարմատների կառուցվածքային յուրահատկությունների առումով ևս հայերենը և արաբերենը սկզբունքորեն տարբերվում են: Ընդհանրապես, արմատների կառուցվածքային առանձնահատկությունների համադրման պարագայում պայմանականորեն առանձնացվում է նրանց երկու տեսակ, և ըստ դրա՝ լեզուների երկու տիպ՝ *բաղաձայնական* և *վանկային* կամ *բաղաձայնաձայնավորային*¹⁵⁵: Առաջինը հիմնականում հատուկ է սեմական, իսկ երկրորդը՝ հնդեվրոպական լեզուներին, հետևաբար՝ արաբերենը բաղաձայնական, իսկ հայերենը բաղաձայնաձայնավորային տեսակին է պատկանում: Արաբերենի բառարմատը բաղաձայն հնչյուններից բաղկացած, այլևս անբաժանելի միավոր է, որի վրա տարբեր ածանցներ և ձայնավորներ «հավաքելուց» հետո կազմվում են հիմքերը և բառերը¹⁵⁶: Այսինքն՝ արաբերենի արմատի իմաստակիրն առավել հաճախ եռաբաղաձայն (երբեմն՝ քառաբաղաձայն, հազվադեպ՝ հնգաբաղաձայն, նաև քիչ քանակությամբ երկբաղաձայն)¹⁵⁷ հաջորդականությունն է, որը ձևաիմաստային որոշակիություն է ստանում հատկապես կարճ ձայնավորի (ձայնավորների) ներառմամբ, այն է՝ վանկի (վանկերի) ձևավորմամբ (օր.՝ *jls* արմատից՝ *jālis*

¹⁵⁴ Гранде Б., 1972, էջ 102:

¹⁵⁵ Джаукян Г., Универсальная теория языка, Е., 1999, էջ 106:

¹⁵⁶ Гранде Б., 1963, էջ 19:

¹⁵⁷ Նույն տեղում:

«նստող», *jalis* «հարևան», *majlis* «խորհուրդ», *jalsa* «նստարան» և այլն): Ձայնավորները, այսպիսով, բնորոշում են բառի քերականական ձևը և ինքնին կամ տարբեր ածանցների համակցմամբ արտահայտում են բառակազմական և բառափոխական իմաստներ:

Ինչ վերաբերում է լեզուների երկրորդ տեսակին, այդ թվում նաև հայերենին, ապա այստեղ ձայնավորն ինքնին կամ բաղաձայնի համադրությամբ արմատի իմաստի կրողն է¹⁵⁸: Հայերենում *արմատ* ասելով հասկացվում է բառի հիմնական ձևույթը¹⁵⁹, իսկ ձևույթը, հայտնի է, որ ձևի և իմաստի միասնությունն կազմող նվազագույն լեզվական միավորն է: Հիմնական ձևույթին կամ արմատին հակադրվում է երկրորդական ձևույթը կամ մասնիկը, որն արտահայտում է քերականական իմաստ: Կախված նրանից՝ երրորդական ձևույթը ծառայում է նոր բառ, թե բառի քերականական ձև կազմելուն, անվանվում է համապատասխանաբար բառակազմական ձևույթ, այսինքն՝ *ածանց*, իսկ երկրորդը՝ բառահարաբերական ձևույթ՝ *թեքույթ*¹⁶⁰ (օր.՝ *տուն-արմատ*, *տն-ային* ածանց, *տն-ից* թեքույթ): Ուրեմն՝ հայերենին ևս բնորոշ է նախահար և վերջահար ածանցմամբ նոր բառաձևերի ստեղծումը:

Այսպիսով՝ արաբերենի բաղաձայնական արմատն ունի ընդհանուր հասկացական իմաստ, որով ևս տարբերվում է հայերենի բառարմատից, որն ունի կոնկրետ իմաստ: Բացի այդ, հայերենի բառարմատը, ի տարբերություն արա-

¹⁵⁸ Джаукян Г., նշվ. աշխ., էջ 108:

¹⁵⁹ Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 209:

¹⁶⁰ Մանրամասն տե՛ս Աղայան Է., նշվ. աշխ., էջ 209-212:

բերենի, կարող է արտահայտվել անգամ մեկ հնչյունով: Օրինակ՝ Հուրյուն, Հակ և այլն:

Ինչ վերաբերում է բառահիմքերին, ապա արաբերենում բառահիմքը քերականորեն «անավարտ» բառն է¹⁶¹, որը բաղկացած է առնվազն երկու ձևային խմբից՝ *արմատից*, որը կազմված է բաղաձայններից ու իր մեջ չի ներառում բառի ձևին առնչվող որևէ պատկանելություն և *բառակազմական կաղապարից*, որն իրենից ներկայացնում է «ընդատվող» ածանց: Այն կազմվում է կա'մ միայն ձայնավորների հերթագայությամբ կա'մ էլ՝ ձայնավորների և բաղաձայնների համակցմամբ¹⁶²: Կաղապարի բաղաձայնները, կախված բառահիմքում իրենց դիրքից, կոչվում են նախածանցներ, միջնածանցներ, ածանցներ: Բառակազմական կաղապարը ստեղծվում է բառային և քերականական հատկանիշների համակցմամբ, որով էլ քերականորեն կազմվում է արմատը՝ ստեղծելով բառը: Բառահիմքի ձևաբանական տարանջատման տեսանկյունից արմատը և բառակազմական կաղապարը համարվում են նվազագույն իմաստակիր միավորներ: Բառահիմքերն իրենց հերթին դասակարգվում են ըստ արմատի կազմության: Այսպես, այն հիմքերը, որոնց բաղաձայն հնչյունների կազմում ներառվում են միայն արմատի բաղաձայնները, համարվում են *պարզ* կամ *ոչ ընդարձակ* (mujarrad, բառացի՝ «մերկ»): Բաղաձայն հնչյունների կազմը բառակազմական այս կամ այն եղանակով հավելած հիմքերն

¹⁶¹ Гранде Б., Курс арабской грамматики в сравнительно-историческом освещении, М., 1963, էջ 68:

¹⁶² Белкин, Б., նշվ. աշխ., էջ 59-60:

անվանվում են ընդարձակված¹⁶³ (*mazīd fihi* «հավելում ունեցող»):

Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակներում բառակազմական և քերականական յուրահատկությունները հիմնականում նույնանում են մայրենի լեզվին՝ արևմտահայերենին: Մասնավորապես, Սվեդիայի խոսվածքում բառակազմական միջոցներ են բառաբարդումը՝ հիմնականում առանց հոդակապի կամ շաղկապի գործածության և ածանցումը՝ առավելապես հետադաս ածանցների կիրառմամբ¹⁶⁴: Քեսաբի խոսվածքն աչքի է ընկնում բառաբարդման լայն կիրառությամբ և մեծ թվով վերջաձանցների գործածությամբ¹⁶⁵:

Հիմք ընդունելով երկու լեզուների (արաբերենի և հայերեն բարբառի) վերոնշյալ տիպաբանական բնութագրերը՝ մեր կողմից ուսումնասիրվող նյութի վերաբերյալ կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական դրույթները.

1. Անտիոքի հայերեն տարածքային տարբերակներն արաբերենից բառարմատներ՝ որպես այդպիսիք, չէին կարող փոխառել. դրանք արաբերեն բառեր են (աձանցավոր), որոնք, սակայն, հայերենի բարբառային միավորներում ընկալվում են որպես բառարմատներ կամ արմատական բառեր: Օր.՝ *բինա* «շենք» - *binā'*, *դին* «կրոն» - *ḏīn* «հավատ, կրոն», *հաբրըր* «գերեզման» - *qabr*, *համար* «լուսին» - *qamar*, *քյւլբ* «շուն» - *kalb*, *մինսի* «նավահանգիստ» - *mīnā'*, *շարթ* «պայման» - *šarṭ* և այլն:

¹⁶³ Гранде Б., 1963, էջ 68:

¹⁶⁴ Անդրեասյան Ս., նշվ. աշխ., էջ 125-132:

¹⁶⁵ տե՛ս Չոլաքեան Յ., 2009, էջ 186-199:

2. Եթե անգամ արաբերեն բառն Անտիոքի հայերեն բարբառային միավորներ է ներթափանցել խոսքի շղթայում ձեռք բերած ձևաբանական իր տարբեր արտահայտություններով (հոգնակի թիվ, հոլովված ձև), փոխառու լեզվում (բարբառում) ընկալվում և գործառվում է որպես ուղիղ բառաձև՝ արմատ: Այսպես՝ Քեսաբի, Սվեդիայի բառապաշարում առանձին ղեպքերում արաբերենի հոգնակի թվով բառաձևերը ընկալվում են որպես եզակի թվով բառեր: Օր.՝ *ուսուլ* «կանոն, կարգ» ծագում է արաբ. 'usūl «կանոններ, դրույթներ» ձևից, եզ. թ.՝ 'ašl, *հուսրտ* «սահման» - hudūd (սահմաններ), եզ.թ.՝ ḥadd, *կրոզ* «դրուշ, դրամի տեսակ» - qurūš (դրամներ), եզ.թ.՝ qirš, *ֆուկարա* «աղբատ, խեղճ -fuqarā' (աղբատներ, ջրավորներ), եզ. թիվ՝ faqīr, *յուսեր* «գերի»-yasīr (գերիներ, ստրուկներ), եզ. թ.՝ asīr, *հալաղ-իլ* «շրջապատել»-ḥalaq (1.մատանիներ, օղեր, 2.օղակներ), եզ.թ.՝ ḥalqa, *հուլուր* «հեծան, հաստ գերան» - qulūb «սրտեր», եզ. թ.՝ qalb (սիրտ, հոգի), *հալվուտ* «նորածին ուլը լեռներից տուն բերելու առթիվ հովվին տված նվեր» - ḥalwiyyāt (քաղցրեղեն, չորացրած մրրգեր), նույն արմատից ծագում է ḥalūān (նվեր) բառը և այլն:

3. Արաբական փոխառությունների մի մասը ժամանակի ընթացքում հիմնական բառապաշարի մեջ է մտել և բնիկ բառերի նման բառակազմական կառույցներ ձևավորել:

Մասնավորապես, Քեսաբի խոսվածքում, որպես արդեն ամրագրված ձևեր, բառաձանցման եղանակով կերտվել են մի շարք նոր բառեր, որոնք կազմվել են փոխառյալ հիմնական ձևույթ + հայերենի (բարբառի) բառակազմական ձևույթ կաղապարով. այսպես՝ արաբերենի գոյականներից և բար-

բառի *-ունք* (արտահայտում է արյունակցական, ընտանեկան կապեր), *-ուղ/օղ* (ցույց է տալիս ինչ-որ բանից բաղկացած լինելը), *-ինա (iü)/էնի* (ծառատեսակի իմաստ է արտահայտում), *-իկ, -ութէն* վերջածանցներից¹⁶⁶ կազմվել են հետևյալ պարզ ածանցավոր բառերը՝ *üǖ-ունք* «հորեղբայրենք» - ‘amm (հորեղբայր), *հւնրւմ* - *ուիթէն* «գողություն» - ħarām (մեղք), *մւնրւմ -ուիթէն* «քառորդով աշխատանք» - murāba‘a (աշխատանք՝ բերքի քառորդի դիմաց), *մըշմըշինսի/էնի* «ծիրանենի» - mišmiš (ծիրան), *կուիթ-իկ* «փոքր գմբեթ» - qubba, *հւնսնֆ-իկ* «ծորակ» - hanafiyya, *ըուպ-ուտ* «ռուպոտ» (աման) - rubb (մրգահյութ, մուրաբա), *սարունուղ/օղ* «օճառոտ» - sābūn (օճառ): Պարզ ածանցավոր այսպիսի նորակազմությունները, սակայն, հիմնականում սահմանափակվում են բերված օրինակներով:

Կիրառական է նաև *դւրէր* - *ուիթէն* «օտարություն» բառը. կազմված է փոխառյալ հիմնական ձևույթ (արաբերենում այն ածական է, որը կարող է նաև գոյականաբար գործածվել. ġarīb «1.օտար, անհայտ, 2.օտարերկրացի») + հայերենի (բարբառի) բառակազմական ձևույթ կադապարով:

Սվեդիայի բարբառային միավորում արաբերենի հիմնական ձևույթներից և խոսվածքում գործածվող *-ի, -ըզ, -ուտէն, -üǖ*¹⁶⁷ բառակազմական ձևույթներից են կազմվել հետևյալ բառերը. *կիթ-ի կամ կիթ-ըզ* (ձնագունդ կամ ձնագրն-

¹⁶⁶Ինճեճիբեան Տ. Ա., նշվ. աշխ., էջ 124-126, Չոլաբեան Յ., 2009, էջ 192-198, Փաշայան Ա., նշվ. աշխ., 182-184:

¹⁶⁷ Անդրեասյան Տ., նշվ. աշխ., էջ 127-132:

դիկ) - qubba, մաշ-ըզ (ունելի) - māšīq, սըւ̄-ի կամ սըւ̄ -ըզ (տիկին, օրիորդ՝ հեզնաբար) - saīda, հյւրւմ-ուտէն (գո-դություն) - ḥarām (մեղք), ջւ̄ղըլ-ջուղւ̄ւլ-ւ̄ւք (ոամիկ տգետ-ների հավաքույթ) - jāhil (հզն.՝juhāl) «1.անբաղաքավարի, 2.հիմար, տգետ»:

Ուշագրավ է, որ Անտիոքի բարբառախմբի տարած-քային տարբերակներում արաբերենից փոխառված բառա-ծանցներ նույնպես չեն հանդիպում, քանի որ չէին կարող գործառվել՝ ելնելով երկու լեզուներին բնորոշ բառակազ-մական վերոշարադրյալ առանձնահատկություններից. արա-բերենի ածանցավոր բառերը ևս ընկալվում և գործածվում են որպես արմատական բառեր: Այսպես՝ *դւ̄ւրս* «դաս» բառի արաբերեն համարժեք *dars* բառային միավորում *drs*-ն եռա-բաղաձայն արմատն է, և տեղի է ունեցել անվանական հիմքի ընդարձակում մեկ կարճ ձայնավորով: Նմանօրինակ՝ *զէման* «ժամանակ» հայերեն բարբառային փոխառության արաբե-րեն *zamān* սկզբնաձևում արմատը *zmn* եռաբաղաձայն հա-ջորդականությունն է, իսկ անվանական հիմքն ընդարձակ-վել է կարճ և երկար ձայնավորներով (տվյալ դեպքում սրանք միջնաձանցներ են)¹⁶⁸ և այլն:

4.Խոսքի շղթայից վերցված ձև, հավանաբար, կարելի է համարել նաև արաբերենի բառակազմական -a ածանցի՝ իզական սեռի բառերի ձևաբանական ցուցիչի¹⁶⁹՝ ոչ ուղիղ

¹⁶⁸ Անվանական հիմքերի ընդարձակման մասին տե՛ս Гранде Б., 1963, էջ 78-96:

¹⁶⁹ Белкин Б., նշվ. աշխ., էջ 93:

ձևին հատուկ կիրառությունը¹⁷⁰. *սուրայթ* «երես, դեմք» - *šūra*, *կըսամայթ* «բախտ, բաժին» - *qisma*, *մասլահայթ* «շահի աղբյուր, շահեկանություն» - *maşlahā* «օգուտ, շահ», *հասր^mօթ* «կարոտ» - *hasra* «կարոտ, վիշտ», *հււրւսւյթ* «շարժում» - *haraka*, *մուրաջայթ* «խնդրանք» - *murāja‘a* «1.ուսումնասիրություն, գննում, 2.դիմում, խորհրդատվություն», *սիւսսւյթ* «քաղաքականություն» - *sīāsa* «1.կառավարում, ղեկավարում, 2.քաղաքականություն», *սուրատ* (*սուրւյթ*) «երես, դեմք» - *šūra* «1.տեսք, կերպար, 2.նկար, դիմանկար», *սուֆատ* «պատկեր» - *şifa* «յուրահատկություն, որակ» և այլն:

5.Արաբերենից կատարված փոխառություններում բավական քիչ են այնպիսի բառերը, որոնք ենթարկվել են խնդրո առարկա հայերեն խոսվածքների հատուկ բառաբարդման օրինաչափություններին: Դրանք սակավաթիվ են հատկապես Քեսաբի խոսվածքում. այստեղ փոխառություններն իրենց կառուցվածքով հիմնականում պարզ բառեր են: Ուշագրավ են, թերևս, Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակներում բառաստեղծման այս եղանակով առաջացած հետևյալ նորակազմությունները.

ա) Արաբերենից փոխառյալ հիմնական ձևույթ+հայերենի (բարբառի) հիմնական ձևույթ կաղապարով կազմված բարդ բառեր: Այդպիսին է, մասնավորապես, Քեսաբի խոսվածքում կիրառվող *էկէւնուն* բարդ բառը, որը բաղկացած է

¹⁷⁰ Է-ն, սակայն, բառի ուղիղ, բառարանային տարբերակում չի արտաբերվում. այն արտասանվում է խոսքի շղթայում՝ կապակցվելով հաջորդ բառին, ուստի նշված բառերը հավանաբար փոխառված են խոսքի շղթայից, կամ մի մասը միջնորդավորված փոխառություններ են, քանի որ իզական սեռի բառերի մեծ մասն արաբերենից փոխառվել է ուղիղ ձևով:

հէկ «անասունի կեր» (‘alīq «կեր, անասնակեր»)+էմուն «աման» բաղադրիչներից: Սվեդիայի խոսվածքում գտնում ենք նույն բառի՝ այդ խոսվածքին հասուկ հնչյունափոխված և իմաստային փոքր-ինչ այլ նրբերանգով *սիլգսնուն* տարբերակը, որն ունի «անասունի վզից կախվող *սիլագով* (կերով) պարկ» նշանակությունը:

բ) Հայերենի (բարբառի) հիմնական ձևույթ + արաբերենից փոխառված հիմնական ձևույթ + հայերենի (բարբառի) բառակազմական ձևույթ կաղապարով կազմված բարդ ածանցավոր բառ. այդօրինակ կազմություն է Սվեդիայի խոսվածքում գործածվող *սըլհըմըզ* բառը: Ըստ Տ.Անդրեասյանի՝ ճիշտ ձևը պետք է լինի *սիվհըմըզ*¹⁷¹ «սև կատվիկ». *սըլ/սիվ* («սև») + *հըմ* (qatt «կատու»)+*ըզ*:

գ) Արաբերենից փոխառված հիմնական ձևույթ + արաբերենից փոխառված հիմնական ձևույթ կաղապարով կազմված բարդ բառեր. *բանտիզ*¹⁷² «հետույքը երևացող՝ բաց» (bā’in «երևացող, ակնհայտ» և ʿiz «հետույք»), *նաֆրսըբի* «հրպարտ» - nafs ‘al-kabīr «հպարտ, պատվախնդիր» (բառացի՝ «մեծ հոգու տեր, վեհանձն»՝ nafs «հոգի» և kabīr «մեծ»), *շսմսըհամար* «արևածաղիկ» (բառացի՝ šams «արև» և qamar «լուսին»), *կահբեզէն/կսիբսսն* «շոյիչ հայիոյանք» (qahba «մարմնավաճառուհի» և ‘adān «աղոթքի կանչ, կոչ») և այլն:

¹⁷¹ Անդրեասյան Տ., նշվ. աշխ., էջ 183:

¹⁷² Քեասբցիները միջգյուղական մրցակցության ոգով այս անարգական խոսքը սովոր էին հղել սվեդիացիների հասցեին (տե՛ս Անդրեասյան Տ., նշվ. աշխ., էջ 168):

դ) Արաբերենից փոխառված հիմնական ձևային կրթությունը կազմված կրկնավոր հարադրությունն է. *հալադու-հալադու* «շուրջանակի, չորս բոլորը» (հալազ «1.մատանիներ, օղեր, 2.օղակներ», եզ. թ.՝ halqa):

Թվարկված կազմությունների մեծ մասը գործածվում է Սվեդիայի խոսվածքում: Քեսաբի խոսվածքի՝ արաբերենից կատարված փոխառություններում այդպիսիք գրեթե չեն հանդիպում:

Անտիոքի բարբառային միավորներում արաբերենից փոխառյալ բաղադրիչով, բառաբարդման եղանակով ստեղծված բառերը գրեթե սահմանափակվում են վերոնշյալներով:

Բարդ բառերի սակավությունը, կարծում ենք, պայմանավորված է նախնառաջ բանավոր խոսքի առանձնահատկություններով:

Հայերենի նշված տարածքային տարբերակներում, ինչպես անդրադարձել ենք, բավական հաճախադեպ են բայական հարադիր կազմությունները, որոնց առաջին բաղադրիչը արաբերեն բառ է:

Անտիոքի խնդրո առարկա խոսվածքներում (հատկապես՝ Սվեդիայի) խոսքն ավելի պատկերավոր դարձնելու նպատակով, կիրառվում են նաև արաբերենից փոխառված մի շարք արտահայտություններ և բառակապակցություններ: Օրինակ՝ *ֆըլէյֆիլ վաղըտ* «բերքի ամենաառատ ժամանակը» (բառացի՝ «պղպեղի լի, առատ ժամանակը» - fulful (հզն.՝ falāfil) «տաքդեղ, պղպեղ», waqt «ժամանակ»), *թահթըլլ սըբին* «դանակի սպառնալիքով» (tahta 'as - sikkīn՝ tahta «տակ, ներքևում», sikkīn «դանակ», այսինքն՝ «վտանգի մեջ»), *թահթըլլ դարբ* «ծեծի սպառնալիքով» (tahta 'ad - ğarb՝ ğarb

«հարված, ծեծ»), *թահթըլ հիսաբ* «ի հաշիվ» - (tahta 'al - hisāb` hisāb «հաշիվ») և այլն:

6. Արաբերենից փոխառված մի շարք բառերով էլ խնդրո առարկա խոսվածքներում կազմվել են նույնարմատ անվանական և բայական ձևեր. *բարթէլ* «կաշառք» - bartīl, *բարթըլիլ* «կաշառել», *հ^mօլ* «իրավունք» - haqq, *հ^mօլ* *ինիլ* «իրավունք ունենալ», *մասխարու* «ծաղրածու» - masxara «1.ծաղրի առարկա, 2.դիմակ», *մասխարիլ* «ծաղրել», *մահրում* «գուրկ, գրկված» - mahrūm, *մահրումիլ* «գրկել», *մնրնբու* «ուրիշի կալվածքում քառորդով աշխատող» - murābi' «բնավարձակալ, բերքի քառորդով աշխատող գյուղացի», *մնրնբութէն* «քառորդով աշխատանք» - murāba'a «բերքի քառորդով աշխատանք», *սաբուն* «օձառ» - sābūn, *սաբունուղ/-օղ* «օձառոտ», *սաբունիլ* «օձառել», *ըրօբ* «ռուպ» - rubb «մրգահյութ, մուրաբա», *ըրպուտ* «ռուպոտ (աման)», *ըրպըտիլ* «ռուպի պես մածուկ լինել», *հննդիր* «1.պատրաստ, 2.ներկա» - hādir «1.ներկա 2.ընթացիկ, 3.պատրաստ, կանխիկ», *հննդըրվիլ* «պատրաստվել», *հալաղիլ* «շրջապատել» - ḥalqa (hqu.՝ halaq «1.օղ, մատանի, 2.օղակ»), *հալաղու -հալաղու* «շուրջանակի, չորս բոլորը», *հալաղվիլ* «ինչ-որ բանի կամ ինչ-որ տեղի շուրջը դառնալով գնալ՝ փոխանակ ուղիղ գծով ընթանալու», *ղըմ* «օղի ճնշող՝ տաք լինելը» - ḡamm «1.վիշտ, 2.տոթ, հեղձուցիչ օղ», *ղըմիլ* «տաքությունից ինքն իրեն ճընշված զգալ», *քըփս* «ինչ-որ բանի՝ ճնշումով ամանի մեջ տեղավորված լինելը» - kabs «1.ճնշում, ճզմում, մամլում, 2. պահածոյացում», *քըփսիլ*

«ճմլել, ճնշել» - kabasa «1.ճնշել, ճզվել, մամլել, 2.պահածոյացնել» և այլն:

7.Արաբերենից փոխառված բառերի մի խումբ, դառնալով հիմնական բառաֆոնդի անդամ և ունենալով գործածության բարձր հաճախականություն, կիրառվում է ն՝ Քեսաբի, և՛ Սվեդիայի խոսվածքներում (հավանաբար՝ բարբառախմբի մյուս միավորներում ևս)՝ ենթարկվելով, իհարկե, տվյալ խոսվածքին հատուկ հնչյունական օրինաչափություններին, երբեմն էլ ստանալով իմաստային նրբերանգներ: Այսպես՝ *բաշեկ* (Ք.խ.), *բււշի* «բազե» (Ս.խ.) - bašiq «ճուռակ, սակո, շահեն», *բււղեխ* (Ք.խ.), *բււղիխ* (Ս.խ.) «սել» - baṭṭix 'aşfar, *բւրւքի* «օրհնություն» (Ք.խ.), *բւրւկի* «օրհնություն, լիություն. մաղթանք, որ տրվում է բերքահավաքի կամ մնայուն հավաքելու դնելու առթիվ» (Ս.խ.) - baraka «1.օրհնություն, 2.երկնային շնորհ», *կըղըմիլ* «սռաջ շարժվել» (Ք.խ.), *կըղըմիլ* «քայլ առնել, սկսել» (Ս.խ.) - qadam (քայլ), *կաբբ* «մահմեդականի գերեզման» (Ք.խ.), *կաբբ* «գերեզման» (Ս.խ.) - qabr «գերեզման», *հււլլուն* «խխունջ» (Ք.խ.), *հւլլիզին* «խխունջի խեցի» (Ս.խ.) - ḥalazūn «խխունջ», *կէլուն* (Ք.խ.), *կւյնն* (Ս.խ.) - ḡalyūn «ծխամորձ, չիբուխ», *շարմութա* (Ք.խ.), *շարմուտա* «պոռնիկ» (Ս.խ.) - šarmūta «1.լաթի կտոր, 2.մարմնավաճառուհի», *վւզէր* «վեզիր, նախարար» (Ք.խ.), *վւզէր* «նախարարապետ, վարչապետ» (Ս.խ.) - wazīr «վեզիր, նախարար», *մաշու* (Ք.խ.), *մաշրգ* - māšiq «ունելի», *թ՝ոլթ* (Ք. խ.), *թ՝նիթ* (Ս.խ.) - tult «մեկ երրորդ» և այլն:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ Անտիոքի բարբառախմբի տարածքային միավորներն արաբերենից բառարմատներ, ինչպես նաև բառաձանցներ չեն փոխառել: Մա պայմանավորված է փոխատու և փոխառու լեզուներում կիրառվող բառակազմական միջոցների տարբերություններով: Արաբերենից փոխառված բառը, փոխառու լեզվի բառապաշար ներթափանցելով խոսքի շղթայում ձեռք բերած ձևաբանական և բառակազմական իր տարբեր դրսևորումներով, հաճախ ընկալվում և գործածվում է որպես ուղիղ բառաձև՝ արմատ: Ինչպես բառաձանցման, այնպես էլ բառաբարդման լայն գործածության, այսինքն՝ փոխառյալ բառի մասնակցությամբ բառակազմական միջոցների հաճախադեպ կիրառության դեպքեր հայերենի բարբառային խնդրո առարկա միավորներում չենք հանդիպում: Դրա պատճառներից մեկն էլ, կարծում ենք, այն է, որ բարբառակիր հանրությունը առօրյա կենցաղային, հիմնականում՝ բանավոր, պարզ հաղորդակցման պայմաններում անհրաժեշտություն չունի դիմելու լեզվական այսօրինակ միջոցներին: Որպես բացառություն կարելի է համարել հարադիր բայերի կիրառությունը: Բայը, արտահայտելով գործողության նշանակություն և գործածության տեսակետից բառապաշարի առավել կենսունակ շերտ ներկայացնելով, ավելի ճկուն կերպով է ենթարկվել հայերենի բառակազմական օրինաչափություններին:

3. ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏԱԾ ԲԱՌԻՄԱՍՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Լեզվում բառերն իմաստային, այսինքն՝ բառիմաստի արտահայտման տեսակետից, պայմանավորված լեզվական և արտալեզվական մի շարք գործոններով, կարող են տարբեր իմաստներ և գործածություն ունենալ կամ ձեռք բերել: Այդպիսիք են նաև փոխառությունները:

Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակներում բառերի մեծ մասը կիրառվում է փոխաստու լեզվում ունեցած նույն իմաստով, այսինքն՝ բառիմաստի պահպանմամբ: Օր.՝ *համար* «լուսին» - qamar, *մնշուր* «հայտնի, անվանի» - mašhūr, *ջեբ* «գրպան» - ğayb, *մնշուլ/մնշուլ* «զբաղված»-mašğūl, *կեյուն/հնյուն* «ծխամորձ» - ğalyūn, *քուրսա* «աթոռ» - kursī, *բինա* «շենք» - binā', *յսնի* «այսինքն» - ya'nī և այլն:

Փոխառյալ մի շարք բառեր, սակայն, ենթարկվել են ոչ միայն հնչյունական, այլ նաև բառիմաստային փոփոխությունների: Արաբերենից կատարված փոխառյալ բառերի՝ հայերենի վերոնշյալ բարբառային միավորներում կրած բառիմաստային փոփոխությունները, մասնավորապես դրանց տարբեր դրսևորումները¹⁷³ արտահայտվում են հետևյալ կերպ.

ա) *Բառիմաստի նեղացում, մասնավորեցում*. սովորաբար, եթե փոխաստու լեզվում բառը բազմիմաստ է, ապա փո-

¹⁷³Բառիմաստափոխության տեսակները տե՛ս Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1993, էջ 54-60, Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1989, էջ 138-142:

խառելու ժամանակ հաճախ վերցվում է նրա իմաստներից մեկը, այսինքն՝ տեղի է ունենում բառիմաստի ծավալի նեղացում: Այսպես՝ *qabr* բառն արաբերենում նշանակում է «գերեզման», մինչդեռ Քեսաբի խոսվածքում նրա իմաստը մասնավորեցվել է՝ *ġāprr* «մահմեդականի գերեզման» նշանակությամբ: *jarm* բառն արաբերենում ունի «նավ, նավակ, գետային բեռնանավ» իմաստները, Սվեդիայի խոսվածքում տեղի է ունեցել բառիմաստի մասնավորեցում, միաժամանակ նաև նոր իմաստի ձևափոխում՝ *zāprr* «1.նավակ, 2.ձկնորսանավակ»: *mišmiša* բառն արաբերենում ունի «1.ծիրան, 2.ծիրանենի» իմաստները: Քեսաբի խոսվածքում *mrzultz* բառը կիրառվում է միայն մրգապտղի՝ «ծիրան» իմաստով, իսկ ծառի նշանակության արտահայտման համար գործածվում է խոսվածքի *-hīnū/-līh* (ծառատեսակ ցույց տվող) վերջածանցով կազմված բառը՝ *mrzmrzīhīnū/līh* «ծիրանենի»: Մեկ այլ փոխառյալ բառ՝ *ūšr*, Սվեդիայի խոսվածքում ունի «մուրաբայով ձվածեղ» իմաստը: Այն արաբերենից փոխառված *ajja* բառի հայերեն բարբառային տարբերակն է այն տարբերությամբ, որ փոխատու լեզվում բառն ունի «ձվածեղ» իմաստն ընդհանրապես:

բ) *Բառիմաստի ընդլայնում*. Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակներում գործածվում են փոխառյալ այնպիսի բառեր, որոնք արաբերենի բուն բառիմաստի կողքին ձևափոխ են բերել նոր իմաստներ՝ ընդլայնելով բառիմաստի ծավալը: Այսպես արաբերենում *šaylān* բառը նշանակում է «սատանա, դև, հրեշ»: Քեսաբի խոսվածքում այն, հիշյալ իմաստից բացի, ստացել է այլ իմաստ ևս՝ *zāyṣān* «1.դև,

2.ձուկ»: shabaka բառն արաբերենում ունի «ցանց, ուռկան» իմաստները, Քեսաբի խոսվածքում՝ շրբրբի բարբառային փոխառությունը, փոխատու լեզվում ունեցած հիմնական իմաստով կիրառվելուց զատ, ձեռք է բերել «ձուկ» իմաստը ևս: *simsār* «առևտրական և բորսայական գործարքների միջնորդ, գործակալ» իմաստն ունեցող արաբերեն բառը վերոնշյալ խոսվածքում կիրառվում է նաև լրացուցիչ՝ *սբմսար* «զագանի տեսակ» իմաստով և այլն:

Բառիմաստի շրջմամբ՝ հակառակ իմաստով կիրառվող բառեր, հայերենի վերոհիշյալ տարածքային տարբերակներում, որքանով կարողացանք պարզել, չեն գործածվում:

Մի շարք բառեր ամբողջությամբ ենթարկվել են *իմաստափոխության*՝ նոր իմաստի ձեռքբերմամբ: Այսպես՝ *թնլնմու* «կաթնեղենի տեսակ» - *tulma* «փոքր հաց, հացիկ», *սլլսմ* «մարդկություն» - *‘alam* «աշխարհ», *մասխարու* «ծաղրածու» - *masxara* «1.ծաղրի առարկա, 2.դիմակ», *թութիա* «ծովաստղ» - *tūtā* «ցինկ» («ծովաստղ» բառն արաբերենում արտահայտվում է *najm ‘al-bahr* բառակապակցությամբ՝ *najm* «ծով» և *bahr* «աստղ»), *մահանու* «պատրվակ» - *mihna* «1.փորձություն, փորձանք, 2.վիշտ», *մսմդուհ* «բերրի, լավ մշակված, թանկարժեք (հողատարածք)»-*mamdūh* «փառաբանված, գովերգված», *դավու* «դատ» - *dawī* «աղվուկ, դորդյուն», *փուրդ* «կենտ, կրճատ» - *fard* «1.մեկ, միակ, 2.անձ, անհատ»:

Հայվուտ բառը խոսվածքում գործածվում է «նորածին ուլը լեռներից տուն բերելու առթիվ հովվին տրված նվեր» իմաստով, մինչդեռ նրա արաբերեն *halwiyyāt* համարժեքն ունի «քաղցրեղեն, չորացրած մրգեր» իմաստները («նվեր» իմաստն ունի նույն արմատից ծագող *hulūnān* բառը) և այլն:

Հաճախ փոխառու լեզուն (բարբառը) փոխառում է փոխառու լեզվի բազմիմաստ բառի ոչ առաջին, հիմնական, այլ երկրորդ կամ այլ իմաստները, որոնք տվյալ պարագայում առավել կենսունակ են և ունեն գործածության ավելի բարձր հաճախականություն: Անտիոքի բարբառախմբի խոսվածքներում արաբերենից կատարված փոխառությունների այդպիսի օրինակներ են՝ *շարմութա/շարմուտա* «անբարոյական կին»-šarmūta «1.լաթ, 2.մարմնավաճառուհի», *բըզնև*՝ «խըխունջ»-bazzāqa «1.թըքաման, 2.լորձնեակ, կակղամաշկ կենդանի», *թըսսիհ* «համրիչ» -tasbiḥ «1.փառաբանում, դրվատում, 2.տերողորմյա, համրիչ», *բուտնիլ* «տակից լավ խառնել (գործերը)» - baṭṭana «1.տակից մեխել, փակել, 2.սադրել, դըրդել», *դըմ*՝ «օղի ճնշող՝ տաք լինելը» - ḡamm «1.վիշտ, 2.տոթ, հեղձուցիչ օդ» և այլն:

Արաբերենից փոխառված մի շարք բառեր, հատկապես՝ այնպիսիք, որոնց իմաստներն արտահայտվել են նկարագրական եղանակով՝ բառակապակցությունների միջոցով, վերցված լինելով խոսքի շղթայից, փոխառու լեզվում արտահայտվել են ոչ ամբողջությամբ. բառակապակցության մի մասը սղվել է: Քեսաբի խոսվածքում, օրինակ, *թավլա* բառն ունի «նարդի» իմաստը, մինչդեռ *թավա* արաբերենում նշանակում է «սեղան», իսկ «նարդի» իմաստն արտահայտվում է *la'ba at-ṭāwila* (բառացի՝ «սեղանի խաղ») բառակապակցությամբ: Նմանօրինակ՝ *սուլթան* «1.սուլթան, 2.ձկան տեսակ» փոխառյալ բազմիմաստ բառի առաջին իմաստն արաբերենում արտահայտվում է *sulṭān* «սուլթան, կառավարիչ» բառով, մինչդեռ բարբառային փոխառության իմաստային համար-

Ժեքն արաբերենում ստեղծվում է *sulṭān ibrahīm* բառակապակցությամբ՝ «տափակաձուկ»: Բարբառում գործածվող մեկ այլ՝ *ղակըլ*՝ «1.մի ձեռք հագուստ, 2.ատամնաշար» իմաստներով բառում հիմնական իմաստը համընկնում է արաբերեն նրա համարժեքին՝ *taqm* «1.հավաքածու, 2.կոստյում», իսկ «արհեստական ատամնաշար» իմաստն արտահայտվում է *taqmu asnān* հատկացուցչային կապակցության միջոցով: Անտիոքի խոսվածքներում կիրառվող *բւնդէխ/բւնդիխ* «սեխ» բառը արաբերեն *baṭṭiḥ ʿasfar* որոշչային կապակցությամբ արտահայտված այդ մրգի բարբառային տարբերակն է, իսկ *կըմըլ*՝ «ածունների մեջ պատահող միջատ» բառն արաբերենում ունի *qaml* (հվք.) «ոջիլ» իմաստը, իսկ *qaml al-nabāt* նկարագրական ձևով արտահայտվում է «բուսածիճու, ուտիճ» իմաստը և այլն:

Այսպիսով՝ Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակներում արաբերենից փոխառյալ բառերի հիմնական մասը պահպանել է փոխատու լեզվում ունեցած բառիմաստը: Առանձին դեպքերում, սակայն, տեղի են ունեցել իմաստային փոփոխություններ, մասնավորապես՝ բառիմաստի նեղացում, ընդլայնում, ընդհանուր իմաստափոխություն (բառիմաստի շրջամբ կիրառվող փոխառյալ բառեր չկան): Արձանագրված են նաև փոխատու լեզվի ոչ առաջին, այլ մյուս իմաստներով փոխառված բարբառային բառեր:

Յուրաքանչյուր լեզու կարող է որևէ բառ, հասկացություն անվանել նկարագրական եղանակով՝ բառակապակցությունների կիրառմամբ: Արաբերենում կիրառվող մի

շարք բառակապակցությունների լծորդ բաղադրիչը փոխառու լեզվում թեև սղվել է, սակայն բառիմաստը պահպանվել է:

4. ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ

Արաբերենից կատարված փոխառությունները, ըստ իրենց ունեցած գործառական նշանակությունների, կարելի է բնորոշել հետևյալ կերպ.

1. Բառերի մի խումբ, պահպանելով իր ունեցած հնչյունների հաջորդականությունը, բառային իմաստները, ենթարկվել է միայն խոսվածքների արտասանական օրենքներին: Այդպիսի փոխառությունները խնդրո առարկա խոսվածքներից բառեր դուրս չեն մղել՝ զբաղեցնելով նրանց տեղը, այլ ներմուծվել են որպես *նոր հասկացություններ նշանակող կողեր*¹⁷⁴: Դրանք, լինելով այլ լեզվին, մշակույթին, կրոնին, քաղաքակրթությանն առնչվող հասկացություններ և երևույթներ, որոնք պայմանավորված են տվյալ ժողովրդի աշխարհընկալմամբ, պատմական զարգացմամբ, տարբեր սովորույթներով, լեզվամտածողությամբ, այսինքն՝ լեզվական և արտալեզվական զանազան գործոններով, թեև ներթափանցում են լեզվի (բարբառի) մեջ, բայց այդ լեզվամշակույթի և համակարգի լիարժեք տարրեր չեն դառնում: Այդօրինակ փոխառություններ կարելի է համարել հետևյալ բառերը. *բւնդւովի* «բեդվին» - badawī «1.բեդվինական, 2.բեդվին», *մւնջլւիհ* «ամ-

¹⁷⁴Вайнрайх У., Языковые контакты, К., 1979, էջ 83:

բողջ մարմինը ծածկող արաբական վերարկու» - mušlah «թիկնոց, վերարկու», *կըրոշ* «դրուշ (դրամի տեսակ)» - qirš «դրամի անվանում (պիսասոր)», *յարաբ* «ո՛վ Աստված» - yā rabb, *շ^hէխ* «շէյխ» - šayx «1.ծերունի, 2.շէյխ, ցեղի առաջնորդ», *վնզէր* «վեզիր, նախարար» - wazīr, *ւնզւն* «մոլլայի աղոթք» - ʿazān «աղոթքի կանչ, կոչ», *ջւմի* «մզկիթ» - jāmiʿ «մզկիթ, ուրբաթօրյա աղոթքի վայր», *մուլա* «մահմեդական կրոնավոր՝ մոլլա» - maula «1.տեր, հրամայող անձ, 2.մոլլա» և այլն:

2.Փոխառությունների մյուս խումբը ևս նշված տա-
րածքի հայերեն խոսվածքների համապատասխան բառերի չի
փոխարինում: Այդ բառերն այլ բառերի կողքին գործառում են
որպես ծանոթ հասկացությունների, այսպես կոչված՝
*տարբերակային կողեր*¹⁷⁵: Դրանք բոլորովին նոր չեն տվյալ
հանրության համար, նրանց ընդհանուր հասկացական
համարժեքներն առկա են տվյալ լեզվում (բարբառում), սա-
կայն այդ բառերն իմաստային այնպիսի նրբերանգներ են
կրում, որոնք համապատասխանում են տվյալ ժողովրդի
լեզվամտածողությանն ու աշխարհընկալմանը: Այդպիսիք են
հետևյալ փոխառյալ բառերը՝ *կաբր* «մահմեդականի գե-
րեզման» - qabr (բրբ.՝ *գրրըզմն* «գերեզման»), *բարսնք* «օրհ-
նություն» - baraka «1.օրհնություն, 2.երկնային շնորհ» (բրբ.՝
նրթնութէն «օրհնություն»), *շայթան* «ղև» - šaytān «ղև, սա-
տանա, հրեշ», (բրբ.՝ *տ^hէվ* «ղև», *սադանու* «սատանա»), *հե-
րում* «անմաքուր» - ḥarām «մեղք» (բրբ.՝ *տ^hէսկ* «մեղք») և այլն:

¹⁷⁵Նույն տեղում:

Մի շարք փոխառված բառերի իմաստային համարժեքներն էլ խոսվածքներում առկա են, այսինքն՝ դրանք միևնույն հասկացության անվանումներն են: Արաբերեն տարբերակները, բնականաբար, ավելի ուշ շրջանում կատարված փոխառություններ են¹⁷⁶: Բարբառային և փոխառյալ բառերը գործածվում են զուգահեռաբար: Օրինակ՝ *ջեթ* «գրպան» - *jayb* (բրբ.՝ *կրյւթուն* «գրպան»), *քալբ* «շուն» - *kalb* (բրբ.՝ *շուն* «շուն»), *ջեհրզ* «օժիտ» - *jihāz* (բրբ.՝ *նիժէտ/նիժէտք* «օժիտ»), *ֆուկարա* «աղբատ» - *fuqarā'* (բրբ.՝ *ւիխթ'օտ* «աղբատ») և այլն:

3.Փոխառություններ կատարվում են նաև *բառապատճենումների* միջոցով, որի դեպքում «...օտար բառը պարզապես թարգմանվում է փոխառու լեզվի բառերով կամ բաղադրությունների բաղադրիչներով»¹⁷⁷, այսինքն՝ այլ լեզվի բառակազմական կաղապարի և մայրենի լեզվի արմատների, ածանցների համակցմամբ ստեղծվում է նոր, փոխատու լեզվի տվյալ բառին իմաստով համարժեք բառ:

Հարկ է նշել, սակայն, որ փոխառության այս տեսակը հայերենի խնդրո առարկա խոսվածքներում գրեթե չի հանդիպում, որը պայմանավորված է փոխատու և փոխառու լեզուների՝ տարբեր, տվյալ դեպքում՝ սեմական և հնդեվրոպական լեզվաընտանիքներին պատկանելու և ըստ այդմ նաև

¹⁷⁶Կարծում ենք՝ սրանք հատկապես 20-րդ դ. 2-րդ կեսից հետո կատարված փոխառություններ են. այս ժամանակ լեզվական մերձեցումը տեղի էր ունենում ուսման միջոցով, քանի որ բոլոր դպրոցներում ուսուցման հիմնական լեզուն գրական արաբերենն էր:

¹⁷⁷ Հայոց լեզու, 1 մաս, Ա պրակ, Ե., 1980, էջ 338:

բառակազմական տարբեր միջոցներ կիրառելու հանգամանքներով:

5. ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ԻՄԱՍՏԱՅԻՆ-ԹԵՄԱՏԻԿ ԽՄԲԵՐԻ

Անտիոքի հայերեն բարբառախմբի արաբական փոխառությունները ստորև դիտարկել ենք նաև ըստ իմաստային-թեմատիկ խմբերի, որի համար հիմք ենք ընդունել Գ.Ջահուկյանի՝ հայերենի հին օտար փոխառությունների համար կազմած քսաներեք համապատասխան դասակարգումները¹⁷⁸: Դրանք ներկայացնելիս հեղինակն առաջնորդվել է ընդհանուր լեզվաբանության մեջ ընդունված, Դ.Բաքի բառարանում¹⁷⁹ ընդգրկված սկզբունքներով. այդ պատճառով է, որ բաժանումները (22 խումբ՝ իրենց ենթախմբերով) միմյանցից գրեթե չեն տարբերվում: Գ. Ջահուկյանը նույնպես բառապաշարը դասակարգում է ըստ բառիմաստային մերձավորության, բացառությամբ լրացուցիչ, իր կողմից ավելացրած 23-րդ խմբի (դերանուններ և մասնիկներ), որտեղ բառերն ընդգրկվում են խոսքիմասային ընդհանրության սկզբունքով¹⁸⁰: Հ.Աճառյանի կողմից առանձնացված իմաստային-թեմատիկ 22 խմբերը ևս հիմնականում համընկնում են այս դասակարգման հետ (այստեղ, սակայն, խմբերի մեջ ենթախմբեր առանձնացված չեն): Մեծանուն գիտնականը ևս

¹⁷⁸ տե՛ս Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 204-222:

¹⁷⁹ Buck C. D., A. Dictionary of selected synonyms in the principal Indo-European languages, Chicago-London, 1965.

¹⁸⁰ Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 206:

հարմար է գտել վերջին մեկ խումբը ոչ թե բառիմաստային, այլ քերականական հատկանիշով առանձնացնել, այսինքն՝ *մակրայ* և *նմաններ*¹⁸¹:

Իմաստային-թեմատիկ¹⁸² այդ խմբերն են՝ 1. Ֆիզիկական աշխարհ, 2. մարդկություն՝ սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություն, 3. կենդանիներ, 4. մարմնի մասեր, մարմնական գործառություններ և պայմաններ, 5. ուտելիք և ըմպելիք. կերակրի պատրաստում և ամանեղեն, 6. հագուստ, անձնական զարդարանք և խնամք, 7. բնակարան, տուն, կահկարասի, 8. երկրագործություն, բուսականություն, 9. ֆիզիկական տարբեր գործողություններ, արվեստ և արհեստ, սրանց հետ կապված նյութեր, 10. շարժում. տեղափոխություն, փոխադրում, նավագնացություն, 11. ունեցվածք, սեփականություն և առևտուր, 12. տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ, 13. քանակ և թիվ, 14. ժամանակ, 15. զգայական ընկալումներ, 16. զգացմունք, խառնըվածքային, բարոյական և գեղագիտական ըմբռումներ, 17. մտածողություն, միտք, 18. ձայնական արտահայտություն, խոսք. ընթերցանություն և գիրք, 19. տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ, հասարակական հարաբերություններ, 20. ռազմական գործ, 21. օրենք, 22. կրոն և նախապաշարմունք, 23. դերանուններ և մասնիկներ:

Անտիոքի բարբառախմբում առկա արաբական փոխառությունների՝ մեր տրամադրության տակ եղած նյութը (տե՛ս

¹⁸¹ Աճառյան Հ., 2013, էջ 208-213:

¹⁸² Վերոնշյալ խմբերն իրենց հերթին, ինչպես նշեցինք, բաժանված են նաև ենթախմբերի, բայց մեր ուսումնասիրության նպատակից դուրս է փոխառությունները դասակարգել նաև ըստ ենթախմբերի. ենթախմբեր ներկայացվում են միայն ըստ անհրաժեշտության:

գրքի հավելվածը) դասակարգելով վերոնշյալ խմբերում՝ տվել ենք դրանց արաբերեն սկզբնաձևերը, իմաստային, կիրառական յուրահատկությունները, գործառության ոլորտները: Առանձին անդրադարձել ենք այդ խմբերից մի քանիսում մեր ուսումնասիրության համար առանձնակի հետաքրքրություն ներկայացնող հասկացություններին:

Առավել ընդգրկուն է արաբական փոխառությունների՝ ստորև ներկայացվող խմբերի բառապաշարը:

*Ուտելիք և ըմպելիք. կերակրի պատրաստում
և ամանեղեն*

Վերոնշյալ բնակավայրերի հայերը, դարեր շարունակ ապրելով արաբների հետ կողք կողքի և փոխշփումներ ունենալով վերջիններիս հետ, իրենց սովորույթների, կենցաղի պահպանմանը զուգահեռ, բնական է, որ կարող էին յուրացնել նաև օտար քաղաքակրթությանը, սովորույթներին առնչվող երևույթներ: Դրանց թվում է նաև խոհանոցը: Արևելյան, այդ թվում՝ արաբական խոհանոցն աչքի է ընկնում իր յուրօրինակությամբ և բազմազան մթերքների, համեմունքների հարստությամբ: Արաբական խոհարարության մեջ կիրառվող, շատ կերակրատեսակների հիմնական բաղադրիչներ կազմող, արաբական խոհանոցին ամենաբնորոշ մթերքներից են ոչխարի միսը, հավը, ծովամթերքները, բրինձը, լոբազգիները՝ սիսեռը, լոբին և զանազան համեմունքները: Ուտելիքի պատրաստման համար գերազանցապես օգտագործվում է ձիթայուղ: Ըմպելիքներից առանձնահատուկ տեղ ունեն սուրճը, որի պատրաստումն ու հյուրասիրությունը յուրահատուկ

արարողակարգ է, ինչպես նաև՝ սև թեյը: Խոզի մսի և ոգելից խմիչքների օգտագործումը, հատկապես հասարակական վայրերում, խիստ արգելված է, և դրանք գործածողները կարող են մինչև իսկ պատասխանատվության ենթարկվել:

Արաբական խոհանոցին հատուկ որոշ կերակրատեսակներ հարստացրել ու բազմազան են դարձրել խնդրոռարկա բնակավայրերի հայ բնակչության խոհանոցը: Պատահական չէ, որ արաբական խոհանոցին բնորոշ մթերքների անվանումներ հանդիպում ենք նաև արաբերենից փոխառված բառերի ցանկում: Դրանց մի մասը «նոր հասկացություններ նշանակող կոդեր» են, քանի որ այլ քաղաքակրթության ու կենցաղի բաղկացուցիչ տարրեր են:

Անտիոքի բարբառախմբի՝ թեմատիկ-իմաստային այս խմբին պատկանող, արաբերենից կատարված փոխառությունները կարելի է դասակարգել հետևյալ ենթախմբերով.

1.Ուտելիք և ըմպելիք. *քեբաբ* «խորոված» - kabāb, *շուրբու* «ջրիկ, տաք կերակուր» - šūrba, *լըբայս/լըբ^{ու}ou* «կիսաթանձր ապուր» - labūs, *ւնջըբ* «ռուպով ձվածեղ» - ‘ujja «ձվածեղ», *հըղեմի* «խարկած սիսեռ» - quḏāma «լավ տապակած, կարմրացրած, բոված սիսեռ», *ըրօզ/ըրանուզ* - ‘urz «բրինձ», *մըխլ^{ու}ուտ* «աղացած ոսպ» (արաբերենում այլ իմաստ է՝ xalīṭ «խառնաշփոթ»), *ֆուլ* «խաշած բակլայով եփված արաբական ազգային կերակուր» - fūl «ունդ, բակլա», *հննրմեշ* «բոված հացի կտոր» (ծագում է qarmaša՝ «կրծել (չորահացը)» բայից) և այլն:

Քաղցրավենիք նշանակող բառերից են՝ *հննլու* «հավվա» - ḥalwā‘u «1.քաղցրեղեն, 2.հրուշակեղեն, հավվա», *ւնկեղ*

«քաղցրեղենի թանձրացած լուծույթ» - ‘aqīd «խտակեր, խտածո սննդամթերք» (*սկզիղիլ* «քաղցր թանձրացած լուծույթ դառնալ»), *մուշաբփ* «1.անուշեղենի տեսակ, 2.մաղ հիշեցնող թել, որով ծածկում են պատուհանները» - mušabbak «1.ցանցավոր, 2.քաղցր ուտելիք («հյուսած կարկանդակ»)», *մուրաբա* «մուրաբա, ջեմ», *ըրօր/ըրաբ* «ռուպ»-rubb «մրգահյութ, մուրաբա», *հսլվօթ* «նվեր տված անուշեղեն» - ḥalwiyyāt «քաղցրեղեն, չորացրած մրգեր»: Սվեդիայի խոսվածքում կիրառվող *հալվուտ* բառն ունի «նորածին ուլը լեռներից տուն բերելու առթիվ հովվին տրված նվեր» իմաստը: «Նվեր» իմաստն արաբերենում ունի նույն արմատից ծագող ḥulmān բառը:

Ընդլեռներից են՝ *շարբփ* «օշարակ» - šarbāt, *արաի* «օղի» - ‘araq, *թսլսմու* «կաթնեղենի տեսակ» - ṭulma և *կահվու*¹⁸³ «1.սուրճ, 2.սրճարան» - qahwa:

2.Գերակրի պատրաստում և ամանեղեն. Այս ենթախմբում ներառվում են արաբերենից փոխառված սակավաթիվ հետևյալ բառերը՝ *թաբօղ* «պնակ» - ṭabaq «1.կափարիչ, 2.ափսե, սկուտեղ», *թանջարու* «կաթաս» - tanjara, *խարխա* «կարաս» - xāb‘a, *սաջ* «մետաղյա խոշոր աման, որի վրա սովորաբար հաց են թխում» - sij «1.շամփուր, 2.մետաղաձող»:

¹⁸³ Սվեդիայի խոսվածքում «սրճարան» իմաստն արտահայտում է *կահվա* բառը:

Հագուստ, անձնական զարդարանք և խնամք

Թեմատիկ-իմաստային այս խումբն ընդգրկում է հատկապես փոխառյալ այնպիսի բառեր, որոնք բնութագրում են զուտ արաբական հագուստը: Հարկ է նշել, որ այն սովորաբար առանձնանում է իր խստառձությամբ. դա նկատելի է առավելապես այն դեպքում, երբ այս կամ այն հագուստը կամ զարդարանքը կրողը կրոնական ավելի պահպանողական հայացքներ ունի: Հագուստով և նրա մաս կազմող զարդարանքի պարագաներով հաճախ կարելի է միանգամից տարբերակել մուսուլմանին այլակրոնից, հատկապես երբ խոսքը կանանց է վերաբերում:

Օտար քաղաքակրթության, կրոնի բաղկացուցիչ տարր համարվող հագուստեղենի մի շարք անվանումներ առկա են Անտիոքի բարբառային միավորների՝ արաբերենից կատարված փոխառություններում: Մրանք ևս հիմնականում «նոր հասկացություններ նշանակող կողեր» են, քանի որ գործածվում են այն պարագայում, երբ պետք է անվանել այլազգի և այլակրոն ժողովրդի հագուստի այս կամ այն բաղադրիչը: Հագուստեղենի և խնամքի պարագաների այս անվանումների համարժեքները հայերենի տարածքային վերոհիշյալ տարբերակներում, բնականաբար, բացակայում են:

Ըստ իմաստային մերձավորության՝ դրանք կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

ա) Արտաքին հագուստ. Քեսաբի խոսվածքում արձանագրված է *մուշլիխ* բառը՝ «լայն վերնագգեստ» նշանակությամբ, Սվեդիայի խոսվածքում՝ *մւշլիհ* «ամբողջ մարմինը

ծածկող արաբական վերարկու» անվանումով: Արաբերենում դա *mušlah* «թիկնոց, վերարկու» բառն է: Նմանօրինակ՝ *ջուրի* նշանակում է «լայն վերնագգեստ», որն արաբերեն *jubb* «ջուրքա (լայն թևքերով վերնագգեստ)» բառի բարբառային համարժեքն է: Մեկ այլ փոխառյալ բառ՝ *աբու-ն*, կիրառվում է «հովվական վերարկու» իմաստով, փոխատու լեզվում՝ *‘abā’* «բրդյա հագուստ, վերարկու» բառն է: *Ֆրադան-ը* «կանացի հագուստ»-ն է, համարժեք է արաբերենի *fustān* «կանացի հագուստ, կիսաշրջագգեստ» բառին, իսկ *դակը*՝ «1.մի ձեռք հագուստ» իմաստով գործածվող բառը արաբերենի *taqm-n* է՝ «1.հավաքածու, 2.կոստյում» նշանակությամբ և այլն:

բ) Գլխարկներ. գլխարկների և գլխաշորերի գործածումը բավական լայն տարածում ունի մուսուլմանական, այդ թվում նաև արաբական շատ երկրներում (որոշ վայրերում այն հագուստի պարտադիր բաղկացուցիչ մաս է համարվում), ընդ որում, դրանք բազմազան են և տարբեր պարագաներում են կիրառվում: Այսպես՝ *տակա* «գլխի ծածկոց, ֆես, գդակ» - *tāqīa* «գլխարկ», *տարբուշ/թարբա^mշ* «գլխարկ, գլխանոց» - *tarbūš* «ֆես», *ազըլ* «բեդվինի գլխաշոր» - *‘iqāl* «բեդվինի գլխարկ, գլխի ծածկոց» և այլն:

գ) Կտորեղեն, անձնական զարդարանք և խնամք. Այս ենթախմբում տեղ գտած արաբերենից փոխառյալ բառեր են՝ *կումաշ* «կերպաս» - *qumāš* «1.կտոր, 2.կտավ», *քահրիբար* «սաթ» - *kahrābār*, *սանդաֆ* «սադաֆ» - *šadaf*, *շըրըղ* «ժապավեն» - *šarīṭ* «ժապավեն, քող», *մարջան* «բուստե ուլունք» - *marjāna* (հվք.՝ *marjān*) «1.բուստ, մարջան, 2.մանր մարգա-

րիտ», *ջեհրզ* «օժիտ» - jihāz, *չանթու* «լաթե պայուսակ» - šanta «1.պարկ, պայուսակ, 2.ճամպրուկ» և այլն:

Անձնական խնամքի պարագաներից առանձնահատուկ դեր ունի հինան, որը գործածվում է արաբական շատ երկրներում, նախատեսված է մազերի, եղունգների ներկման համար: Քեսաբի խոսվածքի՝ արաբերենից փոխառված բառապաշարում այս բառը ևս հանդիպում է՝ *հինսի* «հինա» -hinnā: Նրանից կազմվել է նույնարմատ բայ՝ *հինիլ* «հինայել»:

Այս իմաստային-թեմատիկ խմբում ներառված բառերը արձանագրված են հիմնականում Քեսաբի խոսվածքին նվիրված բարբառային ուսումնասիրությունների բառացանկերում:

Երկրագործություն, բուսականություն

Իմաստային-թեմատիկ այս խմբում արաբերենից փոխառյալ բառեր գործածվում են և՛ Քեսաբի, և՛ Սվեդիայի խոսվածքներում: Քեսաբ ավանն ընդհանուր առմամբ անտառային ու ժայռոտ վայր է, սակավաեռոզ ու սակավաջուր: Ավանի շրջակա լեռները ծածկված են ցածրատեսակ, մշտադալար ծառերով և թփերով: Սվեդիա գավառը, իր մի քանի գյուղերով տեղակայված լինելով Մուսա լեռան փեշերին, հիմնականում նույնպես սակավաջուր է և ունի լեռնային կլիմա:

Չնայած բնակլիմայական ոչ այնքան նպաստավոր պայմաններին, քեսաբցիների գլխավոր զբաղմունքները եղել են գյուղատնտեսությունն ու անասնապահությունը, իսկ

վերջին շրջանում մեծ զարկ էր ստացել նաև այգեգործությունը¹⁸⁴: Սվեդիայում ևս (հատկապես այն գյուղերում, որոնց կլիման բարենպաստ է՝ Քաբուսիե, Հաջի-Հաբիբլի, Յողուն-Օլուկ) բնակչության հիմնական զբաղմունքներից էին այգեգործությունն ու շերամապահությունը, որոշ բնակավայրերում նաև՝ անասնապահությունն ու ձկնորսությունը¹⁸⁵:

Այգեգործությանը վերաբերող մի շարք հասկացություններ ինչպես Քեսաբի, այնպես էլ Սվեդիայի խոսվածքներում անվանվել են արաբերենից կատարված փոխառություններով: Բավական է նշել, որ միայն «ծառ» հասկացությանն առնչվող մի շարք փոխառված բառեր կան արձանագրված, որոնց բարբառային համարժեքները հայերենի տարածքային այս տարբերակներին վերաբերող ուսումնասիրություններում, որքանով կարողացանք պարզել, վկայված չեն: Այսպես՝ *նասէք* «մատղաշ ծառ» - *našb* «բույս, տնկի» (հվք.), *հսմըլ* «ծառի՝ շատ պտուղներով բեռնված լինելը, շատ բերք ունենալը» - *hāmīl* «1.տանող, կրքող, 2.բեռնակիր, 3.հղի», *խըլֆ* «ծառի փոքր ճյուղ, ճյուղերի խումբ կամ ճյուղի ծայրը՝ վրայի տերևներով հանդերձ» - *xilāf* «ուռի», *խիշէլ* «ծառի կեղև, մանավանդ թթենու ճյուղերի կեղևը» - *qišr* «1.բարակ մաշկ, 2.կեղև, կլեպ», *ղէրէհ* «ծեր, կենսունակությունը կորցրած (ծառ)» - *qarīh* «վիրավոր, վերք ստացած», *մատր՞ուր* «ծառի կամ թփի վրա տեխյա լարելու, տնկելու հարմար տեղ» - *mutrab* «փոշով ծածկված», *ֆիլիջ* «ծառի կոճղը, որը սղոցելով տախտակների է վերածվում» - *falaja* «ջարդել, ճեղքել, ճղանել (փայտը)» բայարմատից,

¹⁸⁴ Փաշայան Ա., նշվ. աշխ., էջ 8:

¹⁸⁵ Հանանյան Գ., նշվ. աշխ., էջ 8-10:

լիբնիս «ճառերը չորացնող ախտ» - *yabas* «չորություն», *yabās* «չորացած, չոր» և այլն: Արաբերենից փոխառյալ այսպիսի մի շարք բառերից արդեն իսկ կարելի է ենթադրել, որ հայաբնակ այս տարածքում այգեգործությունն իսկապես լայն տարածում է ունեցել, որ բարբառում բացակայող, անհրաժեշտ հասկացությունների անվանումները փոխառվել են այլ լեզվից:

Ինչպես նշվում է, Քեսաբ ավանում գրեթե ամեն ընտանիք իր կալվածքում ուներ տարբեր պտղատու ծառեր՝ ծիրանենի, թզենի, նշենի, խնձորենի, սալորենի, որթատունկ և այլն¹⁸⁶: Մի շարք ծառատեսակների և մրգերի անվանումների համար կիրառվում են նաև արաբերեն բառեր, թեև որոշ բառերի համարժեքները հայերենի բարբառային այս միավորներում առկա են. *մրշմրշինս/էնի* «ծիրանենի» - *mišmiša*, *մրշմէշ/մրշմուշա* «ծիրան» - *mišmiša* (*ծիրանս* (ծիրանի) «ծիրանի ծառ»), *բնդէխ/բնդիխ* «սեխ» - *baṭṭiḥ* 'ašfar, *խոխ* «մանր սալորի տեսակ» - *xaux* «սալոր», *սիվա* «արմավ» - 'ajṯa «ճզմած արմավ, խուրմա» և այլն:

Կալվածքների ամենաբերրի և լավագույն հողերը Քեսաբում հատկացված էին *թթենիների մշակման, շերամաբուծության* համար, մի մասն էլ՝ ծխախոտամշակության: Մրբանք ժողովրդի տնտեսության ամենակարևոր մասն էին կազմում¹⁸⁷: Խաղողագործությունն ու շերամապահությունը լայն տարածում ունեին նաև հարևան Սվեդիայում: Խաղողի մի քանի տեսակներից ձմռան համար պատրաստում էին

¹⁸⁶ Ինճեճիքեան Ս. Ա., նշվ. աշխ., էջ 69:

¹⁸⁷ Փաշայան Ա., նշվ. աշխ., էջ 70:

չամիչ, ռուպ, գինի և անուշեղեն¹⁸⁸: Խաղողագործությանն առնչվող մի շարք բարբառային բառերից գատ, որոշ երևույթներ անվանվել են արաբերենից փոխառյալ բառերով. օրինակ՝ *քրփչ'ուն* «ճմլած խաղողի և այլնի մնացորդը՝ չանչը», *քրփսիլ* «ճմլել, ճնշել» - kabasa «1.ճնշել, ճզմել, մամլել, 2.պահածոյացնել», *դիլա* «որթատունկ» - dāliā «խաղողի վազ, որթ», *ջեմերիլ* «խաղողի ջուրը գտելու համար թեթև տաքացնել» - jamarra և այլն:

Շերամաբուծության՝ որպես գյուղատնտեսության ճյուղին առնչվող բնագավառի՝ արաբերենից փոխառյալ բառեր են. *գէ'խ* «շերամ պահելու գետնահարկ շենք» - kūx «խրճիթ», *մըխնահ*՝ «բոժոժի շերամորդը շոգեհարելու կառույց» - maxnaq «շոգեհարելու կառույց (շերամի բոժոժի համար)», *մսնդիսն* «շերամապահական կառույց» - madxana «խողովակ, ծխնելույզ»:

Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակներում կիրառվում են նաև վայրի և մշակովի բույսերի, բանջարեղենի, կանաչիների՝ արաբերենից փոխառված բառանվանումներ: Այսպես՝ *խսիբսուգ* «մոլոշ, ուտելու խոտ» - xubbaza «վայրի մոլոշ, փիփերթ», *լիֆ* «բույսի տեսակ» - lif «բուսական թելիկ», *շուֆուն/շիֆուն* - šūfān «վարսակ», *րահուն* «ռեհան» - riḥān, *շամսըղամար* «արևածաղիկ» (šams «արև» և qamar «լուսին» բառերից կազմված) և այլն:

Արաբերենից փոխառյալ բուսանունների մեջ կարելի է առանձնացնել նաև ծաղկանունների փոքր խումբ. *զանբակ*

¹⁸⁸ Ինճեճիբեան Ս. Ա., նշվ. աշխ., էջ 69:

«շուշան ծաղիկ»- zabaq, *շըկէկ* «կակաչ» (Ք.խ.), *շըղիղ* «հարսնուկ ծաղիկը» (Մ.խ.) - šaqīqa «ա» հողմածաղիկ, բ) քաջվարդ»:

Հ.Չոլաքյանը Քեսաբի խոսվածքին նվիրված իր աշխատության մեջ նշում է. «19-րդ դարուն և 20-րդ դարու սկիզբները հայկական բազմաթիւ բնակավայրեր հայերու ձեռքէ կը իլուին: Աղաները հայ գիւղացիներուն ձեռքէն կը իլէն անոնց հողերը, աղբիւրները, գետերը, ջրաղացները եւ արօտավայրերը: Յատկապէս կը տուժեն դաշտային ու ջրառատ վայրերու հայերը: Առանց կալուածի մնացած հայերը կը դառնան այլազգի աղաներու կալուածներուն մէջ հաստատուած ու անոնց համար քառորդով աշխատող գիւղացիներ»¹⁸⁹: Աղաները նրանց անվանեցին *մսրսբու*՝ «ուրիշի կավածքում քառորդով աշխատող»: Այս բառը ևս ամրագրվեց հայերենի վերոնշյալ խոսվածքների բառապաշարում, այն արաբերեն *murābi*՝ «բնավարձակալ, բերքի քառորդով աշխատող գյուղացի» բառի հայերեն բարբառային համարժեքն է: Ավելին, գյուղացիների կատարած աշխատանքն անվանվեց *մսրսբութեն* «քառորդով աշխատանք» (արաբերեն համարժեքը՝ *murābaʿa* «բերքի քառորդով աշխատանք»), իսկ բերքի քառորդ մասը կոչվեց *ըրօր* «քառորդ», որը արաբերենի *rub*՝ նույն իմաստն ունեցող բառի հայերեն բարբառային տարբերակն է:

¹⁸⁹ Չոլաքեան 3., 2009, էջ 5:

*Ֆիզիկական տարբեր գործողություններ, արվեստ և
արհեստ, սրանց առնչվող նյութեր*

Անտիոքի բարբառախմբի արաբական փոխառությունների՝ թեմատիկ-իմաստային այս խմբում ընդգրկված են արհեստին վերաբերող մի քանի հասկացություններ, մինչդեռ արվեստի ոլորտի՝ արաբերենից փոխառյալ բառեր հայերենի նշված տարածքային տարբերակների փոխառյալ բառապաշարում բացակայում են:

Վկայվում է, որ հատկապես Քեսաբում գյուղական միջավայրի պահանջները բավարարող վարպետ արհեստավորներ կային՝ երկաթագործներ, պղնձագործներ, զինագործներ, դերձակներ, որմնադիրներ, աստղձագործներ և այլն: Չնայած դրան, սակայն, գյուղական պայմաններում արհեստը որպես երկրորդական զբաղմունքն էր և ծառայում էր գլխավորապես հողագործությամբ և անասնապահությամբ զբաղվող գյուղացուն անհրաժեշտ գործիքներ պատրաստելու համար¹⁹⁰:

Մինչև 19-րդ դ. կեսը Քեսաբում կային արհեստավորների ընդամենը մի քանի կրպակներ: Սակայն ավելի ուշ արհեստանոցները սկսում են շատանալ և սպասարկել ոչ միայն հայ, այլ նաև թուրք և ալեվի բնակչությանը. մեծ թվով որմնադիրներ և հյուսներ ամառները գնում էին շրջակա, հատկապես թուրքական գյուղերում աշխատելու¹⁹¹: Այս շրջանում ամենատարածված արհեստներն էին կոշկակարությունը, դերձակությունը, դարբնությունը, ջուլիակությունը,

¹⁹⁰ տե՛ս Չոլաքեան Յ., Քեսապ, Ա հատոր, Հ., 1995, էջ 212-215:

¹⁹¹ Ինձեճիքեան Տ. Ա., նշվ. աշխ., էջ 297:

թամբագործությունը, իսկ Սվեդիայի որոշ գյուղերում՝ գղալագործությունը, սանրագործությունն ու փայտամշակումը:

Իմաստային-թեմատիկ այս խմբին, մասնավորապես արհեստներին վերաբերող փոխառյալ բազմաթիվ բառեր են վկայված հայերենի վերոհիշյալ տարածքային տարբերակներում: Դրանց մեծ մասը, սակայն, իրենց կազմությամբ արաբաթուրքական, այսինքն՝ միջնորդավորված փոխառություններ են և կազմվել են արաբերեն բառերով և թուրքերենի բառակազմական միջոցներով (օր.՝ *հալվա-ջի* «քաղցրավենիք վաճառող» և այլն): Փոխառությունների այդ տեսակի ուսումնասիրությունը, սակայն, ներկա աշխատանքի շրջանակներից դուրս է, ուստի կարելի է առանձնացնել արհեստներին առնչվող սակավաթիվ բառային միավորներ, որոնք արաբերենից կատարված անմիջական փոխառություններ են: Այսպես՝ *դսմբուրա* «խոշոր մուրճ (կվալտ)» - dabbura «մուրճ, փոքր մուրճ», *մաշու/մաշրգ* «ուների» - māšiq, *հսնիլ* «փոքր պտուտակ, պտուտակ գամ» - qalāwz «պտուտակ», *թանսրու* «թիթեղ» - tanak, *լահրմ* «անագ» - lahm «1.գողում, 2.գողվածք», *բսբսրու* «ճախարակ» - bakara, *դրբնիլ* «երկար հագուստը ծալելով կարճացնել և կարել» - ġabana «1.խաբել, 2.կարելով կարճացնել (հագուստը)»: Արհեստավորների անվանումներից հանդիպում ենք՝ *հաս^mօր* «մսագործ» - qaššāb, *նաջ^mօր* «ատաղձագործ» - najjār փոխառյալ բառերը:

Ունեցվածք, սեփականություն և առևտուր

Իմաստային-թեմատիկ այս խմբի մեջ ընդգրկված բառերը ևս ուշագրավ են այն առումով, որ առնչվում են հատկապես քեսաբահայերի շրջանում տարածված և զարգացած զբաղմունքներից մեկին՝ առևտրին: Այս մասին կան տարբեր վկայություններ: Մասնավորապես, Ա. Փաշայանը, անդրադառնալով քեսաբահայերի միջավայրում առևտրի տարածում ունենալու հանգամանքին, նշում է, որ տասնյակ կիլոմետրեր հեռավորությունից թուրք ու արաբ գյուղացիները գալիս էին Քեսաբ իրենց առևտուրը կատարելու, իսկ Քեսաբի առևտրականները կապ էին պահում Բեյրութի և Լաթակիայի հետ, որտեղից ծովի վրայով ապրանքներ էին ստանում¹⁹²: Հատկանշական է, սակայն, որ «...առևտուրը քեսապցու ունեւոր դասակարգի սիրած զբաղմունքն էր, ով որ մի շօշափելի գումար ձեռք բերում, խանութ էր բացում, կամ սրճարան կամ ճաշարան եւ կամ հիւրանոց»¹⁹³: Առհասարակ, հայերի մեջ, որտեղ էլ որ նրանք լինեն, անպատճառ կան առևտրականներ: Արաբ հեղինակի վկայությամբ «...հայերը, որպես կանոն, ներփակված են նեղ տնտեսության մեջ և զբաղվում են առևտրով ու արհեստի կոնկրետ տեսակներով. հենց այս ոլորտներում են նրանք արաբների հետ անմիջական շփման մեջ մտնում: Այսինքն՝ նրանց շփման շրջանակը սահմանափակվում է հիմնականում այդքանով»¹⁹⁴:

¹⁹² Փաշայան Ա., նշվ. աշխ., էջ 9:

¹⁹³ Ինճեճիքեան Տ. Ա., նշվ. աշխ., էջ 297:

¹⁹⁴ Sa'aban q. 'at -ta'ddudīa 'al- 'arabīa fi lubnān wa 'ab'ādīha 'at - tarbūīa, 'al fikr 'al- 'arabī, 1982, էջ 140:

Տ. Ա. Բնճեճիքյանը, նկարագրելով Քեսաբի շուկան, նշում է, որ այն սովորաբար շաբաթ օրն էր բացվում և 1939 թ.-ից առաջ շատ բազմամարդ էր լինում. «մինչև երեսունհինգ քիլոմետր հեռավորության վրայ գտնուող թուրք ու այլազգ գիւղացին գրաստներով ամէն տեսակի գիւղատնտեսական ապրանքներ էր բերում, պազարում ծախում եւ անհրաժեշտ արդիւնաբերական ապրանքներ առնում Քեսապի խանութներից ու գընում»¹⁹⁵:

Քեսաբցիները, շփվելով արաբների, թուրքերի հետ, բնականաբար, պետք է հաղորդակցվեին նաև նրանց հասկանալի լեզվով, լսելին և կիրառելին այս ոլորտին առնչվող բառեր: Այդ իսկ պատճառով առևտրին վերաբերող, արաբերենից փոխառված մի շարք հասկացություններ կիրառվում են Քեսաբի խոսվածքում և որոշակի պատկերացում հաղորդում այդ գործընթացի վերաբերյալ. մասնավորապես, առևտուրը կատարվում էր կանխիկ վճարումով կամ ապրանքափոխանակությամբ. *սսլյսֆ* «կանխիկ» - salaf «1.նախնիներ, 2.կանխավճար», *նակդի* «առձեռն» - naqdi, *բսդսլ* «1.փոխարեն, 2.փոխարժեք, փրկագին» - badal «1.ինչ-որ բանի փոխարեն տրվող իր,փոխարինող, 2.գումարային փոխհատուցում, գումար»: Արաբերենից փոխառյալ բառերի մեջ նշվում է նաև *բազմօր* բառը՝ «շուկա» իմաստով, նույն արմատից կազմված *բազարիլ* պարզ բայը գործածվում է «սակարկել» նշանակությամբ: Հարկ է նշել, սակայն, որ «*բազար*»-ն ունի իրանական ծագում, իսկ արաբերենում bazzār նշա-

¹⁹⁵ Բնճեճիքյան Տ. Ա., նշվ. աշխ., էջ 298:

նակում է «սերմավաճառ», նույնարմատ *bazzara* բայն ունի «սերմեր տալ (բույսը)» իմաստը:

Արաբերենից է փոխառված *մուշղսրու* «հաճախորդ» բառը, որը փոխատու լեզվում ունի *muštarin* «գնորդ» իմաստը: Այս իմաստային-թեմատիկ խմբին առնչվող արաբերենից փոխառյալ ևս մեկ բառ՝ *սըմսար* «միջնորդ» նշանակությամբ, իմաստով մոտ է փոխատու լեզվում այդ բառի կիրառությանը՝ *simsār* «ամուտրական և բորսայական գործարքների միջնորդ, գործակալ»:

Առևտրի հիմքում, ինչպես հայտնի է, օգուտն է, եկամուտը: Այս նշանակությամբ բառեր ևս կան փոխառությունների շարքում. *ֆայդու* «օգուտ, օգտակար» - *fā'ida* «օգուտ, շահ», *մասլահաթ* «շահի աղբյուր, շահեկանություն» - *mašlahā* «օգուտ, շահ» և այլն:

Տ.Ա.Ինճեճիքյանը նշում է, որ ունևորները, սակայն, չնչին փոքրամասնություն էին կազմում, իսկ հասարակ ժողովուրդը տնտեսապես բարվոք վիճակում չէր գտնվում. հազիվ էր ծայրը ծայրին հասցնում, աշխատասեր էր ու չարքաշ և զբաղվում էր հողագործությամբ¹⁹⁶: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ կար խիստ արտահայտված հասարակական շերտավորում. ունևորներ, որոնց հիմնական զբաղմունքը ամուտուրն էր և հասարակ գյուղացին, որը հանապազօրյա հացը հայթայթում էր գլխավորապես հողագործությամբ զբաղվելով: Տիրող հասարակական շերտավորումն արտահայտող հասկացությունների անվանումներ գտնում ենք նաև արաբերենից կատարված փոխառյալ բառերի մեջ: Այսպես՝ *մուլք* «ունեցվածք» - *mulk*, *մալ* «ունեցվածք» - *māl*,

¹⁹⁶ տե՛ս Ինճեճիքեան Տ. Ա., նշվ. աշխ., էջ 297-298:

քուսեմիլ «կուտակել (ունեցվածք)», *քուսիլ* «դիզել» - kamm «քանակ» բառից, *միրյուս* «ժառանգություն» mirāt և միաժամանակ՝ *ֆուկարա* «աղբատ, խեղճ» - fuqarā', (եգ.թ.՝ faqīr «1.աղբատ, կարիքավոր, 2.աղբատ, չքավոր մարդ»), *մուհթաջ* «կարիքավոր» - muḥtāj «ինչ-որ բանի կարիք, անհրաժեշտություն զգացող», այստեղից՝ *մուհթաջ ինիլ* «ինչ-որ բանի կարիք զգալ» հարադիր բայի կազմությունը և այլն:

Քեսաբը, ինչպես հայտնի է, նաև ամառանոցային վայր է. գտնվում է ծովափին, ամառն այստեղ գով է, իսկ ջուրը՝ սառը և առողջարար: Ինչպես Ա. Փաշայանն է վկայում, «Հալեպից և Սիրիայի զանազան այլ քաղաքներից, մինչև իսկ Եգիպտոսից ամռանն այստեղ օդափոխության էին գալիս»¹⁹⁷: Մեկ այլ վկայության համաձայն՝ շատ քեսաբցիներ վարձով էին տալիս իրենց տները. ամռան ամիսներին դա նրանց համար եկամտի աղբյուր էր¹⁹⁸: Հավանաբար հենց այս հանգամանքը, արաբների հետ այս առումով ևս շփման եզրեր ունենալը կարելի է այն դերակատարություններից մեկը համարել, որ արաբերենից փոխառյալ բազմաշերտ բառերի շարքում արձանագրված են նաև այս երևույթին առնչվող փոխառություններ: Այսպես՝ *քիրուս* «վարձ» - kirwa «1.վարձակալություն, 2.վարձավճար», *իջար* «վարձ, վարձու» - 'ajra «1.վճար, 2.վարձավճար», *դաման* «վարձով շահագործման տված» - damān «սպահովում, երաշխիք», *րադրուն* «կանխավճար» - 'rbūn «կանխավճար» և այլն:

¹⁹⁷ Փաշայան Ա., նշվ. աշխ., էջ 9:

¹⁹⁸ Ինճեճիբեան Տ. Ա., նշվ. աշխ., էջ 298:

Սվեդիայի խոսվածքում արաբերենից փոխառված բառերի շարքում այս իմաստային-թեմատիկ խմբին առնչվող բառեր չեն հանդիպում: Մրանից կարելի է ենթադրել, որ առևտուրն այստեղ այնքան էլ տարածված չէր գոնե զբաղմունքի առումով:

Կարծում ենք՝ տրամաբանական է, որ Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակներում արվեստին առնչվող արաբերենից փոխառյալ բառեր չեն հանդիպում: Դա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ բարբառախոս հայերի բանավոր հաղորդակցումը այլազգի գյուղացիների հետ հիմնականում առօրյա-կենցաղային բնույթ էր կրում¹⁹⁹:

*Զգացմունք, խառնվածքային, բարոյական և
գեղագիտական ըմբռնումներ*

Թեմատիկ-իմաստային այս խմբում ևս ընդգրկված են արաբերենից փոխառված մի շարք բառեր, որոնց մի մասը

¹⁹⁹Այս առումով ուշագրավ է արաբ հեղինակի հետևյալ նկատառումը. «Դժվար թե հնարավոր լինի պնդել, որ հայերը, որոնք կրթություն չեն ստացել դպրոցներում, որտեղ ուսուցումը տարվում է արաբերենով, միևնույն ազատությամբ տիրապետում են երկու լեզուներին՝ հայերենին և արաբերենին և կարող են ակտիվ կերպով օգտագործել արաբերենի տարբեր ձևերը: Նրանք առավելապես խոսում են հայերենով և արաբերեն բարբառով այնքանով, որքանով այն ապահովում է նրանց սոցիալատեսական կարիքները: Նկատվել է, որ հայերը տեղի արաբ բնակչության հետ շփման դժվարություններ չեն ունենում, երբ խոսքը հիմնականում վերաբերում է առօրյա-կենցաղային ոլորտին: Բայց այդ շփումը գրեթե անհնարին է դառնում այն պարագայում, երբ խոսքը, օրինակ, մշակույթի կամ գիտության հարցերի մասին է» (տե՛ս ša‘aban գ, նշվ. աշխ., էջ 140):

ստորև ներկայացնում ենք ենթախմբերով՝ ըստ իմաստային մերձավորության. Այսպես՝

1. *Շյր* «փորձանք, չարիք» - šarr «1.չարիք 2.վնաս, փորձանք», *բէլա* «փորձանք» - balā' «1.փորձություն, 2. փորձանք», *խաթու* «վտանգ, վտանգավոր» - xaṭar «1.վտանգ, 2.խաղաղրույք, 3.արժանապատվություն», *հյւզյւբ* «տառապանք» - 'adāb «տառապանք, տանջանք», *հյւհրր* «սուզ, վիշտ» - qahra «սուզ, վիշտ», *քուֆրր* «հայհոյանք» - kufr «1.անաստվածություն, 2.ապերախտություն» և այլն:

2. *Վյրյւթ* «վտանգավոր տեղեր առաջնորդող, մոլորեցնող, խաբեբա» - warat, *խայրն* «դավաճան, նենգամիտ» - xā'in, *բանտիզ* «հետույքը երևացող՝ բաց»²⁰⁰ - bā'in «երևացող, ակնհայտ», *փշ* «հետույք», *շարմութա/շարմուտա* «պոռնիկ» - šarmūta «1.լաթ, 2.մարմնավաճառուհի», *հյւխրյւ* «անբարոյական (կին)» - qahba «մարմնավաճառուհի» և այլն:

3. *Սադրլի* «հավատարիմ» - šādiq «ճշմարտախոս, անկեղծ», *ըսլւհ* «վայելուչ» - šālih «1.լավ, բարի, 2.պատվարժան», *ջասուր* «քաջ, խիզախ» - jasūr «խիզախ, անվեհեր, հանդուգն», *մւշհուր* «հայտնի, անվանի» - mašhūr «հայտնի, անվանի, փառաբանված», *խէր* «բարի, բարենշան» - xayr «1.լավ, բարի, 2.օգուտ, բարօրություն», *մւսսրուհ* «օրինավոր, շիտակ, ընդունելի» - masmū' «լսելի, ընկալելի, հստակ» և այլն:

²⁰⁰Քեսաբցիները, միջցուղական մրցակցության ոգով, այս անարգական խոսքը սովոր էին հղել սվեդիացիների հասցեին (տե՛ս Անդրեասյան Տ., նշվ. աշխ., էջ 184):

4. *Խաթար* «հարգ, հարգանք»-*xaṭar* «1.վտանգ, 2.խաղաղություն, 3.արժանապատվություն», *շարսիֆ* «պատիվ» - *šaraf* և այլն:

Տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ, հասարակական հարաբերություններ

Քանի որ նշված բնակավայրերի հայ բարբառախոսները տևական ժամանակ ապրել և այժմ էլ ապրում են օտար պետության մեջ, ուստի տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ, հասարակական հարաբերություններ, պետական, սոցիալ-տնտեսական կառույցներ և այս ոլորտին առնչվող այլ հասկացություններ նրանք հիմնականում փոխառել են արաբերենից՝ որպես այդ երկրին բնորոշ վարչական անվանումներ:

Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակների՝ այս իմաստային-թեմատիկ խմբում ներառված բառերը հիմնականում առնչվում են պետական կառավարման տարբեր մարմիններին: Իմաստային մերձավորության սկզբունքով դրանք կարելի է ստորաբաժանել ըստ հետևյալ ենթախմբերի.

ա) Իշխող, ղեկավարող անձանց տրվող անվանումներ. օրինակ՝ *սուլթան* «սուլթան» - *sulṭān* «սուլթան, կառավարիչ», *շեյխ* «շեյխ» - *šayx* «1.ծերունի, 2.առաջնորդ», *վնզեր/վնզեր* «վեզիր, նախարար, վարչապետ» - *wazīr* «նախարար, վեզիր», *մուխտար* «գյուղապետ» - *muxṭār* «տանուտեր, ավագ (գյուղի)», *մուդիր* «կառավարիչ» - *mudīr* «1.կառավարիչ, տնօրեն,

2.ռեկտոր», *վսնքէլ* «փոխանորդ» - wakıl «գործակալ, փոխանորդ»:

բ) Վարչական կառույցների, կառավարման օղակների անվանումներ. *մեջլըս* «ժողով» - majlis «1.տեղ, նիստերի դահլիճ, 2.ժողով, նիստ», *հուքումսնթ* «կառավարություն» - hukuma «1.կառավարում, 2.կառավարություն»:

Իմաստային-թեմատիկ այս խմբին առնչվող փոխառյալ բառերից են նաև՝ *վաթան* «հայրենիք» - waṭan «հայրենիք, ծննդավայր», *դավլաթ* «պետություն» - dawla, *դսրէրութէն* «օտարություն» - ġarīb «1.օտար, անհայտ, 2.օտարերկրացի»:

Հնարավոր է նաև, որ այս իմաստային-թեմատիկ խմբում տեղ գտած արաբերեն ծագումով որոշ բառեր օսմանյան տիրապետության շրջանում փոխառվել են թուրքերենից, այսինքն՝ միջնորդավորված փոխառություններ են:

Օրենք

Հասարակական-քաղաքական կյանքը կարգավորող օրենսդրական-իրավական մի շարք նորմերի, դրանք իրագործող կառույցների, օրինախախտության դրսևորումների, դրանից բխող պատասխանատվության և իրավական այլ հետևանքներին վերաբերող մի շարք հասկացություններ անվանելու համար սեփական պետականությունից զուրկ, օտար, իշխող պետության մեջ դարեր շարունակ բնակվող հայ բարբառախոսները, բնական է, որ կարող էին գործածել արաբերենից փոխառված բառեր: Դրանք հիմնականում դատական համակարգին առնչվող հասկացություններ են՝

մնիքսմու «դատարան» - mahkama, *կադա* «դատավոր» - qāḍin, *դավու* «դատ» - dawī «աղմուկ, դրդյուն», *շահադ* «վկա» - šāhid, *թասդըկ* «1.փաստ, 2.փաստացի» - taşdıq «1.հավատ, 2.հաստատում, 3.վավերացում», *կարար* «որոշում» - qarār, *հնրսմու* «գող» - harāmī, *հնրում* «մեղք» - harām, *ջասուս* «լրտես» - jāsūs, *ջրրըմ* «տուգանք» - jarm, *ջեզու* «պատիժ» - jazā', *ջեշադ* «դահիճ» - jallad, *բարթել* «կաշառք» - barṭil և այլն:

Այս իմաստային-թեմատիկ խմբին են վերաբերում արաբերենից փոխառված նաև հետևյալ բառերը՝ *հուօկ* «հրավունք» - haqıq, *ուսուլ* «կանոն, կարգ» - 'usūl, *նուօբ* «կարգ» - nawuba «հերթ» (հզն.՝ nawub)», *մուհօր* «կնիք» - muhr և այլն:

Որպես բառային համակարգի լիիրավ անդամներ՝ փոխառյալ որոշ բառերից ստեղծվել են բարբառային նոր տարբերակներ՝ *հնրսմուլեն* «գողություն», *բարթըլի* «կաշառել», *մուհըրիլ* «կնքել» և այլն:

Կրոն և նախապաշարմունք

Արաբների կրոնին՝ իսլամին կամ մահմեդականությանը վերաբերող տերմինները՝ *իսլամաբանությունները*²⁰¹, հանդիպում են հատկապես Քեսաբի խոսվածքի արաբական փոխառություններում. Անտիոքի բարբառախմբի մյուս խոսվածքներում դրանք բավական սակավաթիվ են:

²⁰¹Եզրույթի գործածությունը տե՛ս Մեսրոպյան Հ., Իսլամաբանությունները հայերենի բարբառներում, www.hayeren.hayastan.com:

Միրիայում մ.թ.ա. առաջին դարից, ինչպես հայտնի է, արդեն ձևավորվում են քրիստոնեության կենտրոններ, որտեղից ասորի քարոզիչները, մուսք գործելով այլ երկրներ, այդ թվում նաև Հայաստան, կարևոր դեր են կատարում հեթանոսության դեմ պայքարում՝ հանուն միաստվածության կրոնի՝ քրիստոնեության հաստատման: Իսկ արաբական նվաճումներով 7-րդ դարից սկսվում է Մերձավոր Արևելքի, ապա Փոքր Ասիայի իսլամացումը: Հայաստանի բռնագավթումով, սակայն, կրոնափոխություն տեղի չի ունենում ոչ միայն մեր հայրենիքում, այլև հարևան երկրների հայկական գաղթօջախներում: Միրիահայ գաղութը, որը միշտ մշակութային, կրոնական, տնտեսական սերտ կապերի մեջ էր պատմական Հայաստանի, իսկ 12-րդ դարից նաև Կիլիկիայի հայկական թագավորության հետ, պահպանում է իր քրիստոնեական կողմնորոշումը: Երկրի նոր տերերի՝ արաբների և սիրիաբնակ հայերի փոխհարաբերությունները հատկապես կրոնամշակութային, լեզվական առումով, մտնում են մեկ այլ փուլ, որն ընդունված է անվանել «ընդհանուր արաբական ազդեցության շրջան»:

Մերձավոր Արևելքի հայկական գաղթօջախներին շրջապատող արաբական բնակավայրերի նոր կրոնը՝ *մահ-մեդականությունը*, հասկացությունների իր համակարգով և համապատասխան եզրույթներով դարերի ընթացքում չէր կարող իր որոշակի արտացոլումը չունենալ հայերենի վերոնշյալ տարածքային տարբերակների բառապաշարում²⁰²:

²⁰²Ինչպես նշել ենք, սիրիահայերը տեղացիների հետ միասին գրեթե չորս դար Օսմանյան կայսրության տիրապետության տակ են եղել, և արաբական փոխառությունները, այդ թվում նաև իսլամաբանությունները, հայերեն-

Քեսաբի խոսվածքի հնագույն փոխառությունների շարքում, կարծում ենք, առաջին հերթին պետք է դասել մահմեդականությանը վերաբերող բառերը:

Կրոնների տարբերությունը տվյալ երկրում հաճախ համընկնում է տեղի բնակչության առանձին խմբերի՝ տարբեր լեզուներով խոսելու հանգամանքին, որն էլ իր հերթին խոչընդոտում է այդ հանրությունների մերձեցմանը²⁰³:

Իսլամաբանությունները, ըստ իրենց իմաստային և գործառական նշանակության, կարելի է բաժանել երեք ենթախմբերի.

1.Նոր հասկացություններ նշանակող կողեր. այդպիսիք կարելի է համարել իսլամին առնչվող փոխառյալ հետևյալ բառերը. *սուլթան* «մոլլայի աղոթքը» - 'azān «աղոթքի կանչ, կոչ», *մուլա* «մահմեդական կրոնավոր՝ մոլլա» - maula «1.տեր, հրամայող անձ, 2.մոլլա», *մուսուլման* «1.իսլամ, 2.մահմեդական» - muslim «իսլամի հետևորդ», *ջամի/սուլթան* «մզկիթ» - jāmi' «մզկիթ, ուրբաթօրյա աղոթքի վայր», *սուննա* «մուսուլման» - sunna «1.սովորույթ, 2.ավանդություն, 3.օրենք» և այլն:

Որպես բառային համակարգի լիիրավ անդամներ՝ այդ փոխառություններով ևս ստեղծվել են բարբառային նոր կազմություններ, ինչպես՝ *սուննաթիլ* «թլպատել», *սուլթան գինջիլ* «ազան կանչել» և այլն:

նին հաճախ անցել են թուրքերենի միջնորդությամբ: Բայցևայնպես, պարզ է, որ արաբական բնակավայրերով շրջապատված հայկական գյուղերի բնակիչների խոսքում տեղի են ունեցել նաև արաբերենից անմիջական անցումներ և՛ նախասումանյան, և՛ օսմանյան տիրապետության ժամանակաշրջաններում:

²⁰³ Белл Р., նշվ. աշխ., էջ 174, Вайнрайх У., նշվ. աշխ., էջ 157-158:

2. Ծանոթ հասկացությունների տարբերակային կոդեր²⁰⁴. այդպիսիք են՝ *ջսնսթ* «դրախտ» - janna «այգի», 'al-janna «երկրային պարտեզ, դրախտ», *մուղղուսիկ* «ուխտավոր» - muqaddis «ուխտագնաց, ուխտավոր», *իման* «հավատք» - 'ymān «1.հավատ որևէ բանի նկատմամբ, 2.հավատք», *կարրր* «մահմեդականի գերեզման» - qabr «գերեզման», *կուրբուն* «մատաղ» - qurbān «զոհ, մատաղ», *հւրում* «հարամ, կեղտոտ»-ḥarām «1.արգելված, 2.մեղք», *մուբարաք* «1.օրհնյալ, 2.զարմանքի արտահայտություն» - mubārak «օրհնյալ, երջանիկ», *շէթան* «1.դև, 2.ձուկ» - šayṭān «դև, սատանա, հրեշ», *ջին* «ոգի, սատանա, նաև ածղահա» - jinn/jinna (հվք.) «ջիններ, հոգիներ, դևեր», *հսջի* «մահտեսի» - ḥajj «ուխտագնաց, ուխտավոր», *մսզար* «գերեզման» - mazār «1.գերեզման (սրբի), 2.աղոթատեղի» և այլն:

Ինչպես երևում է վերոնշյալ օրինակներից՝ փոխառյալ այս բառերով արտահայտված կրոնական հասկացությունները հայ քրիստոնյային բոլորովին անծանոթ չեն, պարզապես ունեն իմաստային մի փոքր այլ, օտար կրոնի փիլիսոփայական բովանդակությանը համապատասխանող նրբերանգներ: Ուստի հայ բարբառախոսներն արաբական եզրույթ-իսլամաբանությունները գործածում են իսլամի, իսկ քրիստոնեության ավանդական հասկացությունների բարբառային անվանումները՝ քրիստոնեության համատեքստում: Օրինակ՝ *նահլուօթ* «անեծք» (խոսվածքում՝ *սնիսգ*), *նահլաղիլ* «անիծել» (խսվ.՝ *սնիծիլ*), *բւրսքի* «օրհնություն» (խսվ.՝

²⁰⁴ Вайнрайх У., նշվ. աշխ., էջ 83:

ուրթնութեն), շէյթան «դև» (իսւվ.՝ *տ^hէվ*), *ջին* «ոգի, սատանա» (իսւվ.՝ *սադանու*), *կօսրըր* «մահմեդականի գերեզման» (իսւվ.՝ *կըրըզմնն*) և այլն:

3. Լեզուներում՝ հատկապես բանավոր խոսքում, կրոնական որոշ արտահայտություններ ունեն հաճախակի կիրառություն: Դրանք գործածվում են որոշակի իրադրության պահի, որի հետևանքով վերածվում են համապատասխան հուզահոգեբանական երանգ արտահայտող դարձվածների, բացականչությունների, միջանկյալ բառերի: Ինչպես օրինակ՝ հայերենում *Աստծո/ու սիրու(ն), փառք Աստծո/ու, Աստված մի արասցէ*, ռուսերենում՝ *боже мой, к черту* և այլ արտահայտություններ, որոնք խոսողը հաճախ օգտագործում է՝ առանց դրանց բաղադրիչների վերլուծական ըմբռնման: Խոսքում հաճախակի հանդիպող այսպիսի արտահայտություններն օտարալեզու, նույնիսկ այլ կրոն դավանող անհատները հեշտությամբ են փոխառում²⁰⁵: Քեսաբի խոսվածքում այս կարգի փոխառություններից են՝ *յալա* - *yā 'al-lah* «ն'վ Աստված», համազոր է «Աստված իմ» բացականչությանը, *յարաբ* «ն'վ Աստված, Տե'ր իմ» - *yā rabb* «ն'վ Տե'ր», *յարաբի* «ն'վ Աստված իմ» - *yā rabbī* «ն'վ Տե'ր իմ», *իշալա* «երանի» - *'in šā' 'al-lah* «եթե Տե'րը կամենա», *վալա-բիլա* «իրավ որ, Աստված վկա» - *wa' al-lah bi' al-lah* «Աստված վկա», *վալա* «իրավ որ, ճշմարիտ» - *wa' allah* «Աստված վկա» արտահայտությունները: Այս փոխառությունները, որոնք հանդիպում են նաև հայերենի տարածքային այլ տարբերակներ

²⁰⁵ Вайнрайх У., նշվ. աշխ., էջ 85:

րում, կրոնական իրենց իմաստները կորցրել և վերածվել են հուզահոգեբանական (աֆեկտիվ) արտահայտությունների:

Քեսաբի խոսվածքի կրոնական ոլորտի արաբական փոխառություններում, որքան կարողացանք պարզել, չկան պատճենումներ:

Նշված իմաստային - թեմատիկ խմբերից բացի, արաբերենից կատարված փոխառություններ ընդգրկում են նաև մյուս խմբերը, թեև՝ ավելի սակավաթիվ: Մեր կատարած վիճակագրության համաձայն՝ արաբերենից կատարված փոխառություններն ավելի շատ ընդգրկված են «ֆիզիկական տարբեր գործողություններ, արվեստ և արհեստ, սրանց համապատասխան նյութեր և գործիքներ» (9-րդ խումբ) ու «զգացմունք (ֆիզիկական որոշ դրսևորումներով), խառնվածքային, բարոյական և գեղագիտական ըմբռնումներ» (16-րդ խումբ) իմաստային - թեմատիկ խմբերում (ըստ մեր հաշվումների՝ յուրաքանչյուրում ավելի քան հիսուն բառային միավոր): Փոխառյալ առավել սակավաթիվ բառեր ներառված են «շարժում. տեղափոխություն, փոխադրում, նավագնացություն» (10-րդ խումբ՝ երեք բառ), «մարմնի մասեր. Մարմնական գործառնություններ և պայմաններ»²⁰⁶ (4-րդ խումբ՝ ութ բառ) և «մտածողություն» (17-րդ խումբ՝ հինգ բառ) իմաստային-թեմատիկ խմբերում²⁰⁷:

Քեսաբի բարբառային միավորում փոխառյալ բառեր ներառում են բոլոր խմբերը, իսկ Սվեդիայի խոսվածքում՝ արաբերենից անմիջականորեն կատարված փոխառություն-

²⁰⁶ Այս իմաստային-թեմատիկ խումբը ընդգրկում է այնպիսի բառեր, որոնք ներառվում են հիմնական բառաֆոնդի մեջ, այսինքն՝ բնիկ բառեր են:

²⁰⁷ Մանրամասն տե՛ս հավելվածը:

ներ, մեր լեզվական նյութի համաձայն, չկան օրենքին, կրոնին և նախապաշարմունքին, ռազմական գործին, տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներին վերաբերող իմաստային խմբերում: Այս խոսվածքում փոխառյալ բառեր մեծ մասամբ վերաբերում են երկրագործությանը, բուսականությանը, ուտելիքին, կենցաղային պարագաներին, ինչպես նաև զգացմունքային, բարոյական ըմբռումներին: Բելլանի բարբառային միավորում արձանագրված արաբերենից փոխառված բառերը բավական սակավաթիվ են. հայերենի տարածքային այս տարբերակում դրանց մեծ մասը թուրքերեն է կամ դրանք միջնորդավորված փոխառություններ են:

Արվեստին, մշակույթին, գիտությանը վերաբերող արաբերենից փոխառված բառեր, որքանով կարողացել ենք պարզել, Անտիոքի բարբառախմբի հայերեն խոսվածքներին նվիրված ուսումնասիրություններում արձանագրված չեն:

Ամփոփելով արաբերենի ազդեցության դրսևորումներն Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակներում՝ նշենք, որ դրանք արտահայտվել են, ինչպես սովորաբար փոխառություններին է հատուկ, հնչյունական և հատկապես՝ բառային մակարդակներում: Օտար պետության կազմում դարեր շարունակ գոյատևող հայկական այս բնակավայրերի հայության առօրյա բանավոր խոսքում, ցավոք սրտի, բավական շատ են այլ, հատկապես արաբական և թուրքական բառերը, որոնք երբեմն գրեթե անհասկանալի են դարձնում այն: Սա լուրջ սպառնալիք է ինչպես այդ բարբառային միավորների, այնպես էլ արևմտահայերենի համար: Բարբառախոսաբար, օտար ազդեցության գրեթե չենթարկված քերականական կուռ կառուցվածքը պահպանում է տարածքային այս

միավորների գոյությունը և հաստատուն տեղը հայերենի բարբառների շարքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, մեր ուսումնասիրության արդյունքները հանգեցնում են հետևյալ եզրակացությունների.

1. Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակներում արաբերենի ազդեցության դրսևորումներն արտահայտվել են հնչյունական և հատկապես բառապաշարային մակարդակներում՝ փոխառությունների միջոցով:

Արաբական փոխառությունները հիմնականում կատարվել են Անտիոքի հայերեն բարբառային միավորներում հյակական բաղաձայնների տեղաշարժ-տեղափոխությունից հետո, քանի որ այդ բառերում արաբերենի հնչյունների ձայնաբանական հատկանիշները (ձայնեղ, խուլ, շնչեղ խուլ) նշված հնչյունափոխությանը չեն ենթարկվել և արտահայտված են գրեթե նույնությամբ: Դրանք՝ որպես հայերենի խնդրո առարկա բարբառային միավորների հնչյունական համակարգերի անդամներ, ենթարկվում են միայն բառում դիրքով պայմանավորված՝ տվյալ համակարգին բնորոշ փոխազդեցական հնչյունափոխության, ինչպես՝ ն-ի մոտ խուլերի ձայնեղացում, *ը*-ից հետո ձայնեղների խլացում և այլն:

2. Արաբերենի բաղաձայն այն հնչյունները, որոնք հնչարտաբերական հատկանիշներով բավական մոտ կամ մեկ-երկու հատկանիշով նման զծեր են ցուցաբերում Անտիոքի բարբառախմբի բաղաձայններին, փոխառություններում նույնացել են վերջիններիս: Առաջին ենթախումբը ներառում են հյականները, շփականների մեծ մասն ու ձայնորդները, իսկ երկրորդը՝ *ժ*, *չ*, *հ* շփականներն ու *ժ*, *չ*, *զ*, *ճ* ուժգին արտաբերման (եմֆատիկ) բաղաձայնների շարքը:

3.Ուշագրավ է, որ արաբերենի գ (կաֆ) բաղաձայնը փոխառությունների միջոցով անցել է Անտիոքի բարբառային միավորներին և հանդիպում է բավական թվով փոխառյալ բառերում: Ավելին, օտար այս հնչյունը, ամրանալով Անտիոքի բարբառախմբի հնչյունական համակարգում, գործածվում է նաև հայերեն բառերում՝ փոխարինելով *կ*-ին (այսինքն՝ ինքնուրույն հնչույթ չէ):

4.Արաբերենի խուլ հպական համզան (‘) Անտիոքի բարբառախմբի փոխառություններում չի պահպանվել: Միջձայնավորային դիրքում դրա փոխարեն *յ* կիսաձայնն է ի հայտ գալիս. սա, հավանաբար, ‘ > *յ* հնչյունափոխություն չէ, այլ՝ համզայի անկումով պայմանավորված՝ ձայնավորների միջև առաջացած հորանջից խուսափելու նպատակով հնչյունի հավելում: Փոխատու լեզվի ձայնեղ շփական ‘ (այն)–ը Քեսաբի խոսվածքում պահպանվել է միայն բառամիջում, իսկ Սվեդիայի խոսվածքում ենթարկվել է ‘ > *ղ* հնչյունափոխության:

5.Արաբերենի բաղաձայնական համակարգում կիրառվող տևական հնչյուններն Անտիոքի բարբառախմբի արաբական փոխառություններում պահպանվել են ոչ բոլոր դեպքերում: Խնդրո առարկա բարբառային միավորներին հատուկ բաղաձայնների տևական արտասանությունը ևս արաբերենի հնարավոր հնչյունական ազդեցության դրսևորում է:

6.Արաբերենից փոխառյալ բառերում կարճ ձայնավորները վերոնշյալ բարբառային միավորներում հաճախ նույնությամբ պահպանվել են, իսկ երկար ձայնավորները վերածվել են կարճերի՝ առանց որակական փոփոխության:

Արաբերենի ձայնավորների դրսևորած հնչյունափոխությունները մասամբ հանգում են մայրենի լեզվի պատմա-

